



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

17439

37(47.925)

9-84

(24)

9011

~~540~~ 1725 367


ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

37 (97.922) Ա Յ Ո Յ
9-84



Գ Ր Ե Յ

Ն Ա Ջ Ա Ր Յ Գ Ո Ր Ո Յ Ե Ա Ն Յ



Կ. Պ Օ Լ Ի Ս

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ս. Ղ. ՊԱՐՏԻՉՊԱՆԵԱՆ ԵՒ ԸՆԿԵՐ

1880

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Հ Ա Յ Ո Ց



Դաստիարակութեան խնդիրն այնպիսի ծանրագիններէն է, որ ըստ բաւականին բացատրելու համար ստուար հատորներ գրել պէտք է:

Այնպիսի ձեռնարկութիւն մեր արդի ձեռնհասութենէն վեր լինելով, ուղեցինք դոնէ համառօտ ու հարեանցի կերպով անոր (դաստիարակութեան) անչափ կարեւորութեան և մեր մէջ բոլորովին զանց առնուած լինելու յիշատակութիւնն ընել:

Ուստի այս գրուածքս կը նուիրեմք Ազգայնոց և ի մասնաւորի ձեռնհաս անձանց իբր սկզբնաւորութիւն կամ նախաշաւիղ վարելիք խնդրի մը, որ իր մեծութեամբ, կարեւորութեամբ ու հետեւանքներովն Ազգային ուրիշ ամէն խնդիրներն կը գերազանցէ:

Թէ հրան

18 Մարտ 1880

Ն. ԳՈՐՈՅԵԱՆՅ

Տպագրութիւն Ս. Ղ. Պարտիզպանեան եւ ընկեր
Կ. Պոլիս Ալանա-համամ Րիզա-փաշա խան քիւ Յ

8681 - 42



2694-39

(16521-58)

Չ Օ Ր Ո Ւ Թ Ի Ի Ն

Բնութեան մէջ եթէ ոչ էական օրէնք գէթ անժխտելի իրողութիւն մը կայ, այն է որ տկարութիւնը զօրութեան տեղի կուտայ կամ հասարակ բացատրութեամբ զօրաւորն իր կամաց կ'ենթարկէ դտկարն որով եւ կը ծառայեցնէ զան (զտկարն) իր գոյութեանը, պիտոյիցն, օգտին եւ կամ իր ո՛ր եւէ նպատակին :

Այս անժխտելի իրողութիւնն ոչ միայն ստորին կենդանեաց մէջ, ոչ միայն մարդուս եւ ուրիշ կենդանեաց մէջ՝ այլ նաեւ մարդկային անհատներու մէջ աւելի յայտնի կերպով կը տեսնուի :

Օրինակի համար, եթէ երկու հոգի տեղ մը մեկուսացեալ գտնենք, կը տեսնենք անբացառաբար որ այն երկուքէն որն որ աւելի զօրութիւն ունի, ան կը բռնանայ միւսին վրայ եւ որով զօրութեան առաւելութեամբ զան կ'ենթարկէ իր կամացը :

Եթէ երկու մեկուսացեալ անհատէն հազարաւորներու կամ մասնաւորէն ընդհանուրի անցնինք, նոյն իրականութիւնը դարձեալ կը զբառնենք : Նաեւ եթէ փոխարէն անհատներու երկու ժողովրդի կամ երկու ազգի իրարու նկատմամբ ունեցած զրութիւնը քննենք, դարձեալ կը գտնենք նոյն իրողութիւնը, զօրաւորն իր կամաց ենթարկելով զաւելորդն :

Զօրութիւն ըսելով լոկ մարմնական ուժը հասկնալով չէ, այլ մարդուս բոլոր մտաւորական, բարոյական ու մարմնական կարողութեանց, եւ սոյն կարողութեանց մշակութեան ու գործածութեան միջոցովը առաջ եկած ամէն առաւելութեանց բովանդակն որոնց գումարի մեծութեամբ մէկը կը յաղթէ ուրիշին կամ անորմէ գերագոյն կը դառնայ :

Արդ այս ամենու միացեալ գումարն կը կոչուի զօրութիւն :

ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԻՒՆ

Յառաջադիմութիւնը Նախախնամութենէն մարդուս պարզեւուած առանձնաչորհներէն մէկն է : Սա այն յատկութիւններէն մէկն է ու

բոնցմով մարդս ուրիշ կենդանիներէ կ'որոշուի :

Մարդս միայն յառաջագիմուծիւն կ'ընէ :

Ստորին կենդանիներն յառաջագիմուծիւն չեն ընել :

Ստորին կենդանիներն հաղարաւոր տարիներ առաջ ինչ որ էին եւ ինչպէս կը գործէին , նոյնն են եւ նոյնպէս կը գործեն եւս այժմ :

Ըսածնիս օրինակով մը բացատրենք :

Ծիծեռնակ մը ինչպէս կը շինէ իր առաջին բոյն նոյնպէս կը շինէ իր յաջորդ բոյները , նոյնպէս եւս իր վերջին բոյնը : Առաջին եւ վերջին նրն ամէն հանգամանքով մի եւ նոյն են : Առաջինի եւ վերջինի մէջ փոփոխութիւն մը չը մտցընել . հետեւապէս առաջինի եւ վերջինի մէջ բարեկաւուծութիւն մը կամ յառաջգիմուծիւն մը չը հկատուիր : Գարձեալ ամէն երկրի մէջ , ամէն տեղ եւ ամէն ժամանակ , որչափ որ մենք մեր օրով կրնանք դիտել կամ գրքերէ տեղեկանալ , ամէն ծիծեռնակներն իրենց բոյնն մի եւ նոյն ձեւով , մի եւ նոյն եղանակով ու միջոցով կը շինեն . մէկու շինած բոյնը միւսի շինածէն չտարբերիր . եւ մէկը փոքրիկ զամբիւղով , միւսը փոքրիկ տոպրակով եւ միւսն ալ ուրիշ նախապատրաստեալ ամանով մը կամ գործիքով մը չկրեր տանիր բոյնի շինութեանը պէտք եղած նիւթերը , այլ ամէնն ալ առանց բացառութեան իրենց կտուցովը կը կրեն կը տանին հարկաւոր նիւթերը :

Այս դիտողութիւններէն կրնանք հետեւցընել որ մեր օրով տեսնուած ծիծեռնակի բոյնը Նոյի տապանի ձեղունին մէջ շինուածէն ոչ աւելի գեղեցիկ եւ ոչ աւելի աղէկ է , եւ ոչ ալ անոր վրայ ո՛ր է նրկատմամբ առաւելութիւն մ'ունի եւ ուստի եզրակացնել որ այսօրուայ ծիծեռնակն Նոյի ծիծեռնակէն աւելի վարպետ կամ յառաջադէմ չէ : Քանի որ ստորին կենդանիներ յառաջագիմուծիւն չեն ընել , հետեւապէս յետագիմուծիւն ալ չեն կրնար ընել :

Ստորին կենդանիներու գործողութեանց այս անփոփոխակամութիւնն այն պատճառով է որ անոնց գործողութիւնները խորհրդածութեան ու տրամաբանութեան հետեւանք չեն եւ ոչ ալ անսովորական ու մասնաւոր նպատակի մը համակու համար , այլ միայն բնազգման արտադրութիւն :

Բնազգումը բնածին մղում կամ միտում մ'է յԱրարչէն հաստատուած ի կենդանիս , որով բնազգմամբ իւրաքանչիւր տեսակ կենդանի , անկարօտ կանխաւ տեսնելու ու սովորելու , կը գործէ միշտ միակերպ ու անփոփոխաբար , առանց իմանալու ինչո՞ւ միայն այն կերպով եւ ի՞նչ վերջին նպատակի համար կը գործէ : Օրինակի համար . մեղուն կը շինէ իր մազը մաթեմատիկայի ճիշտ սկզբանց համեմատ , ըստ օրոց մազի բճիճները պէտք է մասնաւոր ձեւ ունենան եւ մասնաւոր կերպով իւրարու կպցուին , որպէս զի առանց նիւթի մեծ ծախուց մեծ ամբուծիւն եւ մեծ պարունակութիւն ունենան : Յայտնի է որ մեղուն մա-

թեմաթիկայէ տեղեկութիւն չունի . իր արարքի իմաստութիւնն ու կատարելութիւնն անոր Արարչին տալու է , որ իր կանխատեսութեամբ մեղուն պիտոյից համեմատ անոր շնորհեր է այնպիսի բնազգում մը որով մեղուն առանց կանխաւ տեսնելու ու սովորելու կը գործէ անփոփոխաբար եւ ամէն կատարելութեամբ ու հմտութեամբ . սակայն եւ առանց իմանալու թէ ինչո՞ւ այն ձեւը կուտայ իր բճիճներուն եւ ի՞նչ վերջնական նպատակի համար :

Մարդս թէ եւ գերագոյն էակ բոլոր արարածոց մէջ , եւ թէ եւ գերագոյն օժտով , բանականութեամբ , զարդարուած , սակայն իր գործողութեանց մէջ այսպիսի բնածին մղումէ կամ ինքնաբոյս միտումէ մը չառաջնորդուիր որպէս զի կարենայ անփոփոխաբար եւ անթերի գործել :

Մարդս պէտք է որ նախ ամէն բան տեսնէ որ կարենայ ետքը անոր նմանն երեւակայել կամ ընել :

Մարդս ամէն բան խորհրդածութեամբ ու տրամաբանութեամբ եւ մասնաւոր նպատակի համար կընէ : Այս ըսածնիս եւս օրինակով մը բացատրենք :

Մարդս մինչ խրճիթ մը չտեսնէ ամենեւին չկրնար ինքիրմէ խրճիթ մը երեւակայել կամ շինել . պէտք է նախ խրճիթ մը տեսնէ , անոր ձեւը , շինելու կերպը եւ զան բաղկացուցիչ նիւթերը դիտէ եւ այս ամէնն իր մտաց մէջ գաղափարէ որպէս զի ետքը կարենայ շինել : Շինութիւնը խորհրդածութեամբ ու տրամաբանութեամբ առաջ կը տանէ եւ զան մասնաւոր նպատակի համար կը սահմանէ կամ զինքը ամառուան տաքէն , ձմեռուան ցուրտէն պատասպարելու կամ թշնամեաց յարձակմանց դէմ ապահովելու եւ կամ ուրիշ բանի համար :

Ըսենք որ մարդ մը խրճիթ մը տեսնելէ ետքը հաստ մ'ալ ինքը շինէ , իր այս շինուածին մէջ յաճախ սխալներ եւ ուղղութիւններ կ'ընէ որով եւ խորհրդածութեան ու տրամաբանութեան առիթ կ'ուտայ , եւ խրճիթըն աւարտելէ ետքը , բանականութիւնն ի գործ դնելով շինածը տեսածին հետ կը բաղդատէ որով եւ իւրաքանչիւրի պակասութիւններն ու առաւելութիւններն կըզգայ , կը տեսնէ , անոնց վրայ զարձեալ բանաւոր խորհրդածութիւններ կ'ընէ եւ ուրիշ երկրորդ մ'ալ շինած աւտենն անցեալի փորձառութենէն օգուտ քաղելով բնականաբար կը ջանայ առջիններու պակասութիւններն լնուլ եւ առաւելութիւններն երկրորդին աւելցնել : Եթէ այս երկրորդն առաջին շինածին հետ բացարձակաբար բաղդատուի , ընդհանրապէս քիչ բացառութեամբ կը տեսնուի որ երկրորդն առաջինէն աւելի աղէկ է , որմէ կը հետեւի որ մարդը շինութեան մէջ յառաջագիմուծիւն է ըրեր . իսկ եթէ բացառաբար ու հակառակ սովորականին , երկրորդն առաջինէն աւելի գէշ լինի , այն ատենը կ'ըսուի որ յետագիմուծիւն է ըրեր : Հարեւանցի դիտողի

մը պիտի թուի որ ուրիշ կենդանիները մարդէս աւելի բարձր են , խորհեցող որ անոնք առանց տեսնելու եւ սովորելու ինք իրենց անվրիպաբար կը գործեն , ըրածնին պակասութիւն չունի , եւ իրենց պիտոյքնեւ ընն անգամ առանց նկատութեան ու դժուարութեան կրնան հոգալ :

Սակայն սր ինչ հարեւանցի դիտած ատենը ստորութիւն կը համարուի մարդուս համար , նոյնին մէջ կը կայանայ անոր գերակայութիւնը : Իրաւ որ մարդս ի սկզբան առանց տեսնելու չկրնար գործել եւ տեսնելէն ետքն ալ ուրիշ կենդանեաց պէս անթերի չգործեր եւ ոչ ալ այնչափ դիւրութեամբ իր պիտոյքները կը հայթայթէ , սակայն ամենապարկէտէ սկսելով հետզհետէ կատարելութեան կը մերձենայ շուտով կը գերազանցէ ուրիշ ամէն կենդանիներն , դանոնք կը ծառայեցնէ իր կամաց եւ իր պիտոյքները դիւրաւ հոգալու միջոց կը դարձնէ :

Յառաջադիմութեան ասպարէզն անսահման է որով եւ մարդուս գերակայութիւնն ուրիշ կենդանեաց վրայ անբաղդատելի :

Այսպէս մարդս կանխաւ Արարչէն յառաջադիմութիւն ընելու սահմանուած զարգարուեր է բարձր կարողութիւններով եւ զորս բարեօք գործածելու համար անոր (մարդուս) շնորհուեր է իբր ուղղիչ դատաւոր բանականութեան ձիրք մ'որով մարդս գեր ի վերոյ կը բարձրանայ ուրիշ բոլոր արարածներէ :

Սակայն այն չքնաղ պարզեւներն ըստ պատշաճի վայելելու համար կանխատեսն իր անհուն իմաստութեամբ յարմար դատեր է պայման դրնել աշխատութիւնն , ըսելով մարդուս—Քեզ տուերեմ բարձր կարողութիւններ , քեզ շնորհեր եմ ամենաազնիւ ձիրք մը , բանականութիւն , եւ նոյն իսկ կազմութիւնդ ընդունակ ըրեր եմ անհուն յառաջադիմութեան . արդ աշխատէ ընդունած պարզեւներդ բարեօքապէս եւ իւրաքանչիւրի կարեւորութեանն ու յարմարութեանը համեմատ ի գործ արկ եւ ըրէ յառաջադիմութիւն առանց որու կը մնաս աւելի տկար ու անճարակ քան ո՛ր եւ է ստորին էակ մը :

Հետեւապէս ով որ այն ստանձնաչնորհն ու պարզեւներն անթերի եւ ի յագուրդ վայելը կը ցանկայ կամ անոնցմէ լիութիւն օգուտ քաղել կուզէ , պէտք է իր ժառանգած կարողութիւններն միշտ ըստ պատշաճի եւ ըստ իւրաքանչիւրի յարմարութեանն ու կարեւորութեանն գործածէ . եւ որչափ կարողութիւն մը թէ մարմնական թէ մտաւորական եւ թէ բարոյական յարմարապէս ու շատ գործածուի այնչափ աւելի կը զարգանայ ընդունակ կը դառնայ ու կը զօրանայ :

Ասոր ստուգութիւնը յայտնապէս կրնայ տեսնուիլ մեր մարմնի անդամներէն մէկուն մասնաւոր կերպով գործածութեանը մէջ :

Օրինակի համար , դարբիններու ձեռքերն կամ բազուկներն հանապազօրոյեաց գործածութեան եւ աշխատութիւնն առաջ տանելու համար պէտք եղած դնդերական ձգուման պատճառաւ , բաղդատաբար ուրիշ

անդամներէ որոնք ճգամբ գործելու պէտք չունին , աւելի մեծ , պընդակազմ ու զօրաւոր են : Նրաօչտի մը ականջն աւելի յաջող եւ սուր է ձայնի մը եղանակներն ու ել եւ էջն ըմբռնելու ու տարբերութիւններն զգալու քան թէ ուրիշ մէկու մը որու ականջն այնչափ գործունէութեամբ ու ճգամբ գործելու կարօտութիւն չունի :

Նկարիչ մը աւելի շուտով ու դիւրաւ կ'ըզգայ կ'ըմբռնէ գոյներու երիւերն ու անոնց տարբերութիւններն քան թէ ուրիշ մէկն որու աչքը գոյները ճանչելու չէ վարժուած :

Օրինակներէս կը հետեւի , ինչպէս որ վերն ալ ըսուեցաւ , թէ անհատ մը որչափ իր կարողութիւններն ըստ պատշաճի եւ ըստ իւրաքանչիւրի յարմարութեանն ու կարեւորութեանն աւելի գործածէ կամ մշակէ , այնչափ զանոնք կը զարգացնէ ու կը զօրացնէ , եւ ընկիւններուն մէջ հըմտութիւն ու յաջողակութիւն կը ստանայ :

Այս ձեռք բերուած առաւելութիւններն մեկտեղ գալով կը կազմեն անհատի մը յառաջադիմութիւնը եւ այս յառաջադիմութիւնն որչափ մեծ լինի այնչափ այն անհատի բնածին զօրութիւնը կ'աւելնայ , գոյութիւնը աւելի կ'ապահովուի եւ ուրիշներու կամաց ենթակայ լինելէն աւելի ազատ կը լինի :

Մասնաւորէ ընդհանուրի եւ անհատէ ազգի մը անցնելով կրնանք ըսել որ ազգի մը զօրութիւնը կրկնապատիկ , տասնապատիկ , հարիւրապատիկ կ'աւելնայ հաւաքաբար ձեռք բերած առաւելութեանց եւ մարդկային կարողութեանց բարեօքապէս մշակութեանն ուրիշ խօսքով ըրած յառաջադիմութեանը համեմատ :

Եւ այդի մը հաստատան զօրութիւնն Բուրսոսէր որչափ մեծ լինէ այնչափ այն ազգի ուղտութիւնն որիդի մը կ'ուսայ եւրոպայ լինելէ աւելի ազատ եւ քաջութիւնը աւելի ապահովուած է :

Պատմութիւնը մեզ անթիւ օրինակներ կ'ընծայէ յապացոյց վերն ըսածներուս :

Յիշենք մէկ կամ երկուքը :

Պարսկաստան հետզհետէ ըրած մեծ աշխարհակալութիւններովը զօրացած եւ դիւրութեամբ տարած յաղթութիւններովը գոռոզացած միտքը կը դնէ նուաճելու եւս Յունաստան , եւ այս նպատակաւ իր բոլոր զօրութեամբը անոր վրայ կը յարձակի :

Պարսկաստան ունի հարստութեան առաւելութիւնն , ունի թըւոյ չափազանց առաւելութիւնն , ունի եւ միշտ յաղթական դտնուելու ու զօրաւոր լինելու գաղափարի առաւելութիւնը :

Ասոնք են որ կը բաղկացնեն Պարսկաստանի զօրութիւնը : Իսկ Յունաստան ունի իր ըրած գերազոյն յառաջադիմութեան առաւելութիւններն :

Յառաջադիմութիւն մը որ իր մէջ կը պարունակէ մտաւորական կա-

բողոքութեանց լաւագոյն մշակումն ու զարգացումը, ուղղափառական եւ ուրիշ արհեստներու մէջ ստացած հմտութիւնն ու յաջողակութիւնն եւ բարոյական կարողութեանց մշակումն ու զարգացումն, որոց գերագոյն եւ ազնիւ ծնունդը կամ արդիւնքն է աղատութեան ու Հայրենեաց սէրըն, որն առաջի երկուքին իբր անդրդուական նեցուկ կրնայ հասարուիլ :

Ասոնք են որ կը կազմեն Յունաստանի զօրութիւնը :

Վէճը կը սկսի այս երկու տարատարր զօրութեանց մէջ :

Երկու կողմէ ոչ աշխատութիւն եւ ոչ ճիգ կը խնայուին, եւ ինչ կը լինի այս մրցման ելքը :

Յունաստան յաղթական կը հանդիսանայ իր հակառակորդին վրայ, Յիշենք ուրիշ օրինակ մ'ալ որ այժմ մեր օրով տեղի ունի եւ ամէն ոք իբր ականատես կրնայ վկայել :


Անգղիա կը տիրէ եւ իր իշխանութեան կ'ենթարկէ զՀնդկաստան որու բնակչաց թիւը տիրողինի վեցպատիկն է :

Միթէ ասիկայ փճուական ու անհերքելի ապացոյց մը չէ՞ որ Անգղիոյ զօրութիւնը Հնդկաստանի զօրութեան մեծագոյնն է :

Եւ ուստի՞ կը ծագի կամ յառաջ կուգայ այս մեծագոյն զօրութիւնը եթէ ոչ Անգղիոյ ըրած յառաջադիմութեան առաւելութիւններէն :

Ասոնցմէ ակներեւ կը տեսնուի եւ դիւրաբար կը զգացուի որ ուրիշի կամաց ենթակայութենէն ազատ լինելու համար պէտք է զօրութիւն, եւ զօրութիւնն ամենամեծ մասամբ կը ծագի, յառաջ կուգայ յառաջադիմութենէ՛ այն ազնիւ առանձնաշնորհէն որ խնդրողաց համար անսպառ աղբիւր մ'է ամէն տեսակ առաւելութեանց եւ միակ միջոց ազգի մը գոյութիւնը մշտնջենաւորելու :

Արդ ակնարկ մը ձգենք յառաջադիմութեան սկիզբին վրայ, քննենք անոր աղբիւրն եւ տեսնենք որոնք են ամենալաւ եւ ամենազիւր միջոցներն որոնցմով յառաջադիմութիւն ձեռք կը բերուի :



ՍԿԻՉԲ ԵՒ ՄԻՉՈՑ ՅԱՌԱՋԱԴԻՄՈՒԹԵԱՆ

Ի սկզբան ամէն անհատ բոլորովին իրեն թողուած՝ իր ամէն ընելիքներն գլուխ տանելու, եւ ուրիշ մէկէ մը օգտուելու համար որ եւ է միջոց դեռ հնարուած չլինելով, կը պարտաւորուէր ամենալար կէտէ սկսիլ եւ իր առանձին փորձառութեամբն իր գործողութեանց մէջ, որոնք խիստ չափաւորեալ էին, յառաջադիմութիւն ընել. յառաջադիմութիւն մը որ խիստ չնչին ու աննշան բան մը պիտի եղած լինի խորհե-

լով այն ժամանակի աննպաստ հանգամանքներն որու մէջ մարդս կը գտնուէր :

Այս չնչին ու աննշան յառաջադիմութիւնը նաեւ կամ զան ձեռք բերող անհատի մահուան հետ կ'անհետանար եւ կամ անոր (յառաջադիմութեան) մէկ ամենասակաւ մասը կը հաղորդուէր հօրէ որդի փոխուելով անհատի անմիջական սերունդին եւ առ շատն անոր ընտանեացը :

Այսպէս գաղափարներն, դիտողութիւններն, փորձառութիւններն որով եւ յառաջադիմութիւնն ոչ միայն ընդհանուր մարդկութեան ըստացուածք չէին լիներ, այլ եւ երկրէ մ'ուրիշ երկիր եւ ցեղէ մ'ուրիշ ցեղ ամենամեծ դժուարութեամբ ու յամրութեամբ կը փոխադրուէին եւ շատ անգամ իսկ մի եւ նոյն ընտանեաց մէջ կը մնային ու կը շարունակուէին : Դիւրին է երեւակայել որ իրաց այս վիճակին մէջ մարդու ըրած յառաջադիմութիւնը խիստ յամր եղած պիտի լինի, եւ յիշուի մարդու երկրիս վրայ երեւմանէն հազարաւոր տարիներ անցան մինչեւ զգալի յառաջադիմութիւն մը կարելի եղաւ նշմարուիլ : Սակայն մարդու գէպի յառաջադիմութիւն ըրած ամէն մէկ գծաչափ շարժումն անոր կը դիւրացնէր աւելի քիչ յամր շարժում մը եւս :

Այսպէս հետզհետէ մարդս կը յառաջադիմէ թէպէտ ամենայամբ կերպով մինչ ընկերութիւնը կը կազմուի եւ այն ատեն ոչ միայն գաղափարներն աւելի դիւրութեամբ կը փոխադրուին տեղէ տեղ, այլ եւ գաղափարներն, փորձառութիւններն ու արարքներն հեռաւորաց ու յեռապայից հաղորդելու պէտքն ալ զգալի կը լինի, եւ այս պէտքի անհրաժեշտ դառնալուն պատճառաւ կը հնարուին խորհրդաւոր նշանադիրքք : Ասոնք թէ եւ 'ի սկզբան սակաւթիւ ու աննշան բան մ'եղած պիտի լինին, սակայն կրնայ վստահութեամբ ըսուիլ որ ասոնց հնարումը մարդու կային գիւտերու ամենամեծն, ամենազլխաւորն եւ ամենակարեւորն եւ զաւ եւ է, գիւտ մը որ պիտի առաջնորդէր ուրիշ անթիւ գիւտերու :

Մարդու երեւմանէն մինչ խորհրդաւոր նշանագրոց հնարումը, մարդկային յառաջադիմութեան առաջին շրջանը կրնայ համարուիլ, շրջան մը որու միջոցի երկարութիւնն անկարելի է ճշգրտել, սակայն յեռապայ շրջաններու հետ բազմատեղով պէտք է որ չափազանց մեծ եղած լինի :

Թէեւ ամենամեծ եւ ամենակարեւոր գիւտ նկատեալ իբր սկիզբ կամ աղբիւր մը ուրկէ պիտի ծագէր արդի գիւտն իր անհուն ու անհամար հետեւութիւններովն, եւ իբր առաջին գաղափար իրի կամ դէպքի մը յիշատակը մշտնջենաւորելով, սակայն անմիջական արդիւնք մը չունեցաւ. մարդս դարձեալ իր նախկին կերպով շարունակեց իր ընթացքը՝ յամրաբար շարունակելով :

Կարեւր կը սահին կ'անցնին եւ մարդս հետզհետէ յառաջադիմելով կը զգայ խորհրդաւոր նշանագրոց անբաւականութիւնն, որոնք ոչ միայն

դժուար ըմբռնելի ու տարակուսական այլ եւ միայն իր եւ դէպք կրնա-
լին ներկայացնել եւ ոչ տեսական զաղափարներ, եւ նաեւ անոնց գոր-
ծածութիւնը սակաւուց համար իբր մասնաւոր առանձնաշնորհութիւն
պահուած էր :

Այսու ամենայնիւ խորհրդաւոր նշանագիրք համաքայլ մարդուս
յառաջադիմութեանը հետզհետէ կը բազմանան կ'ընդհանրանան եւ մա-
նաւանդ օր ըստ օրէ կը պարզուին մինչ կը հնարուի բեւեռագիրն : Ա-
սոր հնարամամբն առաջիններու գործածութիւնը կը նուազի եւ շատ տեղ
ալ կը դադրի : Բեւեռագիրն թէեւ բաղբատմամբ խորհրդաւոր նշանա-
գրոց աւելի զիբուսնելի ու զիւրընթեռնելի էր : սակայն այս եւս ամէն
հնչիւն չէր կրնար ճշդիւ ներկայացնել, որով եւ գործածութիւնը չէր
կրնար բոլորովին ընդհանրանալ : Ասոնցմէ ետքը հնարուեցաւ արդի
գիրն :

Խորհրդաւոր նշանագրոց հնարմանէն մինչ արդի գրի գիւտը, յա-
ռաջադիմութեան երկրորդ շրջանը կրնայ համարուիլ. որն թէեւ առաջին
շրջանին հետ բաղդատելով խիստ փոքր, բայց երրորդին հետ բաղդա-
տելով խիստ մեծ պիտի եղած լինի :

Տակաւին ճշդիւ չիմացուիր ուր եւ երբ հնարուեցաւ արդի գիրն .
արդեօք զիսուածական գիւտ մ'եղաւ թէ մեծ աշխատութեանց ար-
դիւնք, սակայն ստոյգէ որ անոր հնարումը կամ գիւտը մարդկային յա-
ռաջադիմութեան դարադուլը կը կազմէ եւ ընդհանուր գործողութեանց
մէջ յեղափոխութիւն մը կը մտցնէ :

Մինչ այն ատեն մարդս կրնար յառաջադիմել միայն իր առանձին
գործողութեանց փորձառութիւններովը, տեսածներովը, լսածներովը եւ
անցեալի դոյզն աւանդութիւններովն որոնց բոլորն ալ ամէն կերպով եւ
ամէն կողմէ խիստ չափաւորեալ էին :

Գրի հնարամամբը մարդս ոչ միայն կրնար վերի յիշածներն առաջ-
ուան պէս դարձեալ ունենալ, այլ եւ կը մարթանար ներկայացնել իր մը-
տաց ամէն իրերն, գործողութիւններն, դէպքերն, խորհրդածութիւն-
ներն ու տեսականութիւններն, բերել բոլոր անցեալը ներկային քով
դնել զանոնք իրարու հետ բաղդատել, բաղդատութիւններէ մակածու-
թիւններ, հետեւութիւններ, եզրակացողութիւններ հանել եւ որոնցմով
եւս նոր գաղափարներ յղանալ նոր տեսականութիւններ կազմել :

Այսպէս գրի ստանալովը մարդս կը ժառանգէր հասարակ տեւակա-
նութեան տարիքով մարմնոյ մէջ հազարաւոր տարիներ ապրած կամ
հազարաւոր տարիներու փորձառութեամբ հմտացած միտք մը :

Սրդ ինչ կը մնար մարդուս եթէ ոչ ամենաշնորհ սիրով գրկել գի-
բըն, եւ քաղել անորմէ առաջ եկած օգուտներն : Բայց այնպէս չեղաւ .
ընդհանուր մարդկութիւնը կազմող ազգերու ամենամեծ մասը կամ գի-
բըն ստանալու միջոց ու պատեհութիւն չունեցաւ եւ կամ անոր կա-

րեւորութիւն չտալով զանց ըրաւ, եւ այն փոքրագոյն մասէն ալ մի-
այն մասնաթիւ ազգեր ջանացին զիրը ձեռք բերել :

Մասնաւորէն ընդհանուր արդիւնք առաջ չգար :

Այսպէս ալ քանի որ գիրը միայն քանի մը ազգերու բաժին ին-
կաւ, ընդհանուր մարդկութիւնը չէր կրնար հաւասարապէս անորմէ
օգտիլ. ուստի միայն գիրը ժառանգող ազգերը կրնային օգտիլ որով եւ
իրենց դրացեաց վրայ մեծ առաւելութիւններ ստանալ : Սակայն գիրն
ունեցող ազգերն ալ չկրցան, ինչպէս որ պէտք էր, շարունակ օգտիլ
անորմէ, քանզի իւրաքանչիւր ազգի բոլոր անհատներն անոր ժառան-
գութեանը հաւասարապէս մասնակից չլինելով գիրն մասնաւորաց մի-
այն առանձնաշնորհ մը դարձաւ, որոնք իրենց բնածին միտման ու ար-
բամադրութեան համեմատ գործածեցին զան եւ անորմէ առաջ եկած
հետեւութիւններն, երբեմն յօգուտ ընդհանուրի՝ ի յառաջադիմութիւն
եւ ի բարօրութիւն ազգին, եւ երբեմն յօգուտ իրենց կամ մասնաւորաց
ի թշուառութիւն ազգին : Եղան այնպիսիներն եւս որ ամեն ուրիշներն
իրենց կամ իրեններու կտամացը կուրօրէն հնազանդեցնելու համար ար-
դիւնցին գրի ընդհանրացումը : Նաեւ ոմանք մինչ անգամ ջանացին ջըն-
ջել անոր հետքը երկրի երեսէն :

Այս պատճառաւ ազգերն երբեմն արագապէս դարգացան ու մեծ
յառաջադիմութիւն ըրին, երբեմն մօրացեալ անշարժ մնացին եւ երբեմն
ալ դէպի մարդկութեան առաջին շրջաններն մղուեցան եւ ընկրկուե-
ցան : Նրաց այս վիճակին մէջ գրէն յուսացուած արդիւնքը չէր կրնար
իրանալ :

Տպագրութեան գիւտովն այս փոփոխական երրորդ շրջանը կը վեր-
ջանայ եւ չորրորդը կսկսի :

Տպագրութիւնն աւելի զիբուսնեմբ, արագութեամբ ու քիչ ծախ-
քով բազմապատկելով գրքերու օրինակներն, աւելի շատին ձեռնհաս
կրնէ անոնց ստացումն, եւ որչափ որ գրքերն կը շատնան ու կը տա-
րածուին այնչափ աւելի լաւ կը զգացուի անոնց արժէքն ու օգտակա-
րութիւնը : Խուցերու անկիւններն ժրամանութեամբ կը խուզուին, եւ
փոշոյ մէջ թաղուած գրքերն, այն խաւար դարերու եւ ժամանակի
կերիչ սպառիչ ժանիքէն ազատուած՝ հնութեան նշխարներն, կը հան-
ուին, եւ իբր մարդարիտ պատուական ձեռքէ ձեռք կ'անցնին, եւ նո-
րանոր տպագրութեամբ կը հրատարակուին :

Նոր գարադուլի մը կըսկսի, եւ փոխարէն մասնաթիւ ազգերու
կամ մասնաւոր երկիրներու համայն Աւրոպա, երկրադնոխ մէկ քա-
ռորդը, կը գրկէ գիրը : Յառաջադիմութիւնը նոր ոգի կ'առնէ եւ եր-
թալով երթալով իր յամբ շարժումն արագ քայլերու կը փոխէ :

Մինչ տպագրութեան գիւտն Աւրոպա յայտնի ու անվիճելի առա-
ւելութիւն չունէր Ասիոյ վրայ : Եւրոպական մեծագոյն տէրութիւններն

բացարձակապէս աւելի յառաջադէմ եւ աւելի զօրաւոր չէին Ասիոյ մեծագոյն տէրութիւններէն :

Տպագրութիւնն այս երկու մեծ ցամաքի՝ իրարու նկատմամբ ունեցած դրութիւնը փոխեց :

Տպագրութեամբ պիտի աւելի ծաւալուեցաւ Եւրոպիոյ մէջ, եւ գրի ծաւալումն Եւրոպիոյ յառաջադիմելուն որով եւ զօրանալուն սկզբնապատճառն ու գլխաւոր միջոցը դարձաւ :

Ասիա օգուտ չքաղեց այս գիւտէն, գրի ծաւալմանն անտարբեր մընաց, եւ հետեւապէս չկրցաւ յառաջադիմութեան շաւղին մէջ Եւրոպիոյ հետ համընթաց լինիլ . ուստի եւ առաջ եկաւ այն մեծ տարբերութիւնը որ այսօր կը տեսնուի երկրագնտիս այս երկու մասին մէջ :

Այսու ամենայնիւ չկրնար ըստուիլ որ յառաջադիմութիւնն իր վերջնական փուլին (phase) մէջ մտեր էր Եւրոպիոյ մէջ, եւ դեռ մըտնելէ ալ խիստ հեռի է . քանզի ոչ միայն համայն մարդկութիւնը տակաւին չէ գրկած գիրն, իրր անտեսանելի խաւարին մէջ գերագոյն ու ճշմարիտ յառաջադիմութեան առաջնորդող լուսաւոր սիւն մը, այլ նաեւ աշխարհին այն մասին մէջ՝ ուր որ գիրն ամենէն աւելի շատ ծաղկած է, հոն եւս տակաւին գիրն ամենուրեք ընդհանրացած եւ հասարակաց ստացուածք կամ ամէն անհատի անբաժան ժառանգութիւն չէ դարձեր :

Տասնիններորդ դարու հետ ծնաւ գրի ընդհանրացման վսեմ գաղափարն, եւ հետզհետէ զան (գիրն) հասարակաց ստացուածք դարձրնելու պէտքն աւելի զգալի եղաւ :

Շարժեցաւ Եւրոպա :

Եւ փոխարէն անհասանելու Տէրութիւնք իրենք գրին ջատագով ու պաշտպան դարձան, եւ ձեռնարկեցին տալ գիրն ամէն անհատի իրր ամենագնիւ եւ մեծագին օժիտ :

Ասոնց մէջ առաջինն եղաւ Բրուսիա՝ որ ընդհանուր դաստիարակութեան սկզբունքն ընդունելով, դաստիարակութիւնը հարկադրական հրատարակեց : Ասոր գործադրութեանը համար օրէնքներ հաստատեց . ծնողաց վրայ՝ իրենց զաւակներն եօթը տարեկան հասակէն մինչ տասն ու չորս տարեկան հասակը դպրոց խրկելու պարտաւորութիւնը դրաւ . զաւակնին դաստիարակութենէ զրկող ծնողքներն՝ օրինաց առջեւ պատասխանատու, եւ տուգանաց ու պատժոց ենթակայ յայտարարեց . վրձոնեց որ ամեն թաղ նախակրթարան, ամէն քաղաք վարժարան, ամէն միճակ կամ թեմ ուսումնարան, եւ ամէն գաւառ համալսարան մը ունենայ, եւ այս հաստատութեանց ծախքը ժողովուրդն ըստ համեմատութեան իւրաքանչիւրի կարողութեան հողայ : Նաեւ ոչ միայն ուսուցման դրութիւնն ընտրելով որոշեց, եւ գրեթէ բոլոր թագաւորութեան մէջ միակերպ ըրաւ, այլ եւ յարմար վարժապետներ պատրաստ

տելու եւ ուսուցման միջոցը կատարելագործելու համար մասնաւոր ուսումնարաններ հաստատեց :

Գերմանիա գրեթէ ժամանակակից գոնուեցաւ Բրուսիոյ՝ ընդհանուր դաստիարակութեան սկզբունքն ընդունելութեան մէջ, որոնց եւս հետեւեցան Անգլիա, Գաղղիա եւ այլք :

Կրնայ ըստուիլ որ ընդհանուր դաստիարակութեան սկզբանց ընդունելութիւնն ըստ ինքեան յառաջադիմական շրջան մը կը կազմէ . բայց ըստ մեզ յառաջադիմութեան վսեմագոյն շրջանը կամ ոսկեդարն այն ատեն պիտի սկսի, երբ համայն մարդկութիւնն անբացառաբար ընդունի եւ գրկէ դաստիարակութիւնն իրր ճշմարիտ յառաջադիմութեան միակ միջոց եւ իրր առաջին պէտք ամէն մարդածին անհատի :


Ամէն նորութիւն իր ջատագովներն ու պարսաւիչներն, իր ախոյեաններն ու հակառակորդներն կ'ունենայ : Այսպէս ալ ընդհանուր դաստիարակութեան սկզբունքն ունեցաւ իր ջատագովներն, ախոյեաններն եւ պարսաւիչներն ու հակառակորդներն :

Առաջիններն կը ջանային անոր կարեւորութիւնը ցուցնել . ետքիններն կը ճգնէին ընդհակառակն անոր անօգուտ ու վնասակար լինելն հաստատել : Երկու կողմի համար եւս առարկութիւններ, փաստեր եւ օրինակներ չէին պակսեր : Կարծեաց այս տարբերութիւնն ոչ թէ տեսակէտերու զանազանութենէն առաջ կ'ուզար, այլ նոյն խոկ դաստիարակութեան բառին ինչ իմաստով ըմբռմանէն :

Յիրաւի եթէ դաստիարակութիւն կոչելով իմանանք սրահի մը մէջ մանուկներ ժողվելով սոփեստի կամ դաստիարակ կոչուելու անարժան մէկու մը յանձնելն, որպէս զի ան (սոփեստը) հնացեալ անբանաւոր եղանակով մը մանուկներուն գրքեր կարդալ ու մասամբ իւրք հասկնալ եւ բառեր իրարու քով շարել սովորեցնէ, առանց անոնց բարոյականն ուղղել ազնուացնելու եւ ֆիզիքականը կրթել զօրացնելու եւ առանց իւրաքանչիւր մանկան կարողութիւններն չափելու եւ յարմարութիւններն քննելու եւ ըստ այնմ ուսման ընթացքը կարգադրելու . եթէ ապիկայ իմանանք դաստիարակութիւն ըսելով, այն ատեն անտարակուսաբար դաստիարակութիւնն, ի հաշիւ առնելով աշակերտաց անոր համար վատնած ժամանակն ու դրամական ծախքն եւ բաղդատելով անոր միջոցաւ ձեռք բերուած արդիւնքն ուրիշ մի եւ նոյն ժամանակի ու ծախուց կարօտ արհեստի մը զբաղման կամ ո եւ է հետամտութեան մը արդեանց հետ, այն ատեն կը կրկնենք դաստիարակութիւնն ոչ միայն անօգուտ է այլ եւ երբեմն վնասակար եւ մեծ չարեաց ու անօգուտ թշուառութեանց սկզբնապատճառ :

Իսկ եթէ դաստիարակութիւն ըսելով իմանանք մանկանց մասաւորական, բարոյական ու ֆիզիքական կարողութեանց հաստատաբալէս եւ բարեոք զարգացումն ու մշակումն անոր դաստիարակներու եւ ա-

269 4-38
16521-58
(16521-58)



դէկ դրութեան միջոցաւ, այն ատեն կրնանք անվարան ըսել որ չկայ բան մը մարդու համար այնչափ անհրաժեշտ, այնչափ կարեւոր եւ այնչափ օգտակար որպէս դաստիարակութիւնն. եւ իբր եղբակացութիւն վերն ըսածներուն կրկնել որ յառաջդիմութիւն ձեռք բերելու համար չկայ միջոց մը այնչափ աղէկ, այնչափ անսխալական որպէս դաստիարակութիւնը:

Քննենք անոր առանձին մասերը մի առ մի եւ տեսնենք արդեօք մեր մէջ դաստիարակութիւն կ'ս'յ կամ դաստիարակութեան տուն մը ունինք:

ԳԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Գաստիարակութիւնն ըստ արդի առման կը նշանակէ մէկը մեծ-ցընելու, տածելու, անոր վարքը, սովորութիւններն կը թելու, ագնուացընելու, եւ մարմնական, մտաւորական ու բարոյական կարողութիւններն զարգացնելու գործողութիւնը:

Այլի երկուքը ծնողաց ու ընկերութեան կը վերաբերին, իսկ երրորդն, (մարմնական, մտաւորական ու բարոյական կարողութիւններն զարգացնելու գործողութիւնն) ամենէն գլխաւորն ու կարեւորն, որ այս գրուածքիս առարկան է, դաստիարակական հաստատութեանց եւ ի մասնաւորի դաստիարակներու:

Մենք դաստիարակական հաստատութիւններ չունինք եւ ոչ ալ դաստիարակներ, հետեւապէս մեր մէջ դպրոցական դաստիարակութիւն չկայ:

Մենք ունինք դասարաններ, դասատուներ, ուրեմն մեր մէջ կայ միայն դասատուութիւն:

Գաստատութեան ու դաստիարակութեան մէջ եղած տարբերութիւնն անչափ է, զանոնք բաղկացուցիչ մասերն ըստ մեծի մասին օտար եւ որոշ:

Գաստատութիւնն իր մէջ ուրիշ բան չպարունակեր եթէ ոչ դաս տալու պարզ գործողութիւնն, եւ իր միայն նպատակն է այս ինչ կամ այն ինչ առարկայի վրայ, առանց ընտրութեան, բացատրութիւններ տալով աշակերտի մտաւորական կարողութիւններն զարգացնել, անհոգ ուրիշ բոլոր կարողութեանց զարգացման եւ մինչ անգամ անոնց յուսացմանն ու վատթարութեանն եւ նաեւ անփոյթ նոյն իսկ առաջադիւր նպատակին համեմատ համար պէտք եղած միջոցներն ու զգուշութիւններն ձեռք առնելու:

Այս բացատրութիւններն տուող կամ դասատուութեան պաշտօնը կատարող անձին դասատու անունը կը տրուի, եւ այսպիսի դասատու մը կրնանք առանց մեղանչելու, արտերու մէջ սերմ ցանելու համար վարձեալ մշակի մը նմանցընել, որ վարձեալ օրէն իր սերմնացանութեան պաշտօնը կսկսի. բայց՝ արդեօք մշակական արուեստին վրայ տեղեկութիւն ունի, արդեօք իր յանձն առած պաշտօնը կրնա՞յ ըստ պատշաճի կատարել, արդեօք ցանելիք սերմն որովհետ խա՞ն է, արդեօք այդ սերմը մեծացնող ձիւններու ձու կը պարունակէ, արդեօք արտերն սերմ ընդունելու համար կանխաւ պատրաստուած ու աղէկ ալիստեւած են, արդեօք ո՞ր արտի հողն եւ ո՞ր արտի դիրքն ո՞ր սերմի բարգաւաճութեան աւելի յարմար է, արդեօք ո՞ր արտը պարարտ է եւ ո՞րն սպառեալ ու զօրութեան կարօտ, արդեօք ո՞ր սերմը գարունը ցա-

ներու է որն ամառն եւ որն աշունը , արդեօք որ արտը յաճախ ջրելու է եւ որն անձրեւով միայն կը բաւականանայ , այս ամէն նկատողութիւնս ներն վարձկան սերմնացանին հոգը չէ . նա սերմերու բարգաւաճման համար անպատասխանատու եւ տուած արդասեաց աղէկութեանն ու առատութեանն անտարբեր . ինքը պարզ վարձկան մ'է , եւ իր պաշտօնն ու պարտաւորութիւնն է միայն պահել սերմերն շատ տալ , որ երկրի միջինն , կը բուսնին , կաճին , բարի սերմերն որոմներէն կը հեղձուին , կամ ձձիներէն ու վայրի թռչուններէն կ'ուտուին , զերծեալ աճեալներն արդիւնք ու պտուղ կուտան կամ չեն տար , այս ամէնն աւնոր համար մի եւ նոյն է եւ ամենեւին տարբերութիւն չընեն :

Ահա՛ դասատուն :

Իսկ դաստիարակութիւն , ինչպէս ալ որ վերն սահմանուեցաւ , մարդկային քաղցր կարողութիւններն առանձին առանձին մշակելու եւ զանոնք հասարակէ՛ր զարգացնելու գործողութիւնն է : Ուստի հարկաւ կը պահանջուի որ զան (դաստիարակութիւնը) մատակարարելու յանձնառու անձը՝ դաստիարակական արուեստին կատարեալ հմտութիւն ու նենայ , եւ իր պաշտօնը մեքենայաբար չկատարէ , այլ դաստիարակելեաց իւրաքանչիւրի առանձին յօժարութիւններն ճանաչէ , յատկութիւններն քննէ , կարողութիւններն կշռէ , եւ ըստ իւրաքանչիւրի միտման , յարմարութեան ու ընդունակութեան ուսուցանելիք նիւթերն յատկացընէ , եւ զանոնք յառաջատուութեամբ ջամբէ , միշտ նպատակ ունենալով սանուց մարմնական , բարոյական ու մտաւորական կարողութեանց հաւասար զարգացումն :

Այս պայմաններն անթերի լցնելու կարող անձը՝ դաստիարակ կը կոչուի , եւ այսպիսի դաստիարակ մ'ալ կրնանք հմուտ ու փորձառու երկրագործի մը նմանցընել . որ տեղի օդին , անոր փոփոխութեանն եւ անձրեւաբեր , ձիւնաբեր ու հողմաբեր եղանակաց մերձաւորաբար սկսելուն ու դադրելուն տեղեակ է , արտերն լաւ կը ճանաչէ , եթէ անոնցմէ ոմանց հոգն աղքատ է զան արձեատական միջոցներով կը պարարէ , արտերն խորին կը հերկէ , քարերն ու օտար նիւթերն ի բաց կը նետէ , ցանելիք սերմերու ամենընտիրը կ'առնու եւ զանոնք որոմներէ ու վնասակար ունդերէ կը մաքրէ , իւրաքանչիւր սերմ իրեն յարմար եղած տեղն ու եղանակին մէջ կը ցանէ , արտերն զազաններու ու չորքոտանիներու աւերանքէն ու ոտնակոխութենէն պաշտպանելու համար ցանկով կամ խրամով կը պատէ , եւ վայրի թռչուններն մղելու եւ հեռու պահելու համար արտերուն մէջ խրտուիլակներ կը դնէ , միշտ արտերուն մէջ պտտելով օտար ու վնասակար բանջարներն արմատախիլ կ'ընէ , տունկերն ու հասկերն սաստիկ հողմերէ պաշտպանելու համար նախազգուշութիւններ ձեռք կ'առնու , վերջապէս ամէն ջանք , խնամք եւ աշխատութիւն ի գործ կը դնէ եւ ոչինչ չխնայելու ցանաճներն կա-

տարեալ աճման հասցնելու եւ անոնցմէ ընտիր ու առատ արգասիք ժողովելու համար :

Ահա՛ դաստիարակը :

Արդ վարձեալ մշակին ու հմուտ երկրագործին մէջ ի՞նչ տարբերութիւն որ կայ նոյնն եւս կայ դասատուին ու դաստիարակին մէջ :

Դասատուութեան ու դաստիարակութեան վրայ արագ ակնարկ մը ձգելէ ետքը զառնանք զանոնք կազմող մասանց . տեսնենք որոնք են իւրաքանչիւրի մասերն ու պիտոյքներն , քննենք , ապացուցենք մէկու պակասութիւններն ու անօգտակարութիւնն եւ միւսի առաւելութիւններն ու արդիւնաւորութիւնն , եւ ի վերջոյ ցուցնել ջանանք թէ ի՞նչպէս եւ ի՞նչ միջոցներով եւ մինչ որ աստիճան հնար է մեզ դասատուութիւնը դաստիարակութեան փոխել եւ անորմէ անթերի արդիւնք քաղել :

Դասատուութեան ու դաստիարակութեան նիւթական ու գլխաւոր պիտոյքներն ըստ մեծի մասին նոյն են , սակայն այս պիտոյքներն կը տարբերին իրենց որպիսութեամբը , յատկութեամբն ու մարդման եղանակովը :

- Դասատուութեան ու դաստիարակութեան համար պէտք են — ,
- Ուսուցիչներ ,
- Ուսանողներ ,
- Գասական գրքեր ու գործիքներ ,
- Վարժարաններ կամ ուսումնական հաստատութիւններ ,
- Դրամ կամ մուտք ուսուցիչներն վարձատրելու , եւ ուրիշ պիտոյքներն հոգալու համար :
- Նախ տեսնենք որոնք եւ ի՞նչ դրութեան մէջ են մեր արդի ուսուցիչներն , ուսանողներն եւ այլն , եւ ապա ջանանք ցուցնել որոնք եւ ի՞նչ դրութեամբ պէտք է լինին վերոյիշեալներն :

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Ուսուցչութեան պաշտօնը կատարող անձերն կարելի է ընդհանուր առմամբ երեք մեծ կարգի բաժնել .

- Տիրացուներ ,
- Պօստուոսուներ ,
- Բուն ուսուցիչներ :

ՏԻՐԱՅՈՒՆԵՐ

Տիրացուներ ըսելով կ'ուզենք նշանակել այնպիսիներն որ իրենց գիտութիւնը վանքերու կամ Ասիոյ գիւղերու ու քաղաքներու վարժարանացը մէջ եւ իրենց պէս տիրացուներու քով ստացեր են :

Տիրացուներու դասատուութիւնն որոշ ու սահմանեալ գրքերու վըրայ կը լինի :

Դասատուութեան եղանակը հիննալով սրբազան ու նուիրական է դարձեր . մէկը չհամարձակիր , եւ գուցէ պէտք եղած կարողութիւնն ալ չունի , ամենաթեթեւ փոփոխութիւն մը ներածելու , ժառանգական իրաւանց պէս վարժապետէ յաշակերտ կ'աւանդուի եւ մշտական կը դառնայ , կարծես թէ մարդարէնքէ պատուիրեալ , առաքեալներէ սահմանեալ եւ Սուրբ Հարց ժողովներէ հաստատեալ օրէնք մ'է , որ ամենեւին փոփոխութիւն չընդունիր . կարծ , տիրացու՝ ուսուցչութեան հաւատամքն է :

Աստուծոյ խնամոց դատապարտեալ աշակերտներն՝ իրենց ուսումը կըսկընին Սուրբ Մեղրոսաց ժամանակին յօրինուած հեղաբանով մը , եւ տարիներ կենսամաշ աշխատութիւն ու տընութիւն կրելով պարզ ընթերցանութեամբ կ'աւարտեն Մէկ կանոն՝, Ութ կանոն (Սաղմոս) , Աւետարան , Գործք Առաքելոց եւ Նարեկ : Նարեկի ընթերցանութիւնն աւարտելէ ետքը կըսկսին գրաբար Քերականութիւն , որուն կը յաջորդի ճարտասանութիւն—իրբ սահման աշակերտութեան եւ ծայր գիտութեան : Երբեմն , եւ ոչ միշտ , դաս կը արուի եւս Քրիստոնէական , յայտարարութիւն եւ Թուարանութեան չորս պարզ գործողութիւններն :

Տիրացուներու դասական գրքերն յիշելէ ետքը դառնանք ուսուցման եղանակին՝ որ խիստ պարզ է եւ ըստ իրենց անսխալական եղանակ մ'է :

Տիրացուն աշակերտի սովորելիք դասն անգամ մը կ'ըսէ ու տեղը կը խրկէ . հետեւեալ օրն եթէ աշակերտը դասը չգիտէ պարսկական պատժով կը պատժէ—աշակերտի ոտքերն կամ ձեռքերն կապանք դնել կ'ուտայ եւ այնչափ կը գանձ որ մինչ թեւը յոգնի եւ կամ աշակերտը մաքրի , անկէ ետքը դարձեալ տեղը կը խրկէ որ երթայ դասը լաւ սովորի : Ինձ շատ հաճելի պիտի լինէր որ այս Պարոն տիրացուներուն դաս մը անգամ մը ըսէի եւ տեղերնին խրկելով հետեւեալ օրն դաս պահանջէի . այն ատեն տեսնէի՝ այս Պարոններէն հարիւրին քանին իրենց դասըն անսխալ պիտի կարենային կրկնել :

Տիրացուներու անհերքելի գաղափարն այն է՝ որ ուսումը բոնութեամբ ու դաւազանի զօրութեամբ պէտք է հաղորդել , եւ ոչ թէ հայրական քաղցրութեամբ աշակերտներն համոզելով , քաջալերելով եւ ուսումն ախորժելի ընելով , եւ իրենց պինդ համոզումն է՝ որ մինչ աշակերտը վարժապետը տեսած ատենը չդողայ , չտարապիի , ամենեւին չը պիտի յանձն առնու իւր դասը սովորի : Այս գաղափարին ու համոզմանը համեմատ փոխանակ ինքզինքնին աշակերտաց բարեկամը ցուցնելու կը ջանան միշտ խոժոռադէմ ու անաւոր հակառակորդ մը երեւնալ : Աշակերտք ալ հետեւապէս փոխանակ վարժապետին վրայ նայելու իբր

երկրորդ հայր , կը նային իբր ծեծառուշտ ու անդուլթ թշնամի մը , եւ անոր համար ձիշդ այն համակրութիւնը կ'ունենան որ ինչ գառնուկ մը կըզգայ զինքը գիշատելու պատրաստուող գայլի մը համար :

Այս տիրացուներու կրթած սաներէն առաջ կուգան կարգ մը նոր տիրացուներ , որոնցմէ մէկ մասը հաստանալով ու խոշորնալով կը բարձրանան կղերութեան աստիճանին :

Տիրացուներն առ հասարակ եւրոպական լեզուներու անտեղեակ են , ուսմանց մէջ թուարանութեան առաջին չորս գործողութիւններէն քիչ անգամ անդին կ'անցնին : Հայոց պատմութիւնն ոչ թէ սովորած ուշի ուշով այլ իբր վէպ անգամ մը կարդացեր են ; եւ աշխարհագրութիւն մ'ալ գուցէ տեսեր են . Պղնձագիր , Եփիմերոսէս աղէկ գիտեն եւ Յայսմաւուրքէն շատ օրինակներ ու դէպքեր կրնան յիշել : Ասոնց կարծեցեալ իմացածնին գրաբարն է , որով կը պարծին , որուն ջերմ պաշտպաններ կը հանդիսանան եւ որն ալ դժբախտաբար լաւ չեն հասկնար : Պարոններու մէջ մաքուր գրաբար գրող մը գտնելու համար Գիողիմեսի նման ճրագով փնտռելու է : Շատերն մինչ անգամ պարզ նամակ մը թէ գըրաբար եւ թէ աշխարհաբար չեն կրնար գրել , յաճախ անգամ գրաբար սկսածնին ռամկօրէնով կը վերջացնեն :

Ասոնք չեն սիրեր Պօնթուս մօտներն , եւ Քերականութիւն , ճարտասանութիւն չեն կարդացեր ըսելով կարճամարնէն դանոնք : Պօնթուս մօտներու հետ խօսակցած ատենը , թէեւ խօսքի նիւթն ալ ջնջին լինի՝, սակայն եւ այնպէս կը ջանան գրաբար բառերով ու ձեւերով խօսիլ , անմտադիր ոճի անճոռնութեանն ու խօսքի անշարայարութեանը : Գժրախտաբար շատ անգամ յանգոյշս բերնէն կը հանեն թուրքերէն բառեր ու ասացուածներ եւ ռամկական ամենանուստ առածներ : Ասոնցմէ շատերուն սովորութիւնն է թուրքերէն կամ օտարազգի բառերուն հայերէն վերջաւորութիւն տալով եւ անուններն նախադրով դարդարելով գործածել : Ամէն նիւթի համար եւ ամէն վայրկեան Սուրբ Գրքէն վկայութիւններ կը բերեն , թէ եւ յիշած վկայութիւնը խօսակցութեան նիւթին ամենեւին վերաբերութիւն չունենայ , բայց Տիրացուներուն համար տարբերութիւն չընեն , քանզի անոնք միշտ կ'ենթադրեն որ Պօնթուս մօտներն գրաբար չեն հասկնար :

Տիրացուներն Պօնթուս մօտներու հետ գրականութեան վրայ խօսած կամ վիճաբանած ատենը՝ Ժամագրքէն , Սաղմոսէն , Շարականէն բերան սովորած պարբերութիւններ յառաջ բերելով կը հրաւիրեն զՊօնթուս մօտներն դանոնք մեկնել ու վերլուծել : Պօնթուս մօտներն ալ , անոնց առաջարկած դժուարութիւններն չկրնալով լուծել եւ չուզելով իրենց անբաւականութիւնն այս կէտին մէջ յայտնել կամ անկեղծօրէն խոստովանիլ , արհամարհական ժպիտով կը պատասխանեն— գրաբարը մնած է , այդ լեզուն մեռելներու համար է եւ ոչ մեզ կենս

դանեացս — եւ կը ջանան խօսքին նիւթը փոխել ու եւրոպական լեզուի մը վրայ դարձնել :

Այս գրաբարապանձ տիրացուներն չեն սիրեր աշխարհաբարն : Արդեօք պատճառը մաքուր աշխարհաբար գրել կամ խօսիլ չգիտելնն է : Թող իրենք պատասխանեն ասոր : Աշակերտ մը պատժած կամ մէկու մը դէմ բարկացած ատենը դասարանին մէջ հայտնութիւններ , մեծաւ մասամբ թուրքերէն , ընելն ասոնց համար խիստ օտար ու անսովորական չէ . անշուշտ ասիկայ աշակերտաց բարի օրինակ տալու համար է :

Ի վերջոյ վկայելու է որ տիրացուներն քիչ ոտձկով դասատուութիւն յանձն առնելու եւ օրական 8-10 ժամ վարժարանին մէջ աշխատելու առաքինութիւնն ունին . առաքինութիւն մը՝ որ Պօնտու մօտեներու քով կը պակսի . ասոր համար գովասանութիւն ու երախտագիտութիւն պարտինք առ տիրացուներն :

Տիրացուներն թողնելով դառնանք այժմ Պօնտու մօտեներուն :

ՊՕՆՏՈՒՆԻ ՄՕՍՈՒՆԵՐ

Պօնտու մօտու անունը կուտանք անոնց որք սովորաբար մէկ կամ երկու եւրոպական լեզու կը թուլթակեն :

Ասոնց հայերէնը խիստ սահմանեալ է : Գրաբար ամենեւին չեն հասկնար , աշխարհաբար եւս կրնան ոչ մաքուր խօսիլ եւ ոչ ալ գրել . ստէպ եւրոպական բառեր իրենց խօսքին մէջ կը խառնեն եւ ասման ոճն , որ իրենց յատուկ է , երբեմն բառական թարգմանութիւն է օտար լեզուի մը : Հայ դպրոցներու մէջ այնքան չեն կեցեր , որ կարենային հայերէն լեզուի տարերքն անգամ սովորիլ . ետքէն դուցէ ժամանակ մը եւրոպական դպրոց մը յաճախեր , կամ պատահամբ Եւրոպիոյ այն ինչ քաղաքը ատեն մը կեցեր , կամ եւրոպացւոյ մը հետ դրացի եղեր կամ յարաբերութիւններ ունեցեր են , կարճ կերպով մը եւրոպական լեզու մը թուլթակել սովորեր են . քիչ շատ թուաբանութեան ու աշխարհագրութեան վրայ տեղեկութիւն ստացեր , գուցէ դպրոցին մէջ ալ ուրիշներու գիտութիւնք ու պատմութիւնք դաս առնելնն տեսեր եւ քաղաքականութեան , սնտեսութեան եւ դանազան ձեւ կառավարութեանց վրայ ուրիշներու խօսիլն ու տրամաբանելը լսեր են առանց հասկնալու :

Ահա այս համարեալ գիտութիւններով աշխարհ կը մտնեն եւ ասպարէզնին կը սկսին . ինքզինքնին կէս փիլիսոփայ կարծելով՝ ձեռագործ արհեստներն կ'արհամարհեն , եւ նուաստ ծառայութեանց ալ իրենց անձնատիրութիւնը չգիջանիր , եւ քանի որ՝ ո եւ է լեզուի , կամ գիտութեանց որ եւ է ճիւղին մէջ կատարեալ լինելէ շատ հեռու են ,

ոչինչի յարմարութիւն չունին , որով կըստուգեն հասարակաց առածը « Այն որ ամէն բան գիտէ ոչինչ գիտէ » . այս պատճառաւ երկար ատեն ի խնդիր գործի ու պաշտօնի կը շրջին , եւ ի վերջոյ յուսահատեալ վարժապետութիւնը կը գրկեն , իբր վերջին ճար կամ իբր մակոյկ փրկական թշուառութեան ծովուն մէջ խորասուզելէ ազատելու համար : Կ'ատեն գրաբարն առ ի չգիտելոյ , եւ թէեւ աշխարհաբարին ալ շատ հմուտ չեն , սակայն միշտ անոր ջերմ պաշտպաններ կը ձեւանան , կ'արհամարհեն զՏիրացուներն անկիրթ ու աշխարհէ անտեղեակ են ըսելով , եւ հետեւնին խօսած ատենը զանոնք շլացնելու համար բարձրագոյն նիւթերու վրայ կը ձառեն , առանց վարդապետածնին իրենք ալ հասկնալու , եւ շատ անգամ ալ քաղաքականութեան խորերն ուր իրենք ալ չեն տեսներ , կ'իջնան կը թարթափին : Կնքզինքնին ազգասէր կը ցուցնեն եւ այլոց ալ ազգատիրութիւն կը քարոզեն , եւ երբեմն ալ պարտաւորեալ կամ առ ի փառս , աղօգուտ դործեր կատարելու առաքինութիւնը կ'ունենան :

Ասոնք դասատուութեան մասնաւոր դրութիւն չունին եւ որոշեալ մէթօտոսի մ'ալ չեն հետեւիր . ինչ գիրք ձեռքերնուն անցնի անոր վրայ դասատուութիւն կ'ընեն , եւ ամէն բանի վրայ հարեւանցի կարգացած կամ լսած լինելով իրենց խնամոց յանձնուած աշակերտաց ալ ամէն նիւթի վրայ դաս կը սկսին , եւ քանի որ իրենց իմացածը կամ կարծեցեալ հմտութիւնը խիստ չափաւորեալ է , աշակերտաց ալ նիւթի մը վրայ դասախօսութիւն սկսելնն ու փութով զան ուրիշ նիւթի մը փոխելնն գրեթէ մէկ կընեն :

Պօնտու մօտուներն լեզուագիտութեան ամենաջերմ ջատագոյներն են , եւ աշակերտաց , որք տակաւին հայերէն լոկ ընթերցանութիւնը չեն աւարտած , մէկ երկու եւ երբեմն մինչ երէ՛ օտար լեզուներու ուսումն սկսել կուտան , անմտադիր անոնց մտաւորական կարողութեանց զարգացման եւ մարմնականներու տոկունութեանը , կարին կամ տկարութեանը : Հարկ չէ ըսել որ ասոնց ձեռնասուն աշակերտներն ալ ամէն կերպով իրենց կը նմանին — ամէն բան գիտեն եւ ոչինչ գիտեն :

Մեր այս երկու տեսակ դասատուներն նկարագրելու նպատակն ուրիշ բան չէ , եթէ ոչ Հայոց մէջ տիրող ուսուցչութեան ընթացքի յոռութիւնը ցուցնել , եւ անոր ժամավաճառ , անօգուտ եւ շատերուն ալ վնասակար լինելը հաստատել : Մենք չենք ուզեր դասատուներն քամահրել եւ ոչ ալ զանոնք վար զարնել : Ոչ , հեռու մեզմէ այսպիսի խորհուրդ . մենք միայն կը պախարակենք այս Ոչ—դրութիւնն եւ ծնողաց ու կարող անձանց անհոգութիւնն այս մասին . եւ կառաջարկենք այս չարեաց դարման փնտռել : Մեր ստորագրած դասատուներն յանգանք մը չունին . ինչ որ առին նոյնը կուտան :

ԲՈՒՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ

Ուսուցիչներու երրորդ տեսակն, որք Հայոց լաւագոյն դպրոցներու եւ եւրոպական վարժարաններու մէջ բաղմամբայ աշխատութեամբ իրենց ուսումն աւարտեր են, ամենեւին ո եւ է կողմէ չեն նմանիր առջի երկու տեսակին :

Այսպիսիներն ալ, որք իրենց տաղանդովը, գրագիտութեամբն, ուսումնականութեամբը կամ գրաւոր աշխատութեամբն ամէնուն յարգանքը կը վայելն, եւ որք յիրաւի դաստիարակ կոչուելու արժանի եւ ուսուցչութեան ծանր պաշտօնն ըստ պատշաճի կատարելու կարող են, այսպիսիներն ալ կը կրկնենք, խիստ սակաւաթիւ են մեր մէջ: Կը յարգենք այս երրորդ կարգն եւ կը ճանչենք իրենց արժանիքը, սակայն թող ներուի մեզ ըսել խորին պատկառանք, որ Ազգն իր զաւակաց դաստիարակութեան վերաբերմամբ այսպիսիներու տաղանդէն, ուսումնականութենէն ու փորձառութենէն խիստ քիչ կամ գրեթէ աննշան օգուտ կը քաղէ: Պատճառն յայտնի է:

Նախ այս տաղանդաւոր ու հմուտ անձինք յանձն չեն առնուր Պօլսէ կամ ուրիշ եւրոպականացեալ քաղաքներէ հեռանալ, եւ դաւառաց մէջ վարժապետութեան տաղակալի պաշտօնը կատարել, որ հակառակ ամէն լուսաւր մտաց ու գաղափարաց, նուաստ բան մը կը համարուի զաւառաց մէջ:

Երկրորդ, եթէ այս երրորդ կարգէն ոմանք յանձն առնուն զաւառաց մէջ ուսուցչութեան պաշտօնը կատարել, այն ատեն ալ զաւառականք չեն կրնար զանոնք ռոճիկով բաւականացնել: Քանզի երբ այսպիսիներն կը հաճին հեռանալ լուսաւորեայ քաղաքէ մը, զրկուիլ ընկերական հաճոցներէ, զբօսանաց վայելմանէ եւ մտաւորական ուրիշ առաւելութիւններէ, անշուշտ կ'ուզեն, եւ իրաւամբ, որ այս ամէն զրկողութիւններու համար փոխարինութիւն մը ստանան, եւ ի՞նչ փոխարինութիւն կրնան սպասել եթէ ոչ ռոճիկի աճում մը. ուստի վարժապետ մը ինչ որով Պօլսոյ մէջ կը գոհանար, զուստաց մէջ առ սակաւն անոր կրկնապատիկը կը պահանջէ, եւ բաղդատաբար զաւառական ազգայինք Պօլսոյ, Զմիւռնիոյ եւ ուրիշ գլխաւոր անդերու ազգայիններէն աւելի անձօխ ու աղքատ լինելով վարժապետի ծախուց բեռն անոնց համար աւելի կը ծանրանայ ու համեմատաբար գրեթէ կը քառապատիկ, որով բոլորովին անհնար կը լինի զաւառացնոց բաւականացնել յանձնառու դասատուն եւ հետեւապէս կը զրկուին այսպիսի ձեռքնաս ուսուցիչներէ:

Եթէ մեզ նմանութիւն մը ներուի պիտի ըսենք, որ այսպիսի տա-

ղանդաւոր ուսուցիչներն կամ դաստիարակեալ անհատներն պայծառ աստղերու կը նմանին, որ իրենց մասնաւոր շրջանակէն դուրս չեն դար, հանապազ անոր մէջ կը շրջին, եւ միայն իրենց միջնորդութիւն մէջ կը փայլին: Ապացուցման կարօտ չէ, որ աստղերն մարդու ունեցած որ եւ է լուսատու նիւթէն աւելի պայծառ ու զօրաւոր լոյս ունին. սակայն ստոյգ է եւս, որ իրենց հեռաւորութեանը պատճառաւ լոյսերնին մեզ այնչափ չհասնիր. որ ամենապայծառ գիշերն անգամ կարելի լինի անոնց լոյսովը լուսաւորիլ եւ գործ մը տեսնել. ձէթի ճրագն, որու լոյսն ուրիշ շատ լուսատու նիւթերէն նուազ է եւ ամենեւին բաղդատութեան չդրուիր աստղերու լոյսին հետ, կրնայ մեզ ի մօտոյ բաւական լոյս տալ որով կարելի լինի մեզ մեր մութ խուցերուն մէջ աշխատիլ: Ճրագն աղօտ է բայց օգտակար. աստղերն պայծառ են, կը հիանանք անոնց լոյսի պայծառութեանը վրայ, սակայն մեր խուցերն չեն լուսաւորեր, մեզ անօգուտ են:

Ճրագ պէտք է մեզ. պայծառ լոյսով ճրագ, եւ մեր մութ խուցերուն մէջ պէտք է:

ՈՒՍՈՒՑՈՂՆԵՐ

Եւրոպոյ ամենէն աւելի լուսաւորեալ երկիրներուն մէջ անգամ, ուր ընդհանուր դաստիարակութեան սկզբունքն արդէն ընդունուած եւ ճրի դաստիարակութեան համար պէտք եղած միջոցներն պատրաստուած են, տեսնուեցաւ որ շատ ծնողք, իրենց օրական ապրուստը դիւրաւ հայթայթելու պատճառաւ, զաւակին դաստիարակութենէ կը զրկէին եւ ամենամատաղ հասակէն մարմնական ծանր աշխատութեանց կ'ենթարկէին: Կառավարութիւնն սակէ առաջ եկած դէշ հետեւանքի առջեւն առնելու համար պարտաւորեցաւ միջամտել—դաստիարակութիւնը հարկադրական հրատարակեց եւ օրէնքներ հաստատելով անհնազանդ ու անձի դիւրութիւնը սիրող ծնողք ծանր տուգանաց ենթարկել տուաւ:

Մենք Հայերն որ այժմ ոչ բարբարոս ենք եւ ոչ լուսաւորեալ, մինչ երկուքին մէջ կը տատանինք եւ օր ըստ օրէ լուսաւորեալ ազգաց կարգը մոնկու կը ցանկանք առանց նկրտելու, կրնայ ըսուիլ որ մեզ համար առ այժմ ոչ այսպիսի բռնաւորական միջոցներ գործադրելի են եւ ոչ ալ ձեռնարկելու մեծ հարկ կայ: Քանզի Հայոց մեծագոյն մասն արդէն դաստիարակութեան օգուտներն քիչ շատ զգացեր ու հասկցեր են, եւ ծնողք առ հասարակ կը ցանկան զաւակին դաստիարակել տալ, եւ շատերն եւս գովելի անձնուրացութեամբ մեծ դոճողութիւններ յանձն կ'առնուն եւ մինչ օրական պարէնէն կը կտրեն եւ իրենց զաւակաց վարժարան երթալու ծախքը կը հոգան:

Բայց ինչո՞ւ այսու ամենայնիւ դաստիարակութիւնը մեր մէջ չծաղկիր, չբարգաւաճիր եւ յուսացեալ պտուղը չտար : Պատճառն ինչպէս ըսինք եւ պիտի ալ ըսենք, մեր մէջ դաստիարակական հաստատութիւններու պակասութիւնն է : Եւ ի՞նչ է ունեցածնիս :

Իրաւ որ յարմար անուն մը գտնելը դիւրին չէ, միայն կրնայ վրստահութեամբ ըսուիլ, որ մեր ունեցածի մէկ մասն ապշարան կոչուելու արժանի է, եւ միւս մասէն ալ ի բաց առեալ գտնուած կէս զբոսորդներն եւ երբեմն վաղամուտիկ վարժարաններն, մնացորդը՝ սովիւստարան :

Անճոխ ու աղքատ ծնողք՝ որ ամէն տեղ, մանաւանդ մեր մէջ, ազգի ամենամեծ մասը կը կազմեն, ի սկզբան, ինչպէս ըսուեցաւ, մեծ զոհողութեամբ զաւակնին ոչ վերջաբան կը խրկեն, եւ մեծ համբերատարութեամբ ամէն դժուարութեանց դիմանալով տարիներ տղայոց յառաջադիմութեանն, որմէ իրենց նեղ վիճակին ապագայ ամբողջ մը կը յուսան, անձկալից ակնկալութեամբ կը սպասեն : Ասկայն ի վերջոյ մէկ կողմէ հագուստի հայթայթման տազնապն, որով եւ օր ըստ օրէ վարժարանի եւ տղայի ուրիշ ծախուց ծանրանալը, միւս կողմէ տղայի հասակի հասնելն եւ ուրիշ կողմէ ալ, որ ամենէն գլխաւորն է, տղայի բան չսովորին կամ սովորածի ալ, բարդատմամբ վատնած տարիներուն, աննշան ըլլալն, որու պատճառը ծնողք սխալմամբ իրենց զաւակաց բթամտութեանը կամ ուսման յարմարութիւն չունենալուն կուտան, կարծ՝ այս ամէնը միացեալ ծնողաց ուսման համար ունեցած սէրն ու եռանդը կը պղծեցնեն, եւ զոհողութեանց շարունակութիւնն անտանելի կ'ընեն : Ծնողք յուսահատելով զաւակնին լոջ վարժարանէ կը հանեն, եւ աղեկ կ'ընեն, եւ ստորին կարգի արհեստներու եւ ծառայութեանց կուտան :

Իմանալու է որ ոչ վարժարան յաճախող հասարակ տաղանդով աշակերտին՝ մերձաւորաբար երկու տարի պէտք է Ութ կանոն, չորս տարի Նարեկ եւ վեց տարի զբաբար Քերականութեան բայերու խոնարհումն աւարտելու : Իսկ ամբողջ Քերականութեան աւարտմանը քանի տարի պէտք է, Աստուած միայն գիտէ : Հետեւապէս երկու տարի վարժարան յաճախող աշակերտն իսկապէս ոչինչ գիտէ, չորս տարի յաճախողը հազիւ հազ կրնայ ըստ պահանջման Սաղոս տաղի եւ իւր անունը գրել, վեց տարի յաճախողը գիրք մը կարդալ առանց հասկնալու եւ գուցէ երեք մը լցնել, որն Բացի հայերէնէ առն լեզուն կրնայ համարուիլ :

Մեզ շատ օտար եւ միանգամայն անտեղի կը թուի ազգայնոց ու մանց ըրած դիտողութիւնն : որ երբ Հայ աշակերտի մը եւրոպական դպրոցի մը մէջ ըրած յառաջադիմութիւնն, եւ գիտութեանց կամ արուեստից ճիւղի մը մէջ կատարելագործիլն եւ մրցանակ տանելը պատմուէ է ետքը, պարզամտութեամբ կ'աւելցնեն : Այս նոր ապացոյց մ'է

որ Հայերն ալ այս ինչ դիտութեան յարմարութիւն ունին » կամ այս ինչը « ասով հաստատեց կրկին Հայ Ազգին մտաց կորուզը, ամէն բանի ընդունակութիւնն եւ բնածին հանճարը » :

Եթէ այսպիսի դիտողութիւն մը օտարազգի մը ընելու լինէր, առանց ուշադրութիւն դարձնելու եւ կարեւորութիւն տալու վրայէն կ'անցնէինք, բայց երբ ազգային մը կ'ընէ, մի եւ նոյն բանը չէ : Այս կարծեցեալ գովեստն ազգային հանճարին հայնոյութիւն մ'է, թշնամանք մ'է : Ինչ Պարոններն զմեզ Հայերս Վալէի Կրեմլներն կը կարծեն, թէ Աւստրալիոյ հօթենթօնէրն, եւ կամ թէ մենք Ամերիկայի գերի հնդիկներն ենք, որ ճերմակ ամերիկացիք շահասիրութենէ շարժեալ ճգնին սխալ ու անհիմն փաստաբանութիւններ յերկրել, ցուցնելու համար որ հնդիկներու ուղեղն անընդունակ է բարձրագոյն մշակութեան, հետեւապէս անկար վայելու մարդկութեան վերաբերեալ արտօնութիւններն : Այդ անհատի յաջողութիւնը, կ'ըսեն, նոր ապացոյց մ'է, որ Հայերն այս ինչ դիտութեան ընդունակութիւնն եւ այն ինչ արուեստին յարմարութիւն ունին : Եթէ այն անհատը չյաջողէր, այն ատեն միթէ՞ չհետեւիր որ Հայերն այս ինչ դիտութեան ընդունակութիւնն եւ այն ինչ բանի յարմարութիւնն չունին : Արնայ մէկը կարծել որ այսպիսի դիտողութիւն մը խոհուն ու տրամաբան մտքի ծրուանդ լինի :

Ինչ, Պարոններն կը կարծեն, որ Նարեկացոյ հրաշագան քերթուածը Քրեթելի մը ուղեղին ծնունդն է, եւ Եղիշէի անդուզական նկարագրութիւնը Հօթենթօնի մը աղճատանք : Թող խոհամիտք պատասխանեն առնոց : Մեր պինդ համոզումն այն է, որ հայ ազգի հանճարն ուրիշ ազգերու ունեցածէն ստորին չէ, եւ ոչ ալ ընդունակութիւնը պակաս : Հայ աշակերտաց ընդունակութիւնն եւրոպացի աշակերտաց ունեցածինին հետ բաղդատելու համար, պէտք է նախ երկու ազգի մանկունք մի եւ նոյն դրութեանը մէջ դնել, եւ երկուքին ալ մի եւ նոյն առաւելութիւններն կամ ապաւելութիւններն տալ : Ոչ թէ հայ աշակերտներն ենթարկել ամէն տեսակ ապաւելութեանց եւ Եւրոպացիներն առաւելութեանց, եւ այն ատեն իւրաքանչիւրի ըրած յառաջադիմութիւնը քննելով ու կշռելով Եւրոպականաց ընդունակութեանն ու հանճարին գերագունութեան վճիռ տալ :

Հայ աշակերտը կը սկսի իւր ուսական ընթացքն ոչ վարժարաններու մէջ, ապիկար դասատուներու ձեռաց տակ, որոնք ուսումն աշակերտին վերաջնկու համար զրոյի զօրութիւնն ունին, բաղմադարեան հնացեալ եւ անըմբռնելի բարբառով կամ նոր բայց անյարմար գրքերու վրայ, որոնց ամէնքն ալ անարժան են դասական գիրք կոչուելու, յոսի դրութեամբ, գէշ եղանակով եւ զուրկ այն ամէն միջոցներէ, որք ուսումն հաճելի ու գրաւիչ կ'ընեն ամէնուն, այս ամէն ապաւելու

Թիւններով կ'աշխատի խեղճ հայ աշակերտը, կը տքնի, կը ճգնի, գուն կը գործէ. բայց ի՛նչ օգուտ, խոչընդոտանքն մեծ են եւ յաղթելիք զըժուարութիւններն իր կարէն շատ վեր: Այսպէս տարիներ կը վառնուին, տղայութեան չըջանը մանկութեան՝ մանկութեանը պատանեկութեան կը փոխուի. բայց սովորածը բարդատելով վառնած ժամանակին հետ ու չինչ է: Կըզգայ աշակերտը, կը տեսնէ իւր սոգիտութիւնն եւ կը համոզուի որ գիտութիւնը սովորելու համար եւրոպական դպրոց մը պէտք է մտնել:

Ուսման հրապոյրքը զինքը կը կախարդէ, ի սէր անոր ամէն նեղութիւն յանձն կ'առնու եւ ամէն արգելքներու աշխատութեամբ համբերութեամբ յաղթելով վերջապէս կը յաջողի եւրոպական դպրոց մ'ընդունուիլ:

Սկայն ահա՛ նոր եւ մեծ դժուարութիւն մ'ալ:

Եւրոպական դպրոցի մը մէջ բան սովորելու համար, պէտք է զըզրոցին լեզուին տեղեակ լինել: Հայ աշակերտը կամ ամենեւին այն եւրոպական լեզու չգիտեր եւ կամ խիստ քիչ գիտէ. ուստի կըսկսի նորէն իւր անխոնջ աշխատութիւնն ու քննութիւնը, բայց արդեօք ո՞րքն սովորի, օտար լեզու թէ՞ գիտութիւնը. առանց առաջինին մէջ հմտանալու երկրորդին մէջ յառաջանալը խիստ դժուարին է եւ երբեմն անկարելի, եւ մինչ առաջինը քիչ շատ ձեռք բերէ եւ երկրորդին մէջ սկսի յառաջանալ, մէկ ալ կը տեսնէ որ գրական աշխատութեան տարիներն մասամբ մը անցեր, պատանեկութիւնը միջակ երիտասարդութեան փոխուեր եւ անոր հետ եկեր հասեր են սեւ սեւ հոգսերն: Այսպէս հայ աշակերտի գրական աշխատութեան յարմար ժամանակն, ամիտի միտքն եւ մարմնական կարն ու սովն, ի սկզբան ոչ վարժարաններու մէջ գրեթէ ի զուր վատնած, ապա լեզուներ սովորելու ծախած, ի վերջոյ ոչ այն ամիտի միտքն, ոչ յարմար ժամանակն եւ ոչ ալ սովորութիւնը կ'ունենայ իւր ուսումն շարունակելու. աւելցնենք անոնց ծնողաց ապրուստի կամ իւր դրամական միջոցի պակասութիւններն, իւր հակումներն եւ այլն. որոնց պատճառաւ առանց ուսումն կատարելագործելու կը պարտաւորի դպրոցէն ելլել յուսահատ:

Եւրոպացի աշակերտն պտտուած է ամէն տեսակ առաւելութիւններով. մայրենի լեզու, երկիր, վարժարան, դասատու, գիրք, զրութիւն, ամէնը մէյմէկ զիւրացուցիչ միջոցներ են իր նպատակին վաղափոյթ համնելու համար: Երբ հայ աշակերտը կըսկսի սովորիլ օտար լեզու մը, իւր մուտք գիտութեանց, եւրոպացին արդէն լեզուի ուսումն մըն աւարտած եւ գիտութեանց մէջ ալ բաւական յառաջացած է: Արդեօք կարելի է այսչափ տարբեր հանգամանքներով ուսում շարունակող

աշակերտաց ընդունակութիւնն ու յառաջադիմութիւնը կըռել ու բաղդատել:

Այսպէս հայ մանկանց մէկ մասը կարող սովորելէ բոլորովին կը զրկուի իրենց ընկույթեան տեղին եւ դրիցը պատճառաւ, մէկ մասը կը զրկուի վարժարանի մտից անբաւականութեանը պատճառաւ, որ չը կրնար որոշեալ թուէ մը աւելի աշակերտ ընդունել, մեծ մասը քանի մը տարի աշխատելէ ետքը դպրոցէ կ'ելլէ առանց բան մը սովորած լինելու, փոքրիկ մաս մ'ալ, որ ամէն տեսակ նեղութիւն ու դժուարութիւն կրելով տարիներ կը շարունակէ, այս մասն ալ ի վերջոյ ուսումը չաւարտած եւ քիչ կամ շատ թերակատար թողած, կը պարտաւորի դպրոցէ ելլելու. իսկ այն մասն որ ամէն բան—տաղանդ, հարստութիւն միջոց, դրից առաւելութիւն, աղեկ վարժարանի եւ ուսուցչի հանդիպելոյ բախտ—ունի եւ կրնայ ցանկացեալ նպատակին հասնել, այն մասնի սլ թիւը մատանց վրայ կրնայ համրուիլ:

Գ Ր Ք Ե Ր

Տիրացուներու վրայ խօսած ատեննիս՝ աշակերտաց ընթերցանութիւն սովորեցնելու համար, անոնց գործածած դասական գրքերն տեսանք. այժմ քննենք մի առ մի այն գրքերու պիտանութիւնն ու յարմարութիւնն իւր դասական գիրք:

Սկսինք հեգարանէն:

Այս հեգարանն, ինչպէս ըսուեցաւ, շատ հաւանականաբար մեր գիրը հնարողի ժամանակներն շինուեր է, եւ անկէ ի վեր կը շարունակուի, առանց ո եւ է փոփոխութիւն կրելու գործածուիլ մեր ոչ վարժարաններու մէջ, իբր առաջին գիրք ընթերցանութեան: Ոչ վարժպետը գրերու անունն աշակերտին սովորեցնելէ ետքը կ'սկսի հեգել սովորեցնել, այսպէս — բէ՛ն այ՞ բ, գէ՛ եւ՛ գէ, լե՛ն է՛ լէ, կէ՛ն ը՛ կէ, եւ այլն: Աշակերտը յարգանդէ փիլիսոփայ ծնած պիտի լինի որ այս դարտուղութեան պատճառը, թէ ի՛նչու բէ՛ն այ՞ բ կը հնչուի եւ ոչ բէ՛նայ՞ որ աւելի բնական է, իմանալ ուղէ եւ նոյնհետայն, իբր ձեր ու հմուտ փիլիսոփայ մը գրոց բուն արժէքը քննելով, անոնց գաղտնի զօրութեանց վրայ տրամաբանելով եզրակացնէ, որ ըստ անբացատրելի ու գաղտնի կանոնի մը զօրութեան, գրերն հեգլին մէջ իրենց հնչման առաջին ձայնը միայն որ է ֆ էր է եւ այլն կը պահեն եւ մնացեալն կը կորսնցնեն. հետեւապէս բէ՛ն այ՞ բ, գէ՛ եւ՛, լե՛ն է՛, կէ՛ն ը՛, որ բնաւ կանաբար բէ՛նայ՞, գէ՛եւ՛, լե՛նէ, կէ՛ն ը՛ պիտի հնչուէին ըստ վերոյիշեալ անբացատրելի ու գաղտնի կանոնի մը զօրութեան, ֆ, գէ, լէ, կէ, կը հնչուին:

Տարակոյս չկայ որ Պարոն ոչ-վարժապետներն բնութեան ամենազ-
 նիւ օժտովը դարդարուած եւ միանգամայն ի բնէ կատարեալ փիլիսո-
 փայ ծնուած լինելով այսպիսի փիլիսոփայական քննութիւն ու տրամա-
 բանութիւն անոնց բնական ու սովորական լինի, եւ եզրակացութիւնն
 ինքնարեւ հետեւութիւն. սակայն իրենց խնամոց յանձնուած աշակեր-
 տաց ի բնէ փիլիսոփայ ծնուած լինելուն վրայ մենք մեծապէս կը տա-
 րակուսինք :

Այսպէս՝ հեզի առաջին դասը դժբախտ աշակերտին համար անբը-
 բրոնելի տեսական գիտութիւն մը կը դառնայ, խոչընդոտ մը որ ուրիշ
 կերպով չկրնար անցնիլ եթէ ոչ վարժապետի ըսածը թուժակի պէս
 կրկնելով կամ բերան սովրելով :

Արդէն քսան տարի առաջ Վինետկոյ վանքը, նոր հեզարանի մը
 հրատարակութեամբ, վարժապետաց խորհուրդ կուտար հեզը դիւրացը-
 նելու համար գրերու հնչիւնը պարզել եւ հեզին մէջ փոխանակ բէ
 աբ, բէ, քէ, քէ, քէ եւ այլն ըսելու պարզագոյն հնչմամբ բէ աբ, քէ
 է՝ քէ եւ այլն ըսել : Քանի տարի առաջ ալ բանասէր մը Պոլսոյ լրագիր-
 ներէն մէկու միջոցաւ կ'առաջարկէր գրերու հնչիւնը պարզել ա, բէ,
 քէ, դա, թա եւ այլն հնչել եւ հեզել այսպէս բէ աբ, քէ է՝ քէ, դա
 բէ եւ այլն :

Առաջին գաղափարը մեզ նախամեծար կը թուի . քանզի նախ՝ որ
 ը ձայնն ուրիշ ձայներէ աւելի սուղ եւ նուազ լինելով, աւելի դիւրու-
 թեամբ կրնայ կրճատուիլ ու չըհնչուիլ Նաեւնոյն սղութեան ու նուա-
 գութեան պատճառաւ բէ աբ էն՝ ի բա, դա էն՝ ի դէ անցը աւելի դիւ-
 րին է քան թէ բէ աբ էն՝ ի բա, դա էն՝ ի դէ եւ այլն : Արդորդ բոլոր
 բաղաձայներու միակերպ ը ձայնաւորի օղնականութեամբ հնչուին ա-
 շակերտին աւելի կը դիւրացնէ ի միտ առնուլ ու հասկնալ, որ հեզին
 մէջ բաղաձայնի վերջն եղող ը ձայնը կը կրճատուի կամ չըհնչուի :

Համարենք որ Տիրացուներն բարձր հնութեան գաղափարաց մէջ
 ամբափակեալ նոր գաղափարներն կ'արհամարհեն, եւ կամ աշխարհա-
 բար գրքեր ու լրագիրներ, ոճի անվսեմութեան ու լեզուի ռամկու-
 թեան պատճառաւ, կարդալու չգիշնանելով, նոր աշխարհին եւ նոր
 գաղափարներուն անտեղեակ կը մնան : Սակայն կը հարցնենք Պոնտու
 մտտներուն, այս պարոններուն, որ ամէն բանի մէջ եւրոպացոց
 մանաւանդ Գաղղիացոց կ'ուզեն նմանիլ եւ անոնց ձեւերն զգենուլ,
 ինչու այս բանի մէջ եւս անոնց (Գաղղիացոց) չեն հաճիր նմանիլ եւ
 անոնց գրերու a, be, ce, de, e ի (1) հնչման պարզութեամբ հետեւե-
 լով մերիններու հնչումն եւս պարզել :

(1) Տե՛ս b_գիրն Պեղեոսի Dictionnaire National ին մեջ .

Եթէ ոչ-վարժապետներն չեն հաճիր այսպիսի պարզ օգտակար եւ
 միանգամայն դիւրաւ գործադրելի գաղափարէ մը օգուտ քաղել, եւ ա-
 շակերտաց հեզի համար վասնած ժամանակը կարճեցնել, հաւանական
 է որ ընդունին եւ իրագործեն այսպիսի գաղափարներ, որք թէեւ ըս-
 տոյք թէեւ օգտակար՝ սակայն ոչ վերն յիշուածի պարզութիւնն ունին
 եւ ոչ ալ գործադրութեան դիւրութիւնը :

Դառնանք հեզարանին : Բէն աբ՝ բա ին կը յաջորդեն հեզարանին
 մէջ միավանկ, երկավանկ մինչ վեց վանկ բառեր : Այս դասակարգու-
 թեանը մէջ ուրիշ բան չէ նկատուած եթէ ոչ աբ ի կարգաւ նախ մի-
 ավանկ, երկրորդ երկավանկ եւ այլն բառեր իրարու հետեւէ շարել, ա-
 ռանց միտ դնելու բառերու հեզի ու արտասանութեան դիւրութեանը
 կամ դժուարութեանն, եւ առանց պարզաձայն ու դիւրահեզ բառերէ
 սկսելով աստիճանաբար աւելի դժուարներուն անցնելու : Ոչ միայն այս
 բառերու ամէնքն ալ դրոց են եւ հետեւապէս օտար ու անընտանի
 մանկանց, այլ եւ միջերկին այնպիսիներն կան, զորս երեխայոց ան-
 վարժ լեզուն բաւական չէ արտասանելու, եւ այնպիսիներն եւս, ո-
 ռոնց նշանակութիւնը մինչ անգամ ոչ-վարժապետներէն շատերուն ան-
 ծանօթ է :

Ինչ պէտք է որ երեխայք ադդ, ճեճեճ, բաբեճեճաճաճ, ալեադա-
 դաճաճաճ բառերու հեզը սովրին : Արդեօք այդ բառերն իրենց խօսակ-
 ցութեան մէջ կրնան գործածել, կամ արդեօք անոնց նշանակութիւնը
 կրնան հասկնալ, արդեօք ատոնք դրոց մէջ խիստ գործածական են
 արդեօք տարին քանի՞ անգամ աշակերտք այդ բառերն ոչ-վարժապե-
 տաց բերնէն կը լսեն :

Նրբ բառ մը՝ որու նշանակութիւնն աշակերտը տակաւին անբա-
 ւական է ըմբռնելու, բառ մը՝ որ իր խօսակցութեան ու սովորական
 բացատրութեանց անհրաժեշտ չէ, բառ մը որ ուրիշներու բերնէն պի-
 տի չլսէ եւ դրոց մէջ անգամ անոր յաճախ պիտի չպատահի, ի՞նչ օ-
 գուտ է աշակերտին այն բառի արտասանութիւնը սովրիլ փութալ :

Վերջին տարիներս շատ մը հեզարաններ իրարմէ քիչ շատ տար-
 բեր երեւցան : Սակայն կը համարձակինք անվարան ըսել որ ասոնց ա-
 մէնքն ալ, քննութեան առնելով պարունակած բառերին եւ հեզի ու
 ընթերցանութեան նիւթերին, որոնք անբացառաբար առանց աղէկ ու
 բանաւոր ընտրութեան, յարմարութեան, դասակարգութեան ու յա-
 ռաջատուութեան են, ասոնց ամէնքն ալ, կ'երկրորդենք, մեծաւ մասամբ
 կը նմանին վերն յիշած հեզարանին, եւ հետեւապէս բոլորովին անյար-
 մար են ընթերցանութեան առաջին գիրքը լինելու :

Հեզարանին կը յաջորդեն ընդհանրապէս Մէկ կանոն եւ Ութ կա-
 նոն Սաղմոս եւ ետքէն Աւետարան ու Գործք Աւաքելոց :

Միթէ զարմանալի բան չէ՞, որ մենք ժառանգելով բոլոր անցեալի

զիտութիւնն ու փորձառութիւնն, եւ ապրելով այսպիսի լուսաւորեալ դարու մը մէջ, տակաւին հիներու կամ մեր նախնեաց, որք խաւար դարերու մէջ կ'ապրէին, եւ զուրկ էին մեր ունեցած անչափ առաւել լութիւններէն, ոչ հմտութիւնն ունինք եւ ոչ ալ փորձառութիւնը։ Մեր նախնիք Սաղմոսն ու Աւետարանն ընտրեւ եւ իբր երկրորդ ու երրորդ գիրք ընթերցանութեան։

Եւ ինչո՞ւ։

Քանզի Սաղմոսն ու Աւետարանն այն ժամանակներն գտնուած ուրիշ գրքերէն աւելի պարզ էին։ Քանզի Սաղմոսն ու Աւետարանն եւ կեղեցական ամէնօրեայ գործածական գիրք լինելով, ուրիշ ամէն գրքերէ աւելի շատ ընդհանուր էին ժողովրդեան մէջ, ուստի եւ աւելի զիւրաւ ձեռք կը բերուէին։ Քանզի ժողովուրդը թէ եկեղեցւոյ մէջ եւ թէ դուրսը, ուրիշ գրքերէ աւելի Սաղմոսի ու Աւետարանի խօսքերն կը լսէր, որով եւ անոնց պարունակած բառերուն եւ ոճին աւելի ընտանի էր։ Քանզի այն ատեններն ժողովուրդը գրեթէ գրաբարսման կը խօսէր եւ գուցէ մեզմէ աւելի գրաբար կը հասկնար։

Այսօր քանի որ լեզու, ուսմունք, գաղափարք, ամէն բան փոխուեր է եւ ուրիշ վիճակ ու դրութիւն ստացեր, ինչո՞ւ հնացեալ դասական գրքերն չ'իմսենք եւ մեր արդի լեզուին, ուսմանց ու գաղափարաց յարմար գրքեր չ'յօրինենք։

Սաղմոս ու Աւետարանին կը յաջորդի Նարեկ։

Ահա՛ գիրք մը՝ որու համար Տիրացուներն եւ իրենց նմաններն այսպէս կը խօսին — Նարեկը մեր բոլոր գրքերէն ամենախրթինն է։ ասոր դասառութեամբը միայն աշակերտներն քաջ ընթերցանութեան կը վարժուին։ ասիկայ աշակերտի միտքը կը սրէ։

Ի՞նչ սխալ գաղափար, եւ ի՞նչ տգիտութիւն, մարդկային մտաց գարգացման մասին։

Մենք կ'ըսենք, եւ տարակոյս չունինք որ ամէն խոհական վարժապետներն մեզ հետ միաբանին, որ ընդհակառակն՝ ընթերցանութեան վարժութեան համար, Նարեկ դաս առնելն աշակերտի միտքը կը խանգարէ, աւելի կը բթացնէ, եւ փոխարէն զգալի օգուտ մը ընծայելու ասպիսի վնաս մը կը հասցնէ, որ մինչ անգամ յետագայ ինամբ ու ջանք չեն կրնար բոլորովին արմատախիլ առնել։

Նարեկն այնպիսի շարագրութիւն մ'է, որու ամենապարզ բառերով անգամ բազկացեալ խօսքին միտքն աղէկ բացատրելու համար տակաւին քիչ վարժապետներ ունինք անոր մէջ գտնուած բառերուն հազարէն մէկն աշակերտին ընտանի չէ, եւ եթէ դիւրիմաց կամ ընտանեկան բառ մ'ալ գտնուի՝ այն եւս այնպիսիներու քով դրուած է որ գանձիկայ բոլորովին նոր բառ մը կը ցուցնեն եւ իմաստն անիմանալի կ'ընեն, այս պատճառաւ այս գիրքը նորավարժ աշակերտին համար

գրեթէ ուրիշ լեզուով գրուած կ'երեւնայ։ Վարժապետն որ միայն ընթերցանութեան վարժեցնել կ'ուզէ, ամէն օր կը պատուիրէ աշակերտին իւր համարն շատ անգամ քաղել։ Ուստի խեղճ տղայն կը քաղէ, կ'երկրորդէ ու դարձեալ կը կրկնէ, բոլոր ճիգը կը թափէ բառերն իրարու ետեւէ արագ արագ արտասանելու։ Կարգայ սովորու առաջին օրէն, աշակերտի ամէն ջանքը, բոլոր ու անբաժան ուշադրութիւնը միայն բառերու արտասանութեանն ուղղուած ըլլալով, աշակերտի միտքն ալ քիչ քիչ կը վարժուի կարգացածի իմաստին բոլորովին անմտադիր՝ եւ միայն արտասանութեանն ուշադիր լինել։ Թարինքը այսպէս շարունակելուն պատճառաւ, վարժութիւնն ընտել սովորութեան կը փոխուի։ Նարեկի, այս ամենախրթին՝ հետեւապէս աշակերտին ամենասակաւ ըմբռնելի գրքի, ընթերցանութեամբն ու յաճախ քաղելուովն, այն սովորութիւնն այնչափ կը հաստատուի որ կարծես բնաբոյս տրամադրութիւն կամ երկրորդ բնութիւն կը դառնայ, եւ ալ այնուհետեւ անոր համար կարգացածի արտասանութեանն եւ միանգամայն իմաստին ուշադրութիւն ընկն անսովոր ու դժուարին բան մը կը թուի։ Եթէ այսպիսի մէկուն երես մը ամենապարզ շարագրութիւն կարգալ տալէն ետքը հարցուի թէ, կարգացածն ի՞նչ նիւթի վրայ էր եւ ի՞նչ կը պարունակէր, ան երբէք որոշ պատասխան մը չկրնար տալ, եւ երբեմն մինչ անգամ խօսք մը չկրնար յիշել։

Ահա՛ Նարեկ կամ ուրիշ գրաբար խրթին գիրք կարդալու մէկ վընասը, վնաս մը՝ որ, ինչպէս ըսուեցաւ, յետագայ հոգատարութիւնն անգամ չկրնար բոլորովին արմատախիլ ընել, վնաս մը՝ որ մարդս թանձրամիտ ընելու միջոցներուն մէջ առաջին կարգի տեղ կը բռնէ։

Արդեօք հաւանական է՞ որ առանց ըմբռնման ընթերցանութիւնը մարդուս միտքը զարգացնէ։

Ո՛չ։ Քանզի մտաց զարգացումը զանազան գաղափարաց համբարու ունելովը, կամ ուղեղին վրայ, որ մտաց գործարանն ու ծննդարանն է, տպաւորուելովը կը լինի, առանց որու մտաւորական զարգացում մը անկարելի տեղի չունենար։

Ամենախոշոր կտուէ սկսեալ մինչ մետաքսեայ ամենազինե կերպար հետզհետէ հազար անգամ ներկերու վրայ է առանց դպցընելու անցուր։ արդեօք անցուցած կտորն գոյն մը կը ստանայ. ո՛չ, ամենեւին ո՛չ։ Նոյնպէս ալ գիրք մը առանց հասկնալու հազար անգամ կարդա. արդեօք անոր միջի պարունակեալ գաղափարներն ուղեղիդ վրայ տպաւորութիւն մը կրննն, զգացումներդ կը շարժեն. ո՛չ, ամենեւին ո՛չ։ Կտորն գունաւորելու համար պէտք է զայն ներկին մէջ թանալ. միտքը զարգացնելու համար պէտք է գաղափարներն ուղեղին վրայ տպաւորել։

Արք՝ որչափ կտորն աղէկ լինի եւ որչափ ներկն ազնիւ, նոյնչափ

ալ կտորի ստացած գոյնը գեղեցիկ ու պայծառ կը լինի, եւ որչափ ներկը կտորին մէջ լաւ թափանցէ, կամ որչափ կտորն ներկին մէջ շատ անգամ թրջուի, այնչափ ալ կտորի գոյնը սուղուն ու անթափ կը լինի:

Նոյնպէս եւս որչափ ուղեղը սուր ու զօրաւոր լինի, եւ որչափ անոր ներկայացած գաղափարներն դիւրըմբռնելի լինին ու շատ անգամ կրկնուին, այնչափ ալ անոր ստացած սովաւորութիւնն արագ, խորին ու անջինջ կը լինի, եւ որչափ այս գաղափարներն ընտիր ու գեղեցիկ լինին, այնչափ ալ ուղեղի արտադրելիք նոր գաղափարներն աղնիւ ու ընտիր կ'լինին:

Պօստուրու մօտենալու նախնական դասական գրքերուն վրայ դիւրին չէ ի մասնաւորի խօսիլ. քանզի, ինչպէս որ առաջ ալ ըսուեցաւ, սորա ընթերցանութիւն սովորեցնելու համար որոշ դասական գրքեր չունին. սակայն կրնայ ըսուիլ, որ քանի որ ասոնք ալ աշակերտի բուր ու շարժութիւնն ու ժամանակը միայն բառերու արտասանութեանը կը դարձնեն ու կը վառնեն, ասոնց գրքերուն ալ այս կէտին մէջ, աշակերտին մատուցած դիւրութիւնն ու օգտակարութիւնը վերն յիշածներէն շատ գերազանց չեն կրնար լինիլ:

Նարեկին կը յաջորդի Քերականութիւն:

Տիրացուներն ու Պօստուրու մօտենալու որ մինչ այժմ դասական գրոց ընտրութեանը մէջ մասամբ իւրիք չէին համաձայններ, Քերականութեան ընտրութեանը մէջ կը միաբանին. երկուքն ալ գրաբարն կ'ընտրեն, եւ զան սորվեցնելու համար եւս մի եւ նոյն եղանակը կը բռնեն:

Մեր ոչ—վարժապետներն Մօլիերի Թարթիւֆին մէջ նկարագրեալ Մատամ փեռնելին կը նմանին: Ինչ որ ընեն, ասոնք իրենց գաղափարներն ու դրութիւնը չեն փոխեր: Եթէ բոլոր Եւրոպա Հայոց շատերուն հետ միացեալ ըսէ թէ մենք դարաւոր ու բազմազան փորձերով տեսանք որ մեռեալ լեզուներն յարուցանել անկարելի է, գրաբարն ալ մնած է եւ այտուհետեւ յարութիւն չառնուր: Ոչ վարժապետներն կը պատասխանեն, գուցէ մեր գրաբարն կը քնանայ: Եթէ Եւրոպա կրկնէ, երդնու թէ մենք դարեր աշխատեցանք, յոգնեցանք, ամէն ճիգ թափեցինք այդ քնացեալներէն մէկն արթնցընելու՝ բայց հնար չեղաւ: Ոչ—վարժապետներն դարձեալ կը պատասխանեն. « Աշխատութիւն յողթող է ամենայնի », թողէք գոնեա զար մ'ալ փորձենք, աշխատինք Թերեւս մերն արթնայ ու յառնու: »

Պարո'ններ, ի զուր մի՛ աշխատիք, ձեր խնամոց յանձնեալ տարաբաղդ աշակերտաց ժամանակն, ուղեղը, կեանքը չարաչար մի՛ վատնէք: Այն գրաբարն, որով Նգնիկի, Նղիշէի, Մովսէսի խօսքն ու ասութիւնը կը հասկնաք, մեռեր է եւ տասն երեք դարէ ի վեր գերեզման իջեր. այդ մեռելի միսը զինքը բաղկացնող ամէն մասերովն ու գործարաններովը փտեր, հող է դարձեր, եւ կմախքն, ոսկորներն սու-

փերու մէջ իբր Սուրբ Նշխար պահուեր են: Կը յուսամք որ Նգնիկ, Մովսէս, Նղիշէ յարութիւն առնուն, գրաբարի յարութիւնն ալ յուսանցէք: Ո՛չ, եթէ այդ Սրբազան անձինք յարութիւն ալ առնուն, չպիտի կարենան գրաբարին կենդանութիւն տալ եւ պիտի պարտաւորին մեր արդի աշխարհաբարն սովորիլ ու խօսիլ: Ոչ միայն սա, այլ եւ մինչ անգամ հրաշալի հրաշքով մը հինգերորդ դարու Հայերն իրենց բոլոր գաղափարներովը մէկէն յարութիւն առնուն, դարձեալ գրաբարն յարութիւն չառնուր, եւ ընդհանուր ժողովուրդի ընտանի ու գործածական լեզուն չդառնար. հասարակաց խօսածը, նոր աշխարհի նոր գաղափարաց պահանջմանը պատճառաւ, նոր լեզու մը կամ առ առաւելն գրաբարանման մը կրնայ դառնալ:

Եթէ հինգերորդ դարու Հայերն ամէնքն ալ Նգնիկի, Մովսէսի ու Նղիշէի պէս կը խօսէին, այն ատեն պիտի ըսենք, որ Նգնիկ, Մովսէս, Նղիշէ խիստ հաստադուլի մարդիկ էին, որ մէկը տարիներ Նդեսիա ու Բիւզանդիոն, միւսն Էջմշած տարիէ աւել Նդեսիա, Բիւզանդիոն, Անտիոք, Աթէնք, Հռոմ եւ Աղեքսանդրիա, գիտութեան ու գրականութեան այն կեդրոններն, եւ երրորդն ալ իւր բոլոր կեանքն առանձնութեան մէջ, ուսման թարգմանութեան ու սրբազան ընթերցուածոց նուիրելէ ետքը, դարձեալ ամէնքն ալ իրենց համագիւղացիներու գաղափարներն ունէին եւ անոնց լեզուն կը խօսէին ու կը գրէին:

Հասարակաց գրաբար խօսիլ սովորիլը մեզ յուսալի չէ:

Թերեւս ոչ—վարժապետներէն ոմանք ըսեն թէ աշակերտաց գրաբար հասկնալ ու գրել սովորեցնելու համար գրաբար քերականութիւն դաս կուտանք:

Կը հարցնենք նախ, որո՞ւ համար գրաբար պիտի գրեն այդ աշակերտներն՝ կենդանեաց թէ մեռելոց. եթէ կենդանեաց՝ արդէն կը տեսնենք որ կենդանիներն այդ լեզուով չեն խօսիր, քանի որ չեն խօսիր, չեն ալ հասկնար, հետեւապէս ինչո՞ւ կը ծառայեն այդ գրաբար գրելիքներն:

Գուցէ ըսնն անոնց համար որ գրաբար սովորեր են եւ կը հասկնան:

Ո՞րքան է այդ գրաբար հասկըցողներուն թիւը:

Ամէն վտանգութեամբ կրնայ ըսուիլ որ իւրաքանչիւր հարիւր աշակերտէն, որք կարողալ սովորիլ կը սկսին, հազիւ մէկն այնչափ կը յառաջանայ, որ կարենայ գրաբար հասկնալ. եւ այս յառաջացողներէն կէսն այնչափ չմտանար որ կարենայ գրաբար գործք մը շարադրել: Եթէ այս ըսածնիս մէկու մը տարապայման ու անհաւանական թուի, թող հաճի վայրկեան մը ուշադրութիւնը հետեւեալ հաշուին դարձնել: Մենք ազգ մ'ենք չորս միլիոն թուով. համարենք որ մեր մէջ հարիւրին վեցն, որ է երկու հարիւր քսուասուն հազարն, կարողալ

սովորել կը սկսի . այդ եթէ իւրաքանչիւր հարիւր աշակերտէն Քնն այն-
 չափ յառաջանայ , որ կտրենայ գրաբար հասկնալ , այն ատեն պէտք է
 որ երկու հազար չորս հարիւր գրաբար հասկցող գտնուի մեր մէջ , կայ ,
 կը գտնուի . եւ եթէ այս թուոյն կէան այնչափ հմտանայ որ գործք մը
 շարադրել կարող լինի , այն ատեն պէտք է որ հազար երկու հարիւր գը-
 րաբար շարադրող հեղինակ ունենանք , ունինք ունինք այս թուոյն
 կէտը՝ մինչ անգամ մէկ քառորդն , ունինք . եթէ ունինք , ո՛ւր են գործ-
 քերնին :

Աջքերնիս գոցենք թուոյն վրայ եւ ըսենք , որ երկուքէն ալ նոյն-
 չափ ունինք : Արդ գրաբարագէտ լինելու համար պէտք է մէկը տա-
 րիներ գրաբար ընտիր դրուածոց վերծանութեանը պարապի , եւ իր մը-
 տաւորական մտունդն անոնցմէ առնու : Մեր գրաբար գրուածոց պա-
 րունակութիւնը շատերուն յայտնի է , եւ անոնցմով սնեալ միտք մը՝
 ինչ զարգացում եւ ինչ տեսակ գաղափարներ կրնայ ստանալ , դիւրին
 է երեւակայել : « Հին լեզուի ոյժն ու գեղեցկութիւնը վատըկելու եւ
 « արդեամբ ցուցնելու համար , իրաւամբ ըսեր է Հ. Ա. Այսրնեան ,
 « անոր գործածողը պէտք է որ ինքզինքն ուրանայ , նոր գաղափարը ,
 « անձնական ճաշակը , եւ այլն . եւ շատ ճշդիւ ու շատ ակնածութիւն-
 « ներով հին հեղինակներու գաղափարոյն ըլլայ առանց իր անձին կամ
 « ժամանակին վրայ հեղինակութիւն մը ճանչնալու . միով բանիւ՝ ինք
 « զինքը հին աշխարհք փոխադրէ , այնպէս որ կարենայ թէ՛ հին թէ՛ նոր
 « աշխարհք միանգամայն խաբել : »

Այսպէս ոչ-վարժապետներն կը դատապարտեն երկու հարիւր հա-
 զար աշակերտ , հարիւր , երկու հարիւր հնասնունը հեղինակ յառաջ
 բերելու , եւ մէկ երկու հազար ալ գրաբար հասկցող , որ առաջիննե-
 րու գրածներն կարդան եւ ազգը լուսաւորեն : Ասիկայ տամբիններորդ
 դարն անցեալ խաւար դարերու գաղափարներովը լուսաւորել է :

Միթէ այս յիմարութիւն չէ :

Թերեւս ոչ-վարժապետներն ըսեն թէ գրաբար քերականութեան
 դասատուութեամբ կ'ուզենք աշակերտաց աշխարհաբար սովորեցնել
 կամ անոնց խօսած աշխարհաբարն մաքրել ազնուացնել :

Տեսնուեր լսուեր է՞ որ լեզուի մը կանոններն սովորելով մէկն ու-
 րիշ լեզուի մը մէջ կրթուի : Երաւ է որ աշխարհաբարն գրաբարի սե-
 րունդն է , զաւակն է . սակայն նոյնպէս են եւս իտալերէն , գաղղիե-
 րէն եւ սպանիերէն լեզուներն , լատիներէնի հետ ունեցած արեւակցու-
 թեան նկատմամբ :

Արդեօք այսօր երէք կը տեսնուի՞ որ սպանիացի , գաղղիացի կամ
 իտալացի մը իւր իւր մայրենի լեզուն սովորելու կամ խօսելու համար
 նախ լատիներէնին պարապի : Քանի որ այնչափ մեծ ու լուսաւորեալ
 ազգեր չեն ըներ , պէտք է՞ որ մենք ընենք :

Այս ըսածներէս հետեւցնելու չէ , որ մենք գրաբարն կ'ատենք կամ
 գրաբարի իսպառ բարձմանն ու ջնջմանը ցանկացողներուն համախոհ
 ենք : Ոչ , հետի մեզմէ այդպիսի խորհուրդ : Նա որ գրաբարն չսիրեր ,
 Ազգի պարծանաց մէկ նշանաւոր առարկան չսիրեր , Ազգի անցեալը
 չսիրեր : Ով որ Ազգի անցեալը չսիրեր , ապագայն չսիրեր , եւ եթէ ոչ
 անցեալը կը սիրէ եւ ոչ ապագայն , անտարակոյս Ազգը չսիրեր :

Որ ինչ մենք կ'ըսենք , կը կրկնենք ու կը սնդենք , այն է , որ ման-
 կանց ուսումն գրաբարով , անոնց անըմբռնելի լեզուով , սկսիլը տգի-
 տութիւն մ'է մարդկային մտաւորական կարողութեանց զարգացման
 օրինացն ու եղանակին , արդեւք մ'է , եւ մեծ՝ հասարակութեան դիւ-
 րաւ ու փութով դաստիարակուելուն , եւ ամէն աշակերտի անխորա-
 բար գրաբար քերականութիւն սովորեցնելը ժամանակի ու աշխատու-
 թեան զուտ կորուստ մ'է , միով բանիւ կը համարձակինք ըսելու որ
 ոչ-վարժապետաց բռնած ուսուցչական ընթացքը յիմարութիւն է եւ
 երիցս :

Քերականութիւնը լեզու մը խօսիլ ու գրել չսովորեցներ , այլ մի-
 այն կը սովորեցնէ արդէն խօսածն ու գրածն ինչ կերպով ուղղել , այ-
 սինքն բառերն ինչպէս փոփոխել ու շարադրել , որ անոնց ձեւերն ու
 շարադրութիւնն այն լեզուն գործածողներու մեծագոյն ու ընտիր մասի
 խօսածին ու գրածին համեմատ լինին : Այսպէս քերականութիւնն ի
 սկզբանէ անտի կը պահանջէ , որ մէկը լեզուն կարենայ խօսիլ ու մա-
 սամբ իւրք գրել , որպէս զի անոր ըսածներն ու գրածներն կանոններու
 միջոցաւ չտիկէ , եւ մեծագոյնի սովորութեամբ հաստատեալ ընտիր օրի-
 նացը համեմատ ընէ , եւ այս փոփոխութեանց ալ պատճառներն տարով
 ու բացատրելով :

Քերականութիւնը տեսական կամ լաւ եւս տրամաբանական գի-
 տութիւն եւ միանգամայն գործնական արուեստ մ'է : Գիտութիւն եւ
 արուեստ իրարու հետ այնչափ կից ու անբաժան են , ինչպէս միտք ու
 մարմին : Առանց առաջինին երկրորդն էակ մ'է անխոհ , գոյ մ'է անշարժ
 առանց երկրորդին՝ առաջինն էակ մ'է անշօշափելի , ոգի մ'է աներեւոյթ :
 Արդ որպէս զի քերականութիւնն ըմբռնուի , սովորուի , ըսենք հասա-
 րակաց ասացուածով Տրուի , պէտք է որ նախ մարմինն , այն անխոհ
 էակն , երկար ատեն շօշափման տակ ձգուի , որպէս զի անոր անդա-
 մոց չըջըմամբն , անդամահատութեամբը՝ մտքին , այն աներեւոյթ ոգ-
 ւոյն ծանօթութիւնն ստացուի :

« Լեզուի մը գրականութիւնը , կ'ըսէ Քէսել իւր « Գաստիարակ ժո-
 դովրդեան » (1) գրքոյկներուն մէջ , գործարանական կեանք մ'է որու օ-
 րէնքներն քերականութիւնը պէտք է սովորի ու բացատրէ : Լեզուի մը

(1) Casselle Popular Educator . part I :

քերականութիւնը մինակ կանոնաւոր բացատրութիւն մ'է, նոյն լեզուի շարադրութեանը մէջ դիտուած օրէնքներուն : Հետեւապէս լեզուի մը գրականութեան ծանօթութիւնը պէտք է քերականութեան ուսմանէն առաջ ստանալ : Յիրաւի լեզուի մը արդարութիւններն քերականութեանէն խիստ յառաջագոյն են : Մարդիկ իմաստներ արտասանեցին, ատենաբանութիւններ ըրին, բանաստեղծութիւններ շարադրեցին ու երգեցին այն կանոնաց լրաց, որոնցմով քերականութիւնը կազմուեր է, գաղափար ունենալէ շատ առաջ » :

Ուստի ըստ մեզ աշակերտներն քերականութեան, ոչ թէ գրարար այլ աշխարհարարին անդամ մերձենալէ առաջ, պէտք է աշխարհարար լեզուին ընտելանան գործածական բառերու նշանակութիւններն սովորելով, պարզ գրքեր մեկնելով, զանոնք գրաւոր կերպով իրենց խօսած լեզուին վերածելով ու դարձեալ նորէն սկզբնականին դարձնելով եւ վարժապետի թելադրութեամբը կամ նիւթեր տալովն առակներ, վէպեր ու կարճ պատմութիւններ շարադրելով . աշակերտներն այսպիսի վարժութիւններով այնչափ պէտք է յառաջանան որ մինչ անոնց մտաւորական հասողութիւնը քերականութեան կանոններն ղիւրաւ ըմբռնելու եւ մասամբ մը եւս այն կանոններու ուսման պէտքն զգալու, աստիճանին հասնէ : Այս ամենէ ետքն աշակերտներու ձեռքը քերականութիւն տալու է, եւ այն ատենն ալ գլխաւորաբար դործնականին պարապեցնելով տեսականին կամ տրամաբանականին ընտելացնելու, եւ կամ արուեստը գործել տալովը կանոններուն վարժեցնելու է : Առանց այս ամէն պայմաններն լցնելու քերականութեան ուսումն, դարձեալ կը կրկնենք, անօգուտ է եւ ժամանակի կորուստ :

Գծադրութիւնն արուեստ մ'է եւ քերականութեան պէս ենթակայ մասնաւոր կանոններու . սակայն գծադրիչք առաջ անոր կանոններն չեն աւանդեր աշակերտաց ու ետքէն մատիտ ու վրձին տան ձեռքերնին որ ըստ կանոնի գծադրեն, այլ նախ մատիտը կ'ուտան աշակերտաց որ գիծեր քաշէ, երեսներ մրտէ եւ կտքէն անոնց կը բացատրեն կանոններն եւ գծադրելու եղանակն ու ձեւերն մի առ մի :

Բայց ոչ—վարժապետը հակառակ այս ամէնուն, հակառակ ամեն բանաւոր սկզբանց, առանց որ եւ է նախապատրաստութեան կրակին քերականութեան դասատուութիւնն, որու ուղղելիք լեզուն բոլորովին աշակերտաց անձանօթ է . եւ այսպէս կը ստեն քերականութեան բուն սահմանին : Հաւանակա՞ն է որ աշակերտներն չիմացած լեզու մը շրտկեն :

Աշակերտներն, որոնց մէջէն շատերն մինչ անգամ ամենապարզ գիրք մը հասկնալու անկարող են, չեն կրնար քերականութեան կանոններու վրայէն անցնիլ եթէ ոչ զանոնք գոց ընելով եւ վարժապետին առջին առանց ամենեւին հասկնալու թութակի պէս կրկնելով :

Վարժապետն աշակերտաց կը պատուիրէ դասին մէջ աւանդուած իւրաքանչիւր կանոնին համեմատ պարբերութիւններ շարադրել : Աշակերտք, որ բառերու արտասանութենէ զատ ուրիշ բան չեն սովորի ու չեն գիտեր, եւ որոնց արդեամբ անկարելի է իրենց գլխէն բան մը շարադրել, ճարահատեալ կը դիմեն իրենց կարգացած Սաղմոսին, Աւետարանին եւ կամ ուրիշ գրարար գրքի մը, եւ անոնց մէջ դասի կանոնին կարծեցեալ յարմար պարբերութիւն մը գտնելով կ'օրինակեն, եւ բառերու մէկ քանին փոխելով կը ներկայացնեն վարժապետին, ան ալ կը սրբազրէ : Աշակերտք տարիներ այսպէս պարապելով կ'աւարտեն քերականութիւնն . ոչ, անոր երեսներն մի առ մի կը դարձնեն : Սակայն քանի որ ամէնքն ալ միայն գոց ընելով կը յառաջանան, օտար չէ տեսնել որ հասարակ տաղանդով աշակերտներն, որք ընդհանրապէս ամէն տեղ ուսանողաց մեծագոյն մասը կը կազմեն, մինչ քերականութեան երկրորդ մասն աւարտեն, առաջինն արդէն մեծաւ մասամբ մոռցած են եւ երբ առաջինը քաղելու կամ նորէն սովորու պարապին՝ երկրորդը կը մոռնան : Այսպէս քերականութիւնն այնպիսիներու համար անուսանելի եւ անաւարտելի գիրք մը կը դառնայ :

Նորովարժ աշակերտաց առ հասարակ ճարտասանութիւն դաս տալու սովորութիւնն երկար ատենէ ի վեր եւրոպական դպրոցներու մէջ զարդեր է . միայն բարձր դասարաններու մէջ մասնաւոր աշակերտաց համար պահուած է, որք կ'ուսնին զան ատանձին նպատակի մը համար կամ իբր մասն գրականութեան : Իսկ մեր մէջ ճարտասանութիւնն ըստ հին սովորութեան անմիջապէս կը յաջորդի քերականութեան, եւ ամէն քերականութիւն աւարտող աշակերտ անխտրաբար կը պարապի անոր ուսմանը :

Այս գրքին արժանացողներն խիստ սակաւաթիւ լինելով, հարկ չենք տեսներ ասոր վրայ երկարօրէն խօսիլ . միայն այս կ'ըսենք որ մեր տեսած քերականութիւն աւարտող աշակերտներն ճարտասանութեան ողբոյն համեմատ Սաղմոսի, Աւետարանի, Աստուածաշունչի խօսքերն, շատ անգամ քերականութեան միջի օրինակներն եւ երբեմն նոյն իսկ ճարտասանութեան օրինակներն փոփոխելով, փոխադրելով, ընդլայնելով եւ ալքաբանելով կը ճարտասանեն եւ վարժապետաց կը ներկայացընեն առ ի սրբագրութիւն :

Հոս վայրկեան մը կանգ առնենք եւ աչքերնիս ձգենք այն աշակերտաց վրայ՝ որ գրարար քերականութիւնն աւարտելու կամ գոց ընելու գժբախտութիւնն ունեցեր են :

Արդեօք « քը սկսած օրէն մինչ քերականութեան աւարտումն քանի տարի վատնուեցաւ » 8 . 10 . 12 թէ 14, եւ արդեօք այս երկար միջոցին մէջ աշակերտք ինչ սովորեցան, Գրեթէ ոչինչ, Գրեթէ ոչինչ կ'ըսենք մենք ու կը կրկնենք անվարան, երբ անոնց վասնած ժամանակը :

նակը սովորածին հետ կը բաղդատենք : Աշակերտաց տղիտուժիւնն անհերքելի ապացոյց ու կենդանի վկայ է այս մեր ըսածին : Երկրայողներն թող դիմեն անոնց եւ հարցնեն — քանի՞ տարի վարժարան յաճախեր էք եւ ի՞նչ դիտէք — սոտացած պատասխաններն թոյմաներն անգամ պիտի հաւնեցնէ :

Եւրոպացի աշակերտաց մեծագոյն մասն, որք Տ տարիէ աւելի ուսման չեն կրնար պարապիլ, դպրոցէն ելած ատեններն ոչ միայն իրենց մայրենի լեզուին մէջ, այլ նախուսանելեաց մէջ եւս, ինչպէս ազգային, Սուրբ Գրոց ու ընդհանուր պատմութեանց, թուաբանութեան եւ աշխարհագրութեան մէջ աղէկաւ յայացած են, եւ բաւական տեղեկութիւն ալ ստացեր են երկրաչափութեան, ալձևայրայի, Ֆիզիքական ու մարդակազմական գիտութեանց եւ օտար լեզուի մը վրայ : Իսկ մեր ութ տարի ուսման պարապող աշակերտներն, զիբք մը թէ գրաբար թէ աշխարհաբար լաւ չեն հասկնար, պարզ ու անսխալ նամակ մը թէ գրաբար թէ աշխարհաբար չեն կրնար գրել, թուաբանութեան մէջ դիտցածնին չորս նախնական գործողութենէ անդին չանցնիր, քրիստոնէականէն չորս-հինգ երես հազիւ գոց դիտնն եւ գուցէ աշխարհագրութենէ ալ երկու-երեք երես սովբեր են :

Եւ ինչո՞ւ այսչափ մեծ տարբերութիւն Հայ աշակերտաց եւ եւրոպացուց մէջ . մի՞թէ Հայոց մտաւորական կարողութիւններն այդչափ վար են :

Մենք արդէն ըսեր ենք ու դարձեալ կը կրկնենք, որ Հայոց մտաւորական կարողութիւններն եւրոպացիներինէն ստորին չենք կարծեր : Ուրեմն ի՞նչ է այս մեծ տարբերութեան պատճառը :

Ասոր պատճառը կը կրկնենք գարձեալ, դասական դրոց չըութիւնն, եղածներու անյարմարութիւնն, ուսուցման եղանակի վատթարութիւնը, աշակերտաց անխմանալի կամ ոչ-մայրենի լեզուով ուսում սկսիլ տալն եւ վարժապետաց անհմտութիւնն կամ լաւ եւս ստիեատութիւնն է : Մեզ համար Հայ աշակերտաց բան չսովբիլն դարձանալի բան մը չէ . զարմանալին այն ատեն պիտի լինէր, որ արդի հանգամանքներովն ուրիշներու չափ բան սովբէին :

ՎԱՐՎԱՐԱՆՆԵՐ

Ո՞վ որ հայաբնակ տեղերն ճամբորդէ, պիտի տեսնէ, որ ո՛ւր Հայ կայ, հոն կայ եւս եկեղեցի մը, եւ ո՛ւր կայ եկեղեցի մը, անոր կից կամ մերձակայ կայ շէնք մը յատկացուցած մանկանց ուսման, որ վարժարան, դպրոց, ուսումնարան կամ ճեմարան անունը կը կրէ : Այս անուններն ոչ թէ նոյն հաստատութեանց մէջ աւանդուած ուսմանց հա-

մեմատ կը սրուին, այլ յաւէտ շինութեանց մեծութեան կամ գեղեցկութեանը համեմատ կը յարմարցուին :

Ընդհանրապէս խօսելով մեր ուսումնական հաստատութեանց շէնքերն աւելի աղէկ վիճակի մէջ են քան թէ անոնց մէջի պարունակեալ ուսմունքն, եւ յիշուի երբեմն ալ շինութիւնք պահանջածէն աւելի գեղեցիկ կամ բազմածախ են . որով կը ստուգեն ռամկական առածը . « գմբեթը մեծ, սակայն ուխտատու չէ » : Այս տարօրինակութիւն մ'է, որ թերեւս միայն մեր մէջ կը տեսնուի, եւ ասոր հակառակն, այսինքն գաստիարակութիւնը վարժարանաց շէնքերէն աւելի աղէկ վիճակի մէջ լինելը աւելի ցանկալի ու կարեւոր է : Քանզի ետքինը, շէնքերու մեծութիւնը կամ գեղեցկութիւնը, բաց ի աչք զուարճացնելէ ուրիշ արդիւնք մը չունի . իսկ առաջինն, այսինքն գաստիարակութեան աղէկ վիճակի մէջ լինելն, ոչ միայն իրական արգասիք կ'ունենայ, այլ եւ նոյն արգասիքն եւս արդիւնաւոր կը լինի, եւ տեւական ու կարեւոր հետեանք կ'ունենայ :

Ամէն մարդու բնական է իւր աշխատութեան արդիւնքը տեսնելու ցանկութիւնը : Հայ ժողովուրդը բացառութիւն չկրնար լինիլ այս բնական տենչանաց : Սակայն իւր գաստիարակութեան համար վատնածը միշտ ապարդիւն մնալով, եւ անոր նկատմամբ տածած յոյսերն ի դերեւ ելլելով, անզգալաբար բերուեր է ուղղել իւր նուէրներն նրութեան բաներ առաջ բերելու . Ուսումնական շէնքերն իրական ու անմիջական արդիւնք մը երեւնալով ժողովրդեան աչքին, ոչինչ չէ խընայիր եւ աւելի առատաձեռնութեամբ մասնակցեր է առաջարկուած հանգանակութեանցը :

Անա այսպէս առաջ եկած է մեր ուսումնական հաստատութեանց մեծագոյն մասը . քանի որ ուրիշ նպաստներն աներեւոյթ են եղեր :

Եթէ գաստիարակական բարենորոգում մը ներածուելու լինի, Ազգն այս մասին մեծ ծախքեր ընելու պիտի չպարտաւորուի, եւ առ այժմ անմիջական ծախքերն պիտի լինին միայն առողջապահական օրինաց պահանջմանը համեմատ ընելիք փոփոխութիւններունը, որոնք մեծ բան չեն կրնար լինիլ :

Մ Ո Ւ Տ Ք

Այս խնդիրն ինքնին կնճռալից է, եւ լուծումն ալ ամենէն դժուարին :

Վարժարաններու մտից վրայ ճիշդ տեղեկութիւն չկրնար տրուիլ, բայց միայն անոնց աղբիւրներու տեսակներն կրնան մտածուիլ եւ մերձաւորաբար քննուիլ, եւ մտից մատակարարութեանը վրայ ուշադրութիւն հրաւիրուիլ :

վարժարաններ կան, որոնց մտից արդիւններն միայն աշակերտներն են, որոնցմէ ամսական բան մը անուուելով վարժարանի ծախքերն կը հողացուին:

վարժարաններ կան, որք եկեղեցւոյ հասոյթովը կամ բարերարի մը սոււած տարեկան նուէրովը կը մատակարարուին:

վարժարաններ կան, որոց ծախքերն կը հողացուին ընկերութեան մը հանգանակած նուէրներովը:

վարժարաններ կան, որոնց ծախքերն անոնց յատկացեալ կալուածներու կամ բարերարաց թողած հրիտակներու արդիւնքովն եւ կամ ժողովրդէն հանգանակուած ստակի տոկոսովը կը հայթայթուին:

վարժարաններ կան եւս, որ վերոյիշեալ աղբիւրներու երկուքը կամ երեքը միացուցեալ կը կառավարուին:

Առաջին եւ երկրորդ կարգին կը վերաբերին բոլոր գիւղօրէից վարժարաններն նոյնպէս եւ այն քաղաքներունը, ուր հայերն իրստ սակաւաթիւ կամ նորոգ գաղթած են: Այս տեսակ վարժարաններն յիշուի իրստ խեղճ դրութեան մէջ են, եւ չեղածի պէս կրնան համարուի:

Երրորդ տեսակ մտից աղբիւր ունեցող վարժարաններու վիճակը կարի անհաստատ ու փոփոխական է: Երբեմն ժողովուրդն ուսումնասէր կամ ազգասէր անձանց դրդամամբը կ'արթննայ, լուսաւորութեան փափաքով կը վառի, կը շարժի, ընկերութիւն մը կը կազմուի, վարժարանը բարեկարգելու կը ձեռնարկուի, նոր վարժապետներ կը կարգուին կամ բերել կը սրուին, եւ ապագայի յուսով կարէն աւելի ծախքերու գտներ կը բացուին: Քանի որ ժողովրդեան ետանդը տաք է, ընկերութիւնը նոր է, ամէն բան խնդադէմ կ'ընթանայ, վարժարանն աղէկ կը շարունակուի եւ յառաջադիմութեան յոյս կուտայ: Սակայն սակաւ առ սակաւ ազգայէն յուսացուած դրամական նպաստներն կը պակսին, վարժարանի հետզհետէ աճած ծախուց հայթայթումն կը դժուարանայ, եթէ պարտք ունի, անոր տոկոսը դրամագլխին վրայ կը բարդի, որու վճարն աւելի կը ծանրանայ, ժողովրդեան ետանդը կը սառի, ամէն բան դժուարութեան մէջ կ'իյնայ, ընկերութիւնը կը վատի եւ ճիշդ այն առ տն երբ վարժարանը կըսկսէր պտուղ տալ, ընկերութիւնը կը պարսաւորի կամ վարժարանը բոլորովին փակել, եւ կամ գլխաւոր վարժապետներն արձակել: Այսպէս վարժարանը դարձեալ կ'իյնայ նոյն վիճակին մէջ որմէ ժողովուրդի վազանցուկ ետանդը հաներ էր. որով աշխատութիւնք, ծախք, ամէնքն ալ չեղածի պէս եւ ի գուր վասնուած կը լինին: Քանզի վարժարան մը արդիւնաւոր լինելու համար, պէտք է տարիներ միատեսակ ու աղէկ դրութեամբ շարունակուի. որպէս զի աշակերտներն հետզհետէ յառաջանալով հասնին եւ կարենան վարժապետաց հմտութենէն օգտիլ: Նա մանաւանդ անհրաժեշտ իրականութիւն մ'է, որ աշակերտներն աւելի իրենցմէ յառաջադէմներու հետ

անդադար հաղորդակցելով եւ անոնց դասերն լսելով կը յառաջանան ու բան կը սովորին քան թէ նոյն իսկ վարժապետներէն:

Չորրորդ ու հինգերորդ կարգին վերաբերեալ վարժարաններն են միայն, որ իրենց ունեցած քիչ շատ հաստատուն եկամտից պատճառաւ միշտ կը շարունակուին: Սակայն կրնայ առանց վարանման ըսուիլ, որ անբացառաբար մեր ամէն վարժարաններու, մանաւանդ այս ետքի երկու կարգին վերաբերեալներուն, առաջ բերած դաստիարակական արդիւնքն ամենեւին չհամապատասխաներ ունեցած ծախուցը, եւ շատ անգամ այս արդիւնքը բոլորովին աննշան կամ չնչին բան մ'է:

Այս ըսածնուս ստուգութեանը ապացոյց կրնան ըլլալ Տիխիսու Ներսիսեան վարժարանն եւ Շուշույ Հոգեւոր դպրոցն, եւ շատ մ'ուրիշներ զորս զիւրին է մեզ յիշել յականէ յանուանէ, եւ աւելի մանաւոր պարագայներով ցուցնել բերած արդեանց աննշանութիւնը բաղդատելով ունեցած տարեկան ծախքին հետ: Սակայն հակասութեանց տեղի չտալու համար կը լսենք անոնց անուաններն եւ այս ալ այն պատճառաւ որ երբ վարժարանի մը պակասութիւններն մի առ մի թուելով կը հրատարակուին, բնականաբար կը մակաբերուի որ այն պակասութեանց պատճառը կամ վարժարանի հողաբարձուներն են կամ վարժապետներն եւ կամ երկուքն ալ միասին. եւ ասոնք ինքզինքնին անբասիր աննշու համար անմիջապէս հրատարակուածին հակառակը պնդելու կ'ելլեն. եւ մեր մէջ ձեռնհաս դատիչներ հաղուաղիւտ լինելով, ժողովուրդը չրկրնար իմանալ թէ որո՞ւ ըսածը ճշմարիտ է, եւ իրաւունքն ո՞ր կողմն է: ուստի երկուստեք հակաճառութիւնը կ'երկարի, եւ արտայայտած իրականութիւնն ուրիշ արդիւնք չունենար եթէ ոչ անհատից մէջ քինուսերմ ցանած լինիլը: Եթէ մենք համարձակեցանք Տիխիսու Ներսիսեան եւ Շուշույ Հոգեւոր վարժարաններու անուաները յիշել, այն պատճառաւ է որ արդէն անոնց վրայ դիտողութիւններ հրատարակուած են Մեզու Հայաստանի լրագրին մէջ (1):

Խօսքերնիս ազգային մուտքերուն չարաչար եւ ի գուր գործածուելուն վրայ լինելով, պատշաճ կը համարինք հոս զիտել, որ տեսակ մը հեռատես Աղաներ կան, որք տեսնելով թէ արհեստք, վաճառականութիւն հետզհետէ Հայոց ձեռքէն կ'ելլեն, աղգասիրական (դու արձաթասիրական իմացիր) ոգւով շարժեալ ցանկացեր են անոնց տեղ չահու նոր աղբիւր մը գտնել, եւ աղգասիրութիւն ըսուած արուեստը հնարեր են: Այս աղաներն սոյն արուեստի ուսման աշակերտութիւնը կըսկսին ազգային գործերու վրայ անդադար խօսելով եւ այլոց ազգասիրութիւն քարոզելով, եւ քանի որ ուսումն այժմ «լա Տօր եւ ուսումն նասիրութիւնն աղգասիրութեան մէկ ճիւղն է, աղաներն եւս ասիկայ

(1) Տես թիւ 9, 10 եւ 11. 6, 13 եւ 20 Մարտ 1876:

սպ զանց չառնելով կը ջանան ինքզինքնին կարի շատ ուսումնասէր ցուցնել : Ոչինչ պատեհութիւն չեն կործնեցներ իրենց աղգասիրութիւնն եւ ուսումնասիրութիւնը (խօսքով միայն) ուրիշներու ցուցնել . կարճ աչնչափ կ'ընեն որ աղգային գործերու գլուխ կ'անցնին :

Այս կարգ ազաներն կարծես թէ Մասոնական ընկերութեան անգամնց պէս զիրար ճանչելու համար խորհրդաւոր ու գաղանխ նշաններ, եւ իրարու օգնական լինելու համար ալ անդիր ներքին դաշինք մ'ունենին , որով աղգային մէջ ճշմարիտ ու անշահասէր աղգասիրաց զէմ զիրար ջերմաբար կը սրայտպանեն . քանզի քաջ գիտեն որ իրենց մէ մէկու անկումը միւսի անկմանը կարապետ պիտի լինի :

Այս ազաներն Ազգի ստակը կլլելու համար զանազան միջոցներ ունին — ոմանք եկեղեցւոյ կամ վարժարանի ստակը շահեցնելու պատրուակաւ իրենց քով կ'առնուն , տարիներով անտոկոս կը պահեն , եւ երբ կը տեսնեն որ մէկու մը վարժարանը բարեկարգելու կամ որիչ բարենորոգումներու նկատմամբ ըրած առաջարկութեան հետեւանքը պիտի լինի իրենց քովի ստակի ետ դարձնելը եւ կամ այն ստակի համար հաշիւ կամ ապահովութիւն տայն , այս ազաներն անձնական ու ազանգական շահու ներքին կապերովն , որոնք զբաւոր դաշինքէ աւելի զօրաւոր ու հաստատուն են , միացեալ բոլոր զօրութեամբ այն առաջարկութեան զէմ կը դնին , զանազան խորամանկ առարկութիւններով ու հնարքներով այն առաջարկութիւնը կը խափանեն : Այսպէս Ազգի ստակն այնքան քովերնին կը պահեն , որ այն դումարն ու անոր ինդիրն հիննալով , զառամելով կամ կը մեռնի եւ կամ մաշելով մաշելով չնչին բան մը կը դառնայ : Ոմանք աւելի ճարտարութեամբ դործելով աղգասէր առատաձեռն անունն եւ ստակն միեւնոն ձեռնարկով կը շահին : Եթէ բարեգործական նպատակով հանգանակութիւն մը լինի , կամ եկեղեցւոյ մէջ դանձանակ պորտոյուի , ասո՛ք առատաբար մեծ մեծ նուէրներ կը խոստանան , եւ երբեմն իրօք ալ կուտան , բայց միշտ հոգ տանելով որ իրենց առատաձեռնութեան համբաւն ամենուն ականջը հասնի . ասով կը շահին աղգասէր ու առատաձեռն անունը . սակայն այս արարքներն միայն հասարակութեան աչքը չլացնելու եւ դիւրաւ իրենց արծաթասիրութիւնը յաղեցնելու համար պատրաստութիւններ էին . քանզի եթէ մէկն աչալըջութեամբ անոնց լարած գաղանխ մեքենաներն քննէ , կը տեսնէ ի՛նչ . որ հանգանակութեան տուիի ու գանձարանի տակը ծակ մը կամ ճամբայ մը կայ ուրկէ տուիին կամ գանձանակին մէջ ձգուած ոսկիներն առատաձեռն ու աղգասէր ազաներու գրպանը կը գլորին : Մաքիավելի ինքն ասկէ աւելի խորամանկ միջոց մը չէր կրնար հնարել իւր նպատակին հասնելու համար :

Աղգասէր ազաներս իրենք մեծագոյն մասամբ անբաւական վարժարան բարեկարգելու , եւ զան յառաջադիմութեան շաւղին մէջ զը-

նելու , ձեռնհասներու ձեռնամխութիւնը կը վաննեն , քանզի քաջ գիտեն որ իրենց յարատեւութիւնը կը կայանայ վարժարանի դռներն կարող անձանց զէմ փակելուն եւ ձեռնհասներն կարելի եղածին չափ վարժարանին վերաբերեալ գործերէ հեռացնելուն մէջ : Այ վարժապետը ալ իրաց այս միճակէն օգուտ քաղելով կը հաստատուին իրենց պաշտօնին մէջ :

Չմոռնանք յիշելու որ վարժարաններ կան եւս որոնց , իչր աւատական ստացուածքի , կը տիրեն սոփեամունք , եւ հոգարարձութեան , կառավարութեան ու վարժարկատութեան պաշտօնը միանդամայն բռննարար կը վարեն , հակառակ ժողովրդեան մեծագոյն մասի կամացը , եւ այս բռնակալութեան համոզիչ ու արդար պատճառն այն է , որ վարժարան շինողը կամ անոր ծախքը հոգացողը Մոփետի աղգականն երէն մէկն է եղեր :

Ժամանակ է որ Ազգն իւր թմբութենէն սթափի , եւ անխուժութիւնը մէկզի դնելով համար պահանջէ խստիւ , բայց անաչառարար , աղգային եկամուտներն գործածող ամէն անհատէ : Ինչ կարգի որ վերաբերի եւ ինչ աստիճանի տէր ալ լինի այն անհատը , զարձեալ ստորակարգեալ է Ազգի կամացը : Ազգն է միայն գերադոյն գործադիր զօրութիւն . նա է միայն բացարձակ տէր աղգային եկամտից եւ անոր կը վերաբերի ամէն տեսակ ստացուածոց , մտից ու ծախոց տնօրէնութիւնը :

Ամէն ոք որ աղգային գործի գլուխ կ'անցնի , պէտք է իր հաշուեկանակն ապակիէ շինէ . որպէս զի աղգային ո եւ է անհատ առանց խտրութեան այր , կին , հարուստ , աղքատ , աշխարհական , կղերական , տէր եւ ծառայ ցանկացած ստենը կարենայ անարգել մերձենալ , տեսնել ու քննել անոր գործերն : Ամէն անհատ ինչ կարգի եւ ինչ տեսակի ալ վերաբերելու որ լինի, Ազգի մասն է : Եւ ինչպէս ճշմարիտ է եւ անվիճելի , որ իւրաքանչիւր անհատ առանձին պարտաւորութիւններ ունի առ Ազգն , եւ պարտաւոր է զանոնք կատարել եւ յօժարութեամբ . նոյնպէս ալ անուրանալի է , որ ամէն անհատ առանձին իրաւունքներ ունի եւ կրնայ անոնց վաշելու մը պահանջել Ազգէն : Պարտք եւ իրաւունք անբաժան պիտի լինին :

ԲԱՐՈՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Մարդուն ստորին կենդանիներէ ունեցած տարբերութիւններն մէկն ալ , իւր ժառանգած բարոյական կարողութիւններն են :

Այս կարողութիւններն մտաւորականինէն աւելի բարձր ձիրք են եւ գորս Աստիանամութիւնը մարդուն միայն չնորհեր է :

Առանց այս կարողութեանց՝ մարդը միայն կենդանի մը կը լինէր գերագոյն ուղիղով ու յարմարութեամբ, եւ ոչ էակ մը սանձանուած վայելու յաւիտենական կեանք ու անթառամ երջանկութիւն :

Ակայն այս բարոյական կարողութիւններն մտաւորականին պէս մշակուելու, զարգացուելու եւ ազնուանալու պէտք ունին : Մտաւորականի մշակութեան արտադրութիւններն իմացականութեանց տեսակներն են . իսկ բարոյականինն առաքինութեանն : Ինչպէս առանց մտաւորականի մշակութեանն անկարելի է, որ մէկը քաջ պատմաբան, մաթեմատիզոս, բնագէտ, քաղաքագէտ եւ այլն դառնայ, նոյնպէս առանց բարոյականի ազէկ մշակութեանն սնննար է, որ մէկը ճշմարիտ կրօնատէր, հայրենասէր, մարդասէր ու առաքինասէր դառնայ :

Ազգի մը կազմութեանն ու տեսականութեանը համար՝ բարոյականի մշակութիւնը մտաւորականինէն աւելի կարեւոր է :

Պատմութիւնը յայտնապէս կը վկայէ ասոր :

Եւ յիշուի եթէ ուշի ուշով կարգանք Յունաց պատմութիւնը, կը տեսնենք որ Յունաստան իւր ազատութեան ու պարսկական լուծէն անկախ մնալուն համար աւելի մեր բարոյականի մշակութեանը պարտական է քան թէ մտաւորականինն ու մարմնականինն :

Ինչ վսեմ հայրենասիրութեան օրինակ, երբ մայրն պատերազմէն գերծնալ իւր միակ զաւակն ողջ ետ դառնալուն համար, անարժան որդի կը կոչէ եւ կը վռնտէ իր քովէն :

Ուրիշ օրինակ մ'ալ բարոյական դաստիարակութեան, թէ եւ սխալ սկզբունքով, երբ սղայ մը իր գողութիւնը՝ չյայտնելու համար կը թողու որ վերարկուին տակի գողցած աղուէնն իր փորտախըբ պատռտէ :

Գարձեալ պատմութիւնը մեզ կը սուրբեցնէ, որ Հոռոմ իւր առաքինասիրութեանը պատճառաւ պատերազմի կը բռնուի, իւր զինուոց դօրութիւնն, որ անմիջական գրացեաց սարսափ կը պատճառէր, կը խորտակի, եւ իր բռնաւոր թագաւորի լուծը նորէն կրելու վտանգին մէջ կ'իջնայ . սակայն նոյն առաքինասիրութիւնը դարձեալ զինքը (զՀոռոմ) կ'ազատէ, ասպատակիչ թագաւորին սիրան աճ ձգելով :

Ինչ սրտաշարժ տեսարան, երբ ազնուական մը ինքզինքը հայրենեաց ազատութեանը զոհ ընծայելով մօրն կ'ըսէ « Կ'ազատես զՀոռոմ բայց կը կորսնցնես զաւակդ » : Առաքինի մայրն արտասոււթոր աչօք, աղետարջ գորովով ու խանդաղատանօք կը զոհէ իր զաւակն ի սէր ազատութեան հայրենեաց :

Միթէ այս գէպքը Հոռոմացեաց մտաւորական կրթութեանը տալու է՞ :

Հոռոմ Յունաստանի պէս իր մեծութեանը համար աւելի բարոյականին երախտապարս է քան թէ զինուոց դօրութեանն : Որքան որ բարոյականի մշակութիւնը շարունակուեցաւ այս ամենի ժողովրդեան մէջ,

Հոռոմ օրէ օր մեծցաւ ու փառք չահեց . բայց երբ բարոյականութեան սէրի նուազմամբ մողութիւնք սկսան ծնանիլ, աճիլ ու թագաւորել, այն տտեն այն ահագին կայսրութեան ամենապիտո հիմն, առանց արտաքին ցնցման, խարխլեցաւ : Հոռոմ նախ մոլի կայսերաց ոտից տակ խոնարհեալ ինկաւ, եւ ի վերջոյ ալ բարձարոսաց զոհ դարձաւ :

Միթէ ասիկայ Հոռոմացեաց մտաւորականի անկմանը տալու է :

Թէեւ հիներու բարոյական կարողութեանց մշակմանը վրայ ունեցած դաղափարը մերինէն մասամբ մը կը տարբերի . սակայն այս տարբերութիւնն աւելի կրօնական կէտերուն մէջ կը կայանայ քան թէ ուրիշ պարագայից : Անտարակոյս հեթանոսական մասնական ու խիստ ազածներն, չեն կրնար նմանիլ աւետարանական ընդհանուր ու անխտիր ընկերասիրութեան պատուէրներուն եւ սկզբանցը . այսու ամենայնիւ ուրիշ բոլոր էական կէտերուն մէջ սոյն բարոյականի մշակութիւնն ու արտադրութիւնը մի եւ նոյն են : Հեթանոսականն առանձին ազգային կամ ցեղային ազատութիւն կը սուրբեցնէ . աւետարանականը մարդկային ընդհանուր ազատութիւն կը քարոզէ : Հեթանոսականն անմիջական արեւակիցն եւ բոլորովին աստիճանով ու շահով իւր նմանը սիրել ու պաշտպանել կ'ուսոյնէ . աւետարանականն անխտրաբար մեր նմանիքը սիրել եւ մարդկութիւնը պաշտպանել կը պատուիրէ : Եթէ աւետարանական այս վսեմ պատուէրներու գործադրութիւնը սոյն լուսաւորեալ դարու մէջ իրականացեալ չենք տեսներ . այս պակասութիւնն օրէնադրին վերնծայելու չէ, այլ մեր եսականութեանը :

Գաստիարակութիւնը սանձանած ատենն ըսուեցաւ, որ դաստիարակութեան մէկ գլխաւոր ճիւղն ալ բարոյական կարողութեանց զարգացումն է, եւ առանց այս ճիւղի կրթութեանը մէկու ունեցած դաստիարակութիւնը թերի է եւ պակասաւոր :

Բարոյական մշակութիւնը մտաւորականի սկսած ատենը չսկսիր, եւ ոչ ալ միայն առանձնաբար վարժապետաց կը վերաբերի : Բարոյականի մշակութիւնը կը սկսի մանկան ծնած օրէն, եւ կը վերաբերի հաւասարապէս ծնողաց, վարժապետաց ու ընկերութեան : Ասոր մշակութիւնը գրքերու վրայ դասաւարտութեամբ չը լինիր, այլ ամենօրեայ կենցաղավարութեան ու գործերու օրինակովն եւ առաքինութեան օգուտներն ու մղութեան մշասներն ցուցնելովը :

Ծնողք, գլխաւորաբար, մայրերն, որոնց անմիջական խնամոց կը թողուին երեխայք, պէտք է ջանան ամենափափուկ հասակէն սկսելով երեխայոց մտաց ու սրտին մէջ ցանել առաքինութեան զանազան սերմերն : Այս նպատակիս հասնելու համար միայն չոր ու երբեմն ձանձրալի խրատներն չեն բաւեր, այլ պէտք է որ ծնողք նախ իրենք գործադրեն առաքինութեան տեսակներն, եւ ապա անոնց օրինակներն ցուցնեն երեխայոց առ ի նմանութիւն : Եթէ չատերուն անկարելի է

իրենց մէջ կրել առաքինութեան բոլոր տեսակներն ու բարոյականութեան տիպար մը լինելը . գոնէ ամենու՛ն ալ խիստ դիւրին է ծածկել երեխաներէ իրենց պակասութիւններն , մտլութիւններն ու անբարոյական գործերն : Օրինակի համար եթէ հայր ու մայր բանի մը վրայ չեն կրնար համաձայնիլ, պէտք չէ որ իրենց դաւակոյց առջեւ սկսին վիճել , զիրար հեգնել կամ իրարու կծու խօսքեր ըսել , այլ պարտաւոր են ի սէր բարոյականութեան այսպիսի դէպքերն ծածկել իրենց դաւակներէն :

Յենկուն իւր Գոթարհարհոթիւն առջկոնց գրքին մէջ , երեխայոց միայն բարի օրինակ ներկայացնելուն մեծ կարեւորութիւն կուտայ :

« Երեխայք , կ'ըսէ , տակաւին չիմանալով բան մը խորհիլ կամ ինքրենցմէ ընել , ամեն բան կը դիտեն » : Եւ ուրիշ տեղ եւս . « Երեխայոց ազխտութիւնն , որոնց ուղեղին վրայ տակաւին ոչինչ չէ արդուեր , եւ որոնց ոչինչ սովորութիւն չէ եղեր , զանոնք (երեխաներն) զիւրաթեք ու հակամէտ ամէն տեսածնուն նմանող լինելու կը դարձնէ : Այս պատճառաւ խիստ կարեւոր է որ անոնց միտայն աղէկ օրինակներ ներկայացունեն » : Այս փափակ հասակին մէջ , կ'աւելցնէ ուրիշ տեղ մ'ալ , տպաւորութիւններն այնչափ խորին կը լինին , որ անոնց հետքը բոլոր կենաց մէջ կրնայ գրեթէ անջինջ նշմարուիլ » :

Երեխայք իրենց ծնողաց եւ իրենցմէ մեծերու ըրածներն ու ըսածներն դիտելով ու ճշդիւ օրինակելով , պատեհութիւն չեն փախցըներ զանոնք իրենց մէջ ներկայացնելու . եւ այսպէս ծնողաց վէճերու , անվայել խօսքերու եւ արարքներու ամէն մէկը մէջ մէկ արդելք է երեխայոց բարոյականութեան դարգացմանն եւ հարուած առաքինութեանն աճմանը : Տգէտ մայրերն , ստնտուներն , դայեակներն շատ անգամ ուրիշ միջոց չգտնելով երեխաներն քնացնելու , դադրեցնելու կամ լռացընելու համար , զանոնք մտացածին հրէշներու , ճիւղներու եւ ահարեկիչ անձանց նկարագրութեամբ կը վախցընեն : Այս միջոցներն , ոչ միայն երեխայոց վրայ խորին տպաւորութիւն ընելով , զանոնք երկշոտ եւ թուլափրտ լինելու արամաղիր կ'ընեն . ոչ միայն միշտ անոնց մտաց ներկայանալով ու երազնուն մէջ երեւնալով զանոնք անհանդիստ կ'ընեն , այլ շատ անգամ երեխայոց զգացած վախն այնչափ սաստիկ կ'ըլլինի , որ իրենց հիւանդանալուն եւ երբեմն մահուան ըսկըզբնապատճառ կը դառնան : Անխոհեմ մայրերն շատ անգամ անհնազանդ երեխայոց այս ինչ կամ այն ինչ բանն ընել տալու համար կեղծ խոստումներով կը խարեն : Երեխայք անգամ մը խարուելէն ետքն ալ այնուհետեւ իրենց մօր խօսքին չեն հաւտար , եւ կ'սկսին ի դարձին խարել իրենց մայրն : Կնոջք ու վարժապետք շատ անգամ երեխայ մը յանցանք գործած ատենը կը խոստանան որ եթէ երեխան ճշմարտապէս խոստովանի յանցանքը՝ զինքը չեն պատժեր . բայց երբ երե-

խան յանցանքը կը խոստովանի , այն ատեն ստելով իրենց խոստումն դարձեալ կը պատժեն :

Ո՛վ անխոհեմ ծնողք եւ անմիտ վարժապետք , երբ դուք ինքնիդ սեւ ստախօտութեան գործնական օրինակը կուտաք երեխայոց , ի՞նչ պէս կրնաք ալ այնուհետեւ անոնցմէ ճշմարտախօսութիւն յուսալ :

Կան վարժապետներ որ Ղօյօյալի հետեւողացը պէս գործուած յանցանք մը գտնելու համար , աշակերտներն առանձին առանձին խօսեցընելով կը յորդորեն զանազան յանցազանցութեան խոստումներով իրենց ընկերակիցներու գործածներն պատմել , եւ այսպիսով անոնց անզգաւար կը սովորեցնեն ստախօս , դրպարտիչ ու մասնիչ լինելու : Եւրօպական մանաւանդ անգղիական բարեկարգեալ դպրոցներուն մէջ , մեր վարժապետաց ըննած այս ընթացքի ճիշդ հակառակը կը բռնուի : Այն դպրոցներու մէջ , աշակերտն ամենեւին չհրաւիրուիլ ուրիշի գործած յանցանքը յայտնելու եւ մինչ անգամ եթէ աշակերտ մը ուրիշէ մ'ալ ծեծուի , պարզապէս վարժապետին կը դանդափի « զիս ծեծեց կամ ծեծեցին » ըսելով , այլ երբէք ո՛վ ծեծեց չըսեր . վարժապետն աշակերտներէն մի առ մի կը հարցնէ եւ ընդհանրապէս յանցանք գործողն ինքնին կը խոստովանի : Ուրիշներու յանցանքը յայտնող աշակերտը վարժապետէն չսիրուի , եւ իւր բոլոր ընկերներէն այնչափ կը խորշուի որ ալ մէկն անոր հետ ոչ կը խաղայ եւ ոչ ալ կը խօսի :

Թէեւ այս ըստ ինքեան չնչին բան մ'է , սակայն մեծ հետեւութիւններ ունի : Նախ որ աշակերտներու մէջ քինու , ռիսի , ստելութեան , վրէժխնդրութեան սերմերն չցաներ , եւ աւելի ընկերասիրութեան արամաղիր կ'ընէ : Երկրորդ ոչ միայն մատնիչներ չպատրաստուիր այլ մատնչութեան որչափ զգուելի ու նուաստ բան լինիլն մատաղ սրտերուն մէջ կը խորատրպէ : Ի՞նչ երանի որ մեր մէջ ալ այս գաղափարն ծաւաղուէր եւ կ'ընէր մեր միջի Վասակներն , Վեստ Սարգիսներն ոչ միայն արհամարել , այլ ատել , ատել ամէն գորութեամբ , եւ խորշիլ անոնցմէ իր թուճաւոր ճճիէ կամ տարափոխիկ ժանտ ախտէ մը : Լաւ է որ մէկ քանի մարդ կոչուելու անարժան արարածներ ընալինջ լինին քան թէ անոնց ինքնասիրութեան ու եսականութեան պատճառաւ շատ մը անմեղներ զո՛հ երթան : Գուցէ ոմանք խորհին որ սիկայ աւետարանական պատուէր մը չէ , բայց մենք կ'ըսենք իրաւացի ու արդար մէկն է :

Գառնալով մեր նիւթին , որմէ քիչ մը խտորեցանք , կը կրկնենք դարձեալ որ բարոյականութեան մշակութիւնն ամէնօրեայ կենցաղավարութեամբն ու վարժուելովը կը լինի . այն սովորական ամենափոքր դէպքերն են որով մէկու սրտին մէջ առաքինութեան սէրն հետզհետէ կ'աճի , եւ մոլութիւնը դարչելի կը դառնայ : Անդ անհնար է այս նիւթիս վրայ մանրամասնաբար ճառել եւ ամէն պարագայից մէջ մտնել :

սակայն շատերէն միայն իրստ սովորական պակասութիւններն ու գէշ ընթացքներն յիշելով կ'ուզենք ծնողաց ու դաստիարակաց ուշադրութիւնը հրաւիրել այս ճիւղի ըստ պատշաճի մշակութեանը վրայ, եւ կը վերջացնենք խօսքերնիս ըսելով որ առանց բարոյական կարողութեանց մշակութեանը, մէկն որչափ հանձարեղ եւ որչափ ուսումնական ալ լինի, դարձեալ թերի է անոր դաստիարակութիւնն, եւ ոչ կատարեալ մարդ եւ ոչ կատարեալ քաղաքացի կրնայ համարուիլ :

ՄԱՐՄՆԱՄԱՐԶՈՒԹԻՒՆ

Դաստիարակութեան մէկ գլխաւոր ճիւղն ալ Ֆիզիքական կամ մարմնական կարողութեանց մշակումն ու զարգացումն է :

Դաստիարակութեան այս ճիւղի անհրաժեշտութեանն ու կարևորութեանը վրայ քիչերն գաղափար ունենալով, եւ մեր վարժարաններն առ հասարակ մարմնամարզական կրթութիւնէ զրկուած լինելով թող ներուժի մեղ քիչ մը երկարօրէն խօսիլ այս նիւթիս վրայ :

Ժիմնաստիք յունարէնէ ծագած եւրոպական բառին տեղ մեր մէջ մարմնամարզութիւն բառը կը դորձածուի : Մարմնամարզութիւնը ժիմնաստիքի ճիշդ բառական թարգմանութիւնը չէ այլ աւելի իմաստինն ու գաղափարինն է :

Մարմնամարզութիւնը ծնաւ Յունաց մէջ Տրոյայի պատերազմի ատեններն, եւ ի սկզբան կցեալ զբոսանաց դործ կը դրուէր իբր ամենաշաւ միջոց մարմնական ոյժ ու ճարտարութիւն ստանալու համար :

Ետքէն ի պատիւ աստուածոց կանոնաւոր մարմնական խաղեր հաստատուեցան, որք մեծ ծէսով կը կատարուէին, եւ խաղերուն մէջ յաղթական դոնուողներուն վարձատրութիւններն ու քաղաքական պատիւներ կը տրուէին : Աստիճանաբար մարմնամարզական խաղերն զրութեան վերածուեցան . մարմնամարզական ուսուցիչներ կարգուեցան նախ Վակեղեմոնիոյ, ապա Աթէնքի, ետքէն ուրիշ տեղերու եւ ի վերջոյ Հռոմայ մէջ :

Հիներն մարմնամարզութեան մեծ հող կը տանէին, եւ օգուտներուն վրայ մեծ գաղափար ունէին : Պղատոն կը պատմէ որ մարմնամարզութիւնը բժշկութեան մաս մը համարուեցաւ, իբր արգելական միջոց՝ շուայութեան ու պղերգութեան գէշ հետեւանացը դէմ, եւ Պրդատոն եւս եւ Արիստոտէլ կը կարծէին որ Հասարակագետութիւն մը կատարեալ չհամարուիր, ուր մարմնամարզարանք, իբր մաս մը ազգային հաստատութեանց, զանց առնուած էին : Չանազան պատճառներ միացած վերջ տուին մարմնամարզութեան գործածութեանն իբր մաս մը դաստիարակութեան եւ միջոց մը անողջապահական : Այս

պատճառներն մեր վարեցիք ինչպիսի բոլորովին օտար լինելով կը բաւականանանք միայն անոնցմէ մէկը յիշելով — արդի ռազմավարութիւնն որ պատերազմի յաջող ելքն աւելի հրամանատարաց գիտութիւնէն ու փորձառութիւնէն, զինուց ընտրութիւնէն ու ազէկութիւնէն եւ զինուորաց կրթութիւնէն կը յուսայ քան թէ լոկ մարմնական ոյժէն :

Ներկայ դարս որ ամէն բանի հետամուտ է, եւ ամէն գաղափարի օգուտ քննել կ'ուզէ, հիներու այս գաղափարն եւս քննութեանն ու փորձի տակ ձգեց, որով եւ մարմնամարզութեան օգուտներն ու կարևորութիւնն աղօտ կերպով մը նշմարեց, եւ զան (մարմնամարզութիւնը) շատ մը վարժարաններու մէջ մտցուց : Սակայն ուսուցիչք անոր ընտելիւնը լաւ չհասկցած, զան իբր մանկական զուարճութիւն ու դբօսանք նկատած եւ անոր վարժութիւնը բարեգիտական (physiologique) օրինացն ու կանոնացը համեմատ չգործադրած լինելուն պատճառաւ, մարմնամարզութիւնը շատ օգտակար արդիւնք չտուաւ եւ կրքեմն ալ վնասու պատճառ եղաւ :

Շուէտացի Փ. Է. Վինկ մարմնամարզութիւնն իւր մասնաւոր ուսումներէն մէկն ընելով տարիներ անոր հետազօտութեանը վրայ պարագեց, եւ մեծ ջանքով ու յարատեւութեամբ արդիւնքը քննեց, եւ զան անդամադնական (anatomique) ու բարեգիտական օրինաց բնութեանն ու պահանջմանը յարմարեցնելով արդի բանաւոր (rationnel) մարմնամարզութեան զրութիւնը հնարեց : Իւր դրոմամբը նախ Աթօքհօլմի մէջ մարմնամարզական հաստատութիւն մը կանգնեցաւ, եւ որու անօրէնութիւնն իրեն տրուեցաւ : Բայց շատ չանցաւ որ Շուէտիոյ կառավարութիւնն անորմէ առաջ եկած օգուտներն տեսնելով Վինկի մարմնամարզական զրութիւնն ոչ միայն զինուորական ճեմարաններու մէջ, այլ եւ բոլոր համալսարաններու, ուսումնարաններու, քաղաքաց պարոցներու եւ մինչ գիւղերու նախակրթարաններու մէջ մտցուցուց :

Բրուսիոյ կառավարութիւնն որ երկար ատենէ ի վեր իր բոլոր ուշադրութիւնը գլխաւորաբար երկու նիւթի, զինու զօրութեանն ու դաստիարակութեանն, վրայ դարձուցեր է, փութացաւ ընդհանուր դաստիարակութեան գաղափարին հետ ընդունիլ եւս մարմնամարզութիւնը, զան (մարմնամարզութիւնն) անդաման մաս համարել անթերի դաստիարակութեան եւ Վինկի սկզբանց համեմատ Պեոլիսի մէջ մարմնամարզութեան կեդրոնական հաստատութիւն մը կանգնել, ուր կը պատրաստուին մարմնամարզական վարժապետներ այս կրթութիւնն անխրտարար քաղաքական ու զինուորական վարժարանաց մէջ մտցնելու համար :

Ասոր հետեւեցան Վիննայ, Տրէստն, Գերմանիոյ մէկ քանի երկիրներն : Եւ վերջերս Գաղղիա եւս մարմնամարզութեան բոլոր կարև

ւորութիւնն զգալով զան (մարմնամարդութիւնն) օրինադրեց իբր անբաժան ու անհրաժեշտ մաս մը դաստիարակութեան, եւ անոր (մարմնամարդութեանը) մասամբ մը զինուորական կրթութիւն առաջ բերելու ուղղութիւն տալով մտցուց երկրին բոլոր վարժարանացը մէջ :

Ասոնց օրինակին հետեւեցան եւ կը հետեւին եւս հետզհետէ ուրիշ երկիրներն, եւ քանոր մարմնամարդութիւնն ազգային պիտոյիցն ու տրամադրութեանը յարմարցնելով կը մտցընին իրենց վարժարանացը մէջ :

Այս հակիրճ տեսութենէն ետքը ջանանք ցուցնել մարմնամարդութեան յատկութիւնը, մտաւորականի կատարեալ ու դիւրին, մշակութեանը համար անհրաժեշտ կարեւորութիւնը, քանոր գործադրութենէն առաջ եկած օգուտներն եւ դանցառութենէն ծագած վնասներն :

Մարմնական կրթութիւնն ամէն անհատի այնչափ կարեւոր է որչափ որ մտաւորականն, եւ թերեւս կենաց համար ետքինէն աւելի անհրաժեշտ պիտոյք մ'է : Ասանց մտաւորական կրթութեան մէկը դուրկ կը մնայ դիտութեանց ընծայած բոլոր առաւելութիւններէն . իսկ առանց մարմնական կրթութեան մէկն ոչ միայն չկրնար կատարեալ առողջութիւն, կենաց այս ամենակարեւոր պիտոյքը, վայել, այլ նաեւ մտաւորական մշակութեանը մէջ եւս չկրնար յարատեւել : Այսպէս մարմնական կրթութիւնը մարդուն երկու կերպով անհրաժեշտ կը դառնայ :

Տօքթէօն Բօմպ, որմէ մեծաւ մասամբ կ'առնենք բանաւոր մարմնամարդութեան վրայ բնելիքնիս, անոր կարեւորութիւնը ցուցնելու համար այսպէս կը խօսի իւր Այլքոնէ քարէքիտոնէան (1) գրքին մէջ :

« Մարդս, կ'ըսէ, գործունեաց կենաց սահմանուած լինելով իր բոլոր կենտական պաշտօններն կարգադրուած են ընտելենէ զան այս նպատակիս (գործունեաց կենաց) յարմար ընելու, եւ այս պաշտօններն միայն այն ատեն յաջորդաբար կ'ընթանան, երբ մարդուս արտաքին դրութիւնն իւր գործարանաց (organes) կանոնաւոր վարժութիւնը կը պահանջէ :

Ըստ այնմ հետաքրքրական է դիտել այն սքանչելի եղանակն որով իւրաքանչիւր գործարան գործողութեամբ ու համակրութեամբ կապուած է մնացորդին : Երբ օրինակի համար գնդերական դրութիւնն (système musculaire) ըստ պատշաճի կը գործածուի, աճած գործողութիւն անոր անօթներուն (cellules) եւ ճիւղերուն մէջ տեղի կ'ունենայ . սակայն ազդեցութիւնը միայն լոկ շարժման գործարաններուն

չսահմանափակուիր, այլ կը տարածի անդական, շնչառական եւ ուրիշ գործարաններուն եւս :

Այս դիտողութենէն յայտնի կ'երեւնայ, եւ առօրեայ օրինակներն կը հաստատեն եւս որ շարժումն անհրաժեշտ է ամէն կենդանութեան առողջարար շարունակութեանը : Օրինակի համար եթէ բաւական ատեն դ եւ է անդամ կատարեալ անշարժութեան մէջ դրուի, այն անդամն ոչ միայն գործելու յարմարութիւնը կը կորսնցընէ, այլ եւ կը տկարանայ, կը բարակնայ, կ'ամփոփուի, կը փոքրկանայ, մէկ խօսքով մեռելութեան վիճակին կը մօտենայ . ուր ընդ հակառակն եթէ անդամ մը կանոնաւոր կերպով եւ ըստ օրինաց բարեգիտութեան գործածուի, այն անդամն ոչ միայն գործելու դիւրութիւն որով եւ տոկունութիւն կը ստանայ, այլ եւ չափաւոր պայմանաւ կը զօրանայ ու կ'աճի մեծութեամբ : Աշխկայ ենթադրութիւն չէ, այլ իրողութիւն մը, արդիւնք մը եւ բնական օրինաց հետեւանք մը :

Եթէ մարմնամարդութեան հետեւանքը միայն մարմինը զօրացնելն լինէր, ոչ դաստիարակութեան մաս ընելու եւ ոչ ալ քաջալիրութեան արժանի կը լինէր . սակայն անկէ առաջ եկած օգուտներն շատ ու զանազան լինելով, ամէն ոք պէտք է իւր ժամանակի մէկ մասն անոր յատկացնէ, մանաւանդ ծնողք ու դաստիարակք մասնաւոր հոգատարութեան հիւթ պէտք է ընեն իրենց խնամոց յոնձնեայ մանկանց մարմնական կարողութեանց զարգացումը :

Մարմնական կարողութեանց կրթութեամբն եւ մարմնի զօրանալովն ու մեծնալովն ոչ միայն մէկն աւելի տրամադիր կը դառնայ իւր օրական աշխատութիւնը կամ պաշտօնն անձանձիր կատարելու, որով եւ կենանքը մարդուս համար փոխարէն ծանրութիւն մը լինելու հաճութիւն մը կը դառնայ, այլ եւ առանց դժուարութեան կը դիմանայ բախտի փոփոխութեանցն եւ անորմէ առաջ եկած նեղութեանցը, զրկմանցը ու չքաւորութեանն, այլ եւ աւելի դիւրաւ կը տանէ հարկ եղած ատենը ծանր աշխատութիւնքը, աւելի կար ու տոկունութիւն կ'ունենայ պատահական հարուածներէ, պատահաբքներէ եւ իրմէ կախում չունեցող գէպքերէ առաջ եկած խօթութեանցը դիմանալու, եւ անոնցմէ առանց էական վնասի կամ քիչ վնասով ազատելու : Ոչ միայն ասոնք, այլ եւ բանաւոր մարմնամարդութիւնը պահպանողական դեղ մ'է առողջութեան եւ յառաջագոյն խափանիչ մը ամէն տեսակ հիւանդութեանց :

Այս վերջին յատկութեանը նկատմամբ Մ. Ռօթ՝ Վ. Բ. իր Այսպիսի քարէքիտոնէան մարմնամարդութեան ըստ Լինկէ քրոնէան (1) գրքի յառաջարանին մէջ այսպէս կը խօսի .

(1) The Principles of Physiology by Andrew Combe M. D. Edited by James Cox M. D. Edinburgh 1860. Գլ. 6 երես 94 :

(1) The Gymnastic Free Exercises of P. H. Ling, Translated by M. Roth, M. D. London 1855.

«վարժութիւններն (մարմնական) կ'ըսէ , եթէ երկու տեւի դաս-
տարակութեանն անհրաժեշտ ու էական մաս մը ըլլուէին , շատ մը
խօթութիւններ , որք զանց առեալ մարմնական զարգացման կամ կազ-
մական տկարութեան հետեւանքներն են , կրնային խափանուիլ ու ար-
գիլուիլ : Խօթութեանց այս խափանմամբը տկարներու ու ցաւագար-
ներու թիւը մեծապէս պիտի նուազէր եւ միեւնոյն աստիճան մը
տաւորական կարողութիւններն աւելի պիտի զարգացուէր : Հնար չէ
ուրանայ , կը յաւելու , որ խօթութիւնը խափանելու արուեստը՝ զան
բժշկելէն աւելի նախամեծար է : Գաղեն հոշակաւոր բժիշկն , որ մարմ-
նամարդութիւնը քիթիէն քիթի գլխաւոր մասը կը համարէր , իրաւամբ կը
կարծէր որ ամենաղէկ բժիշկը մարմնամարդութեան ամենաղէկ ուսու-
ցիչն էր » :

Մարմնամարդութեան , կը շարունակէ ըսել Ռօթն , ուրիշ զխաւոր
մէկ օգուտն ալ շաղղահեղց գիրութեան (obésité) խափանումն է ,
որն քիչ շատ տկարութեան հետեւանք է , եւ եթէ մարմնական թանձ-
րութիւնն արդէն սկսեր է , անոր առաջն առնելու միակ միջոցը կամ
զան ամօքելու դեղը մարմնամարդութիւնն է :

Բանաւոր մարմնամարդութիւնն ոչ միայն խափանիչ է հիւանդու-
թեան , այլ եւ շատ մը տեսակ խօթութեանց բուժիչ : Ի հաստատու-
թիւն որոյ Ռօթն շատ մը օրինակներ առաջ բերելէ՝ ետքը զարձեալ ի
վկայութիւն կը կոչէ Գաղեն որ կ'ըսէ . « Եթէ խօթութիւնք մարմնոյ
մասնաւոր մասերուն տիրանան , այս խօթական թշնամին իր տեղէն
արտաքս մղելու համար միջոց մը չկայ այնչափ ազդու կամ այնչափ ա-
պահով որչափ որ գործածութիւնն ու ժիր վարժութիւնը » :

Այս ամէնքը միացեալ մարդուս կենաց վրայ քիչ ազդեցութիւն
չեն ըներ եւ ոչ ալ երկարատեւութեանը փոքրիկ պատճառ կը դառնան :

Յիրաւի առողջութեան ու կենաց երկարատեւութեան խնդիրն թե-
թեւ բան մը չէ , որ մենք այսպէս զանց առնենք իբր ջնջին եւ ուշադ-
րութեան անարժան խնդիր մը : Եթէ իւրաքանչիւր անհատի համար էա-
կան խնդիր մը կայ , անտարակոյս այն առողջութեան ու կենաց երկա-
րատեւութեան խնդիրն է : Ամէն ոք անբացառարար թէ ըստ Աստուա-
ծային պատուիրանաց եւ թէ ըստ բնական օրինաց , պարտաւոր է իւր
առողջութիւնը խնամելու , պահպանելու եւ իւր կեանքն երկարելու մի-
ջոցներուն վրայ խորհելու :

Մարմնամարդութեան էական ու գլխաւոր օգուտը մտաւորականին
վրայ ունեցած ազդեցութիւնն է : Նիւթական բանի մը (մարմնոյ) մշա-
կումն աննիւթականի վրայ ազդեցութիւն ընելն ոմանց գուցէ տարօ-
րինակ թուի : Սակայն եթէ մէկը քիչ մը նեղութիւն յանձն առնու , եւ
մտաց ու մարմնոյ մէջ եղած յարաբերութիւններն քննէ , պիտի տեսնէ
որ այս երկուքն իրարու հետ անբաժան կապերով կապուած են : Յի-

րաւի թէեւ միտքն ինքն աննիւթ է , սակայն իր ծնունդը նիւթականէ
մը կ'առնու : Ոչ ոք կ'ուրանայ որ ուղեղը մտաց , այսինքն մեր գաղա-
փարներու , խորհրդոց , կամաց ու զգացմանց , ծննդարանը կամ գոր-
ծարանն է , եւ այս գործարանը մեր մարմնոյ մէկ էական մասն է , այս
մասը մարմնոյ ուրիշ մասերուն պէս արիւնով կը մանախ , մարմնոյ ուրիշ
մասերուն հետ համակրութիւն ունի եւ ամբողջ մարմնոյ զօրանալուն
եւ տկարանալուն հաղորդ ու մասնակից է :

Տ. Քօմպ բարեգիտութիւն սովորելու կարեւորութիւնն (որով գի-
տութեամբ միայն կրնանք մեր գործարանաց եւ անոնց իրարու հետ
ունեցած յարաբերութեանց վրայ կատարեալ տեղեկութիւն ստանալ)
յիշելէ ետքը , մտաց ու մարմնոյ մէջ եղած սերտ յարաբերութեանց վրայ
այսպէս կը խօսի :

« Եթէ խորհրդոյ ու զգացման կարողութիւններն , կ'ըսէ , գործա-
րանութենէ (organisme) բոլորովին անկախ լինէին , ո՛ր եւ է յարաբե-
րութիւն չպիտի լինէր անոնց (խորհրդոյ ու զգացման կարողութեանց)
զարգացմանն եւ մարմնոյ կազմածինին մէջ . բայց որչափ ընդդիմակաց
է իրողութիւնը : Նրեխայութեան ժամանակն՝ այս մտաւորական կարո-
ղութիւններն անհաստատ ու տկար են , քանզի ուղեղն թերակատա-
բարար զարգացած ու կազմուած է . երիտասարդութեան ատենը՝ կ'ա-
ծին պատրաստականութեամբ եւ ուժով , քանզի անոնց նիւթական
գործիներն դէպի հասունութիւն առաջացեր են . ծեր հասակին մէջ նո-
րէն տկար ու յողողող կը դառնան գործարանութեան աստիճանաբար
եղծմանը պատճառաւ » :

Մտաց մարմնոյ հետ ունեցած սերտ յարաբերութեան ու համակ-
րութեան մէկ պարզ նշանն եւս յայտնի կը տեսնուի ոգեւոր հեղուկ-
ներ գործածողներուն վրայ : Նրբ մէկն իր կարէն աւելի գինի , օղի
կամ ուրիշ ոգեւոր ըմպելիք կը խմէ , ըմպելիքն արեան մէջ թափան-
ցելով արեան բուն յօրինաւոր վիճակը կը փոխէ . որով անմիջապէս ա-
նոր բոլոր ջգային եւ ուղղային գրութիւնը կը ներգործուի , եւ արբ-
շիւն իւր կարողութիւններն ըստ պատշաճի գործածելու անկարող կը-
դառնայ : Այս դէպքիս մէջ միտքն ընդհանուր խանգարմանը բացառու-
թիւն չկազմեր , այլ իւր գործարանի խանգարուելուն ինքն եւս կը-
խանգարուի , եւ իր արտայայտութիւններն փոխարէն սովորականին
պէս բանաւոր լինելու լոկ զառանցանք կը լինին : Միջոցիս սղութիւնը
մեզ չներեր ասոր աւելցընել շատ մ'ուրիշ օրինակներ ու երկար բա-
ցատրութիւններ յայտնապէս ցուցնելու համար , որ մարմնոյ տկարա-
նալովն ուղեղն եւս կը տկարանայ , եւ երկար ատեն շարունակ գոր-
ծելու եւ սաստիկ աշխատելու անկարող կը դառնայ , եւ ուղեղի զգած-
ուելովը միտքն եւս անբացառարար կը զգածուի :

Միշտ դիւրին է բան մը աւելի քան թէ շտկել : Այսպէս եւս դիւ-

ըին է մարմինը շուտով խօթութեան մը (օրինակի համար ժանտա-տենդի) ենթակայ ընել , եւ անկէ ուղեղին որով եւ մտացը հասած փնտի արդիւնքն անմիջապէս տեսնել , քան թէ մարմնամարդութեամբ եւ ուրիշ միջոցներով մարմինը զօրացնել , առողջութիւնը կազմուրել եւ ուղեղի անոնց բարուքմանը մասնակցելովը՝ մտաց աճած ուժեղութիւնն ու գործունէութիւնը փութով զգալ : Որչափ մարմնոյ վիճակը շուտով ու դիւրաւ կրնանք խանգարել , նոյնչափ մտացը յամրութեամբ , դժուարաւ ու սակաւ առ սակաւ կրնանք բարուրել ու կազդուրել :

Մտաց ու մարմնոյ առնչութեան վրայ այսչափով բաւականանալով դառնանք ուրիշ կէտ մը նկատողութեան առնելու :

Ամէնուն յայտնի է , եւ ամէն ոք կրնայ եւս անձամբ փորձել , որ ո եւ է անդամ իր կազմութեանը , բնածին կարին ու կանխագոյն սովորութեանցը համեմատ կրնայ գործունէութեամբ եւ ըստ պատշաճի մինչ սահմանեալ ժամանակ մը գործել : Իսկ եթէ աշխատութիւնը չափէ դուրս երկարի անդամը հետզհետէ խոնջելով կրնայ մինչ այն աստիճան հասնել , որ ալ բոլորովին անկարող դառնայ շարունակելու եւ մինչ անգամ շարժում մը ընելու : Այս աստիճան խոնջութեան հասնող անդամը քանի մը օր գործելու յարմարութիւն չունենար : Եւ եթէ աշխատութիւնն երկար ատեն ամէն օր անընդհատ այն աստիճան սարուի , որ անդամը կարի շատ խոնջի եւ գործելու գորութիւնը բարձր չափի եւ հանդէսելու համար պահանջուած ժամանակի միջոցը չունենայ , որպէս զի կարենայ իր նախկին գորութիւնն ու գործունէութիւնը դարձեալ ստանալ , այն ատենն այն անդամն օրէ օր կը բարձրանայ : Իսկ եթէ չափաւոր աշխատութենէ մը ետքը , մինչ գործող անդամը խոնջութեան աստիճանին չէ հասեր , թող տրուի որ պէտք եղած հանգիստը վայլէ եւ անկէ ետքը դարձեալ շարունակէ իր աշխատութիւնն , այն ատենն անդամն օրէ օր կը մեծնայ , կը զօրանայ , գործունէութեամբ կ'աճի եւ աղէկ ու դիւրաւ գործելու աւելի յարմարութիւն կը ստանայ :

Ուղեղը , միտքն եւս մարմնոյ ուրիշ անդամոց պէս իր կազմութիւնն եւ իր բնածին կարին համեմատ կրնայ փորձանքներով եւ արդիւնքով միայն սահմանեալ ժամանակ մը գործել . սակայն եթէ պարտաւորուի յոգնելէ ետքը դարձեալ գործելու , այն ատենը թէ եւ կրնայ իւր աշխատութիւնը շարունակել բայց սա տարբերութեամբ ուրիշ անգամներէն , որ ուղեղի խոնջութեամբ շարունակած աշխատութիւնը կամ ինքի փոքր օրհնակաւ արդիւնքներով կը բերէ կամ ամբողջ չբերէ : Բացի ասկէ եթէ երկար ժամանակ ամէն օր անընդհատ այս կարէ ու չափէ դուրս աշխատութիւնը շարունակուի , այն ատենն անտարապէս ուղեղը գործունէութեամբ գործելու եւ դիւրաւ սովրելու կարող

ղութիւնը կը կորսնցընէ եւ օրէ օր կը տկարանայ : Ոչ միայն սա այլ սաստիկ ու անընդհատ աշխատութեամբ տկարակազմ մէկու մը ուղեղը կրնայ բոլորովին խանգարուիլ կամ ուրիշ խօսքով ջուր դառնալ , որու ենթակայ եզոզը ժողովրդական , բայց բացատրիչ լեզուով փախուկ կը կոչուի :

Ուղեղի խոնջելուն առաջին նշանն աշխատութենէ ետքը զգացած այն փոքրիկ գլխացաւը կրնայ համարուիլ :

Յիրաւի մեր կազմութեան բնութիւնը կը պահանջէ որ մենք շարունակ միայն մէկ տեսակ աշխատութեամբ չզբաղինք , մեր աշխատութիւններն միայն մէկ անդամի չյատկացնենք , եւ ոչ ալ մարմնոյ բոլոր ուրիշ մասերն զանց առնելով միայն մեր մէկ անդամը կամ կարողութիւնը յար զործածենք , աշխատեցնենք կամ մշակենք , այլ ըստ կարեաց զանազան աշխատութիւններով զբաղինք , եւ այս աշխատութիւններն այնպէս կարգադրենք , որ մեր մարմնոյ ամէն մէկ մասը փոփոխակի զբաղի , իր բաժին աշխատութիւնն անբացառաբար ստանայ , իր կարեաց համեմատ գործէ , իրմէն պահանջուած պաշտօնը կատարէ եւ հարկ եղած հանգիստը վայլէ : Բարեգիտութիւնն ըստ մասին յենելով զանկաբանութեան վրայ (որն կը սովրեցնէ թէ ուղեղը շատ մը զատ մասերէ կը բաղկանայ , եւ այս մասերու ամէն մէկը յատուկ պաշտօնի մը սահմանուած է) կը պատուիրէ ոչ միայն մտաւորական աշխատութիւններն մարմնականին հետ խառնել , փոփոխաբար մտաւորական աշխատութենէ մարմնականի եւ մարմնականէ մտաւորականի անցնելով , այլ նաեւ նոյն մտաւորական աշխատութեանց նիւթերն ըստ կարեաց եւ ըստ յարմարութեան զանազան ընել , եւ միտքը բացարձակապէս երկար ատեն միայն մէկ նիւթի վրայ չյոգնեցնել , բայց յաջորդաբար մէկ նիւթէ անցնելով ուրիշի մը վրայ զբաղեցնել : Այսպէս մտաւորականի մէջ դիւրաւ յառաջադիմելու եւ անոր մշակութիւնն արդիւնաւոր ընելու համար մարմնամարդութիւնն անհրաժեշտ է . եւ պէտք է մասնաւոր հոգատարութեամբ առաջ տարուի եւ դասաւորութեանց մէջ որոշ ժամանակ մ'ալ անոր համար որոշուի : Նաեւ դասաւորութեան նիւթերն պէտք է այնպէս կարգադրուին , որ երկու խիստ ուշադրութիւն պահանջող կամ ուղեղ յոգնեցնող դաս իրարու անմիջապէս չյաջորդի , այլ անթերի ուշադրութիւն պահանջող դասի մը դիւրակատար դաս մը յաջորդի : Օրինակի համար , մաթեմատիկայի պարապելէն անմիջապէս ետքը բան մը գոց ընելու անցնելու չէ , այլ մաթեմատիկային պէտք է յաջորդի ընդօրինակութիւն կամ երաժշտութիւն , գոց ընելուն զեղաւորութիւն կամ թարգմանութիւն , եւ սոյնպէս եւս ուրիշ դասական նիւթերն : Ասիկայ զանկաբանական օրինաց համաձայն է , եւ փորձն ալ դիւրին է ամէնուն անձամբ կատարել եւ արդիւնքներն իրարու հետ բաղադատել :

Մարմնամարդութեան աղէկ ազդեցութիւնը կը տարածի հաւասարապէս եւս բարոյականին վրայ : Մարմնամարդութիւնն առաջին միջոց մ'է ողջխտո՛ սովորութիւն ստանալու : Գործունէութիւն , առողջութիւն եւ առողջութիւն այնչափ անբաժան են իրարմէ , որչափ որ ծուլութիւն , թուլութիւն եւ անառողջութիւն : Ծուլութիւնէ առաջ եւ կած մոլութիւններն ամէնուն յայտնի է եւ հարկ չկայ թուուան մասանց ընելու : Հաղուադիւտ է տեսնել որ ծոյլ ու թուլամորթ մարդ մը ողջխտո՛ լինի : որչափ մարմին մը տկար , թոյլ ու ծոյլ լինի , այնչափ աւելի տրամադիր ու ենթակայ կը լինի բղջխտո՛ութեան : Այս մասին ըսելիքնիս կը բովանդակենք Ռուսոյի մէկ խօսքովը « Մարմին մը առողջ պէտք է լինի , կըսէ , որպէս զի հոգւոյն հնազանդի . աղէկ ծառայ մը պէտք է զօրեղ լինի : Որչափ որ մարմինը տկար լինի այնչափ կը տկարացնէ ու կը խափանէ զհոգին » :

Մարմնամարդութեան կարեւորութիւնն առողջութեան շարունակութեանն եւ խօթութեանց խափանմանը համար յիշելէ , մարմնական կարողութեանց մտաւորականին հետ ունեցած սերտ առնչութիւններն ցուցնելէ եւ առաջինի զարգացումն երկրորդի կատարեալ եւ արդիւնաւոր զարգացմանն անհրաժեշտ լինելը ծանուցանելէ ետքը , տեսնենք ինչպէս զան (մարմնամարդութիւնը) դործ դնելու է որ անկէ յուսացուած բոլոր օգուտներն անթերի ձեռք բերուին եւ ո եւ է վնաս թէ եւ թեթեւ առաջ չգայ :

Ամէն վարժութեան նպատակը պիտի լինի վարժութեան ենթակայ եղած կարողութիւնը կարելի եղածին չափ կատարելութեան մօտեցնել , որպէս զի այն կարողութիւնը կարենայ իրմէն պահանջուած պաշտօններն դիւրաւ , արագարար ու յարմարապէս կատարել :

Արդ որպէս զի մարմնական կարողութիւններն կատարելութեան մօտենան , պէտք է զանոնք մտաւորականին ու բարոյականին պէս կրթութեան ենթարկել , եւ պէտք է որ այս կրթութիւնը մարդակազմական ու բարեգիտական օրինաց համաձայն լինի : Այն օրինաց համաձայն կրթութիւնը կը կոչուի բանաւոր մարմնամարդութիւն կամ դրութիւն բանաւոր մարմնամարդութեան : Երբ կրթութիւնն այն օրինաց համաձայն չդործադրուիր այն ատենն այն միայն մարմնամարդութիւն է , որու եւ բանաւոր մարմնամարդութեան մէջ նոյն տարբերութիւնը կայ որ ինչ կայ դասատուութեան ու դաստիարակութեան մէջ :

Բանաւոր մարմնամարդութիւնը կը պահանջէ որ նախ վարժութիւններն այն տեսակէն լինին , որ մարմնոյ բոլոր մասերն առանց բացառութեան հաւասարապէս առանձնաբար ու հաւաքաբար վարժութեան ենթարկուին , եւ իբր կանոն այս վարժութիւններն պիտի սկսին ամենապարզ եւ ամենադիւր շարժումներէ եւ աստիճանաբար անցնին աւելի բազապրիալ ու դժուար շարժումներու :

Երկրորդ մարմնական վարժութիւնը պէտք է յարմարցուին իւրաքանչիւրի հասակին , կազմութեանը , բնածին մարմնական կարին եւ նախընթաց սովորութեանցը : Եւ այս ամէնուն մէջ զլիւսաւոր կէտն այն է որ երբէք վարժութիւնը մինչ այն աստիճան չտարուին , որ վարժութենէ ետքը մեծ խնջութիւն զգացուի կամ մարմնական զօրութիւնն այնչափ սպառի որ վարժութիւնը կրկնելու անտրամադիր լինի անձը : Ի վերջոյ կարելի եղածին չափ պէտք է բացօթեայ եւ մաքուր օդով տեղի մը մէջ ըլլուին վարժութիւնք :

Մեր վարժարաններու մէջ առ հասարակ մինչ այժմ ամենեւին կարեւորութիւն չէ տրուած մարմնական կրթութեանց : Վարժարան մը չունինք ուր մարմնամարդութիւնը դաստիարակութեան մաս համարուելով մարմնական վարժութեանց համար որոշ ժամեր սահմանուած լինին : Եւ ինչպէս մարմնական վարժութիւններէ նոյնպէս եւս առողջապահական միջոցներէ զուրկ են մեծաւ մասամբ մեր ուսումնական հաստատութիւններն : Վարժապետք , հոգաբարձուք կամ տնօրէնք կամ բոլորովին անտեղեակ բարեգիտութեան օրինացն եւ կամ անոնց ամենեւին կարեւորութիւն չտալով զանց կ'անուան մինչ անգամ դիւրագոյն առողջապահական միջոցներն : Քիչ բացառութեամբ աշակերտք առտուընէ մինչեւ կէսօր եւ կէսօրէ մինչ իրիկուն վարժարանաց սրահներուն մէջ փակուած կը մնան , եւ իրենց չնչառութեամբ ապակահանեալ օդն , որ երբեմն սրահի փոքրութեան եւ աշակերտաց շատութեան պատճառաւ ներչնջութեան բոլորովին անյարմար է , կը ծծեն ու դարձեալ կը ծծեն : Աշակերտաց ուսման պարապելէ եւ ապականեալ օդը ծծելէ ազատ ատեննին միայն ճաշի համար թոյլ տրուած մէկ կամ մէկ ու կէս ժամ է : Աւելցնուր ասոր բարկաբարոյ վարժապետի մը խրատութիւններն , որ կը պահանջէ որ դասարանին մէջ եղած 30-40 աշակերտք այնպէս անվարժ ու անձայն նստին որ շնչիւն մը անգամ չելլէ : Կան ոմանք որ մինչ անգամ կըստիպեն երեխաներն որ իրենց երկու ցուցամատը դասագրքի երկու երեսին վրայ դնեն եւ այնպէս նստին , առանց աչքերնին գրքի վրայէն ասդին անդին դարձնելու :

Լոկ խօսքով բացատրութիւններ չեն բաւեր այսպիսի ընթացքի ու պահանջման մը անհեթեթութիւնն եւ երիցս յիմարութիւնը ցուցնելու : Փոխանակ արիւնն երակներուն մէջ եռացող , բնութեանէն յար շարժման մղուող մանուկ կամ պատանեակ մը լինելու , մէկը քարէ արձան կամ եղիպտական ձօժ մը լինելու է որպէս զի կարենայ այնպիսի յիմարական ու հակաբնական պատուէր մը կատարել :

Մեզ դիւրին չէ , եւ միջոցիս սղութիւնն եւս չներեր որ այսպիսի դրութեան մը վնասներն եւ մարմնամարդութեան ու առողջապահական միջոցներու պակասութեան թէ անմիջական եւ թէ ապագայ բոլոր գէշ հետեւանքներն մէկիկ մէկիկ քննել , ստորագրել եւ օրինակներով

ու վկայութիւններով ապացուցնել, կը բաւէ որ վտանգութեան արժանի անձի մը (Տ. Քօմպլի) այս նկատմամբ ըսածներն մէջ բերենք :

Տ. Քօմպլ (գորն արդէն յիշեր ենք) համանման դէպքի մը մէջ շարժման պակասութենէն եւ մարմնոյ զիրքի նոյնութենէն առաջ եկած վնասներն քննելէ եւ այս մասին հաւասարապէս ծնողաց եւ վարժապետաց ընթացքը պակասարակելէ ետքն այսպէս կը խօսի : « Զմտածող անձի մը, կ'ըսէ, գուցէ շիւրքին ու հաճելի թուի Ապոզոնի կամ սուսերամարտի մը զիրքով, առ ի օրինակ անդրիագործի, կէս օր մը կենալ, բայց փորձած ատենը պիտի զարմացմամբ տեսնէ որ քարահատութիւնն եւ ոտնաղացքը (1) բաղդատմամբ միայն զբոսանք են : Առաջին դէպքին (անշարժ զիրքին) մէջ դնելըքն, որք մարմնոյ զիրքը վեր ունին, անդադար ձգտման մէջ կը պահուին : քանի որ միւսին (ոտնաղացքին) մէջ շարժման ու հանդստեան այն փախոխութիւնն, որու համար բնութենէն սահմանուեր են, կը վայլեն : Մենք կրնանք զիւրաւ իրողութիւնը փորձի դնել, թեւեւիս աստը վայրկեան հորիզոնական զիրքով երկընցուցած պահելով : Ան, որու դնելըքը (համարելով իրօք ընդունակ այսպիսի բուռն ճիգի մը) այս ժամանակէն ետքը եթէ սաստիկ խոնջութենէն չցաւին, ինքզինքը պէտք է մասնաւորաբար բարեբախտ համարէ այնչափ զօրաւոր կազմութիւն մը ժառանգելուն համար :

Վերոյ յիշեալ սկզբունքը կը բացատրէ զգացուած այն ձանձրութիւնը, տկարութիւնն ու առողջական վնասն որք անսլալաբար կը յաջորդին բռնի պահուած մարմնական զիրքի մը կամ զանազանութիւնը սահմանեալ շարժման մը, որն ինչպէս շատ անգամ կը տեսնուի աղջկանց դաստիարակութեանը մէջ : »

Նայն հեղինակն ուրիշ տեղ եւս մարմնական վարժութիւնը դանց

(1) Tread-mill, որն մենք ոտնաղացք քարգմանեցիկնք, Անգլիոյ բանտերուն մէջ գտնուած տեսակ մը աղօթի մ'է, որն դարձնելու կը դատապարտուին կարգ մը պատժապարտներ : Ասիկայ դարձնելու համար բանտարգեալներն պետք է երկու մեքով աղօթի մ'ի անխարակիին դիմացն եղող հորիզոնական ձողք բռնեն եւ ոտքերնին ճախարակի հորիզոնական տախտակներուն վրայ կոխեն : ճախարակն անգամ մը շարժման մէջ դրուելէ ետքն ալ դարձնողներն ոչ կրնան դադրեցնել եւ ոչ ալ վայրկեան մը հանգցիլ : Քանզի երէ մէկը ձողք բողոս անխարակի տակի գոբը կ'իյնայ եւ երէ տախտակին վրայ չկոխէ անխարակը ծնկներն կը կոտրէ, այսպէս պարտաւորեալ կամայ ակամայ մինչ սահմանեալ ժամը պիտի գործէ : Պատիժ մը որոն լոկ անուրջ չարագործաց սարսափ կը պատճառէ :

աննելու գէշ հետեւանքը ցուցնել ուղերով եւ թոքացաւութեան մէկ մկրդնապատճառը սոյն դանցառութեանը տալով կը յաւելու :

« Զորրորդ պատճառը (թոքացաւութեան), որով թոքերուն պէտք եղած թթուածինի (oxygene) մատակարարութիւնը յաճախ կ'արգիլուի եւ խօթութիւն յառաջ կուգայ, կը ծագի արդի ընկերութեան նստական սովորութենէն եւ մտաց վիճակի ճնշմանէն, որն առաջինի (նստական սովորութեան) հետեւանքն է : Այժմ երբէք աստուածային օրէնք մը ընթեռնելի կերպով դրօշմուած է շնչաւոր բնութեան ո եւ է մէկ մասին վրայ, յիշաւի այն է որ կը յայտարարէ որ ԳՈՐԾՆԷՌՈՒԹԻՒՆԸ մարդկային առողջութեան ու երջանկութեան անհրաժեշտ պայմանն է : Մարդուս կազմութեանը մէջ ամէն գործարան ամենաբարձրէն սկսեալ մինչ ամենաստորն օրական ու սովորական վարժութեան նպատակաւ կազմակերպուեր են, եւ այս օրէնքն ինչպէս զընդերացն եւ ուղեղին համար նոյնպէս եւս թոքերուն համար անփոփոխ կը մնայ :

.....

Հետեւապէս երբ գոյութեան այս պայմանին կը հնազանդինք, եւ մարմնինիս գործունեայ կերպով ամէն օր քանի մը ժամ բաց ու մաքուր օդի մէջ կը զբաղեցնենք, արեան շրջանը կը զօրանայ ու մարմնի ամէն մասին մէջ հաւասար կըլինի, շնչառութիւնն աղատ ու խորին կը դառնայ եւ աշխուժութեան ու զուարթութեան զգացում մը կը ծագի, որն առողջութեան եւ ուժգնութեան հաւաստի ընկերացումն է :

.....

Ուստի ներշնչութեան նուազութեանն որով եւ թոքերուն պէտք եղած թթուածինէն զրկուելուն պատճառաւն է որ ճնշիչ կիրքերն ու կենաց նստական ընթացքն այնչափ վնասակար կերպով կը ներգործեն եւ մէկը կանխաւ թոքացաւութեան տրամադիր կ'ընեն : Արողութիւն մը որ խիստ կանուխ ժամանակէ ի վեր զխուած է եւ որն ծնողք, ուսուցիչք կամ երիտասարդք իրենք տեսութենէ կորսնցրնելու չեն : » (1)

Աշակերտաց ծծած սպականեալ օդի ներգործութեանը գալով դարձեալ կը դիմենք Տ. Քօմպլին եւ անոր զիտողութիւններն ու օրինակներն հոս կը դնենք :

« Երբ մէկը, կըսէ, գարեջուր շինողի տակառին միջի պարունակուած ածխաթթու (acide carbonique) կազին մէջ ընկղմուելով յանկարծակի իր կեանքը կը կորսնցրնէ, ամէն ոք իսկոյն այս ելքն առաջ ընկող բաւական պատճառի մը գոյութիւնը կը ձանձէ, եւ կրնայ գործողութեան եղանակը հետազօտել : Սակայն երբ անձ մը նոյն բայց

(1) The Principles of Physiology էրես 90 էր, 486 :

Թուլացած կամ ուրիշ բանի հետ խառնուած ածխածին կազի ներգործութեանը կ'ենթարկուի, ինչպէս թերի օդափոխութեամբ սենեկի, հասարակաց ժողովատեղի կամ բազմամբոխ եկեղեցւոյ մը մթնոլորտին մէջ, այս ներգործութեան արդիւնքը կրնայ միայն անհանգստութեան, նեղութեան կամ գլխացաւի զգացում մը լինիլ, որն թէեւ այն միջոցին անհաճոյ է, սակայն թոքերն զուտ օդ ծծածին պէս կը դադրի. անկէ ետքը մեծ նեղութիւն մը չզգայով կ'եզրակացուի որ թուլացած կազի կամ ապականեալ մթնոլորտի ներգործութեան ենթակայութիւնը մնաս մը չէ գործեր, հետեւապէս անոր կրկման առջեւն առնելու համար ո եւ է ջանք չըլլուիր: Սակայն արդեամբ եւ իրօք գործուած չարիքը մէկ դէպքին մէջ այնչափ ստոյգ է որչափ որ միւսին մէջ. միայն սա տարբերութիւնը կայ որ մէկուն մէջ մեղմ է, քանզի թուլացած կամ անօտրացած թոյնը փոքրագոյն ներգործութիւն ունի, քանի որ միւսին մէջ խտացեալ թոյնի արդիւնքն այնչափ սաստիկ որ անհրնար է զան անտես առնել:

Բայց թող որ անօտրացեալ թոյնը շարունակէ ներգործել, ինչպէս անձի մը սովորաբար ապականեալ օդին մէջ ապրած ատենը, մեղմ ներգործութեանց գումարն պիտի չարունակարար կուտակուի, մինչ առողջութիւնն աստիճանաբար նուաղելով կանխահաս մահ, այնչափ ստուգիւ որչափ որ միւս դէպքին մէջ, թէեւ ոչ անոր չափ շուտ, կը յաջորդի: Պարագայներն կրնան ուշացնել կամ չափաւորել այն ելքը, սակայն ապականեալ օդին առողջութիւնը պեղելու համար ունեցած միտումը, թէեւ աւելի զգալի մէկ դէպքին մէջ քան թէ միւսին, ճշդիւ երկուքին մէջ ալ նոյն է Ծ:

Նոյնն իւր գրքին ուրիշ մասին մէջ իւրաքանչիւր անձի յարմար շնչառութեանը պէտք եղած զուտ օդի քանակութիւնը քննելէ ու ցուցնելէ ետքը, ապականեալ օդ ծծելու դէպք արդիւնքն օրինակներով ապացուցնելու համար հետեւեալ պատմական ճշմարիտ դէպքերն մէջ կը բերէ:

« Ամենէն հոշակեալ օրինակը, կ'ըսէ, (որ շնչառութեամբ եւ արտահոսութեամբ (effluve) ապականեալ օդն իբր թոյն կը ներգործէ եւ մահ կը պատճառէ) Կալիֆորնի Սեւ փոս կոչուած աղետալի պատահարքն է: 1736 թուականին հնդկաց անգղիացիներէ ապստամբած ատենը, 146 անգղիացի 18 քառակուսի ոտք տարածութեամբ թշուառ բանտի մը մէջ ձգուեցան: Բանտն օդ ու լոյս ընդունելու համար միայն երկու փոքրիկ պատուհան ունէր, սակայն այս երկուքն ալ մի եւ նոյն կողմն լինելով օդափոխութիւնն անկարելի էր: Բանտին դրան գոցուելուն ու բանտարդելոց նեղութեան սկսիլն մէկ եղաւ, որուն յաջորդեց քիչ ժամանակի մէջ մոլեգին ու մահառիթ կռիւ մը պատուհաններուն մօտենալու համար: Չորս ժամէն ետքը անոնք որ արդէն չէին մեռեր

կաթուածական անձայն թմրութեան մէջ ինկեր էին, եւ վեց ժամէն ետքը իննըսուն ինը հոգի մահուան ծոցն անցեր էին: Հետեւեալ ատուուն երբ բանտին դուռը բացուեցաւ, 23 հոգի միայն կենդանի դուրսուեցաւ, որոնցմէ չատերն եւս սարսափելի մարմնական արտահոսութեանէն եւ օդի ապականութենէն պատճառուած նեխեալ ջերմով փճացան:

Գուցէ ըսուի որ այսպիսի աղետալի արկածք միայն բարբարոս ու սոգէտ ժողովրդի մը մէջ կը պատահին, եւ ոմանք ալ այնպէս պիտի կարծեն. սակայն մեր մէջ անգամ սոգիտութիւնն այնչափ կը տիրէ, որ համանման դէպքեր կրնան ցուցուիլ որք նոր ժամանակի մէջ տեղի ունեցեր են մեր երկրին (Անգղիոյ) մէջ: Այս պատահարքներէն մէկուն մէջ Քրէպ բանաստեղծն եղաւ վշտակիրն: Երբ Քրէպ տասը կամ տասնութէ մտարեկան էր, Պընկէյ դպրոց խրկուեցաւ. ուր հասնելէն քիչ մը ետքը իւր ընկերներէն մէկ քանիին հետ խաղի մը համար պատժուելով շան մեծ բոյն մը բանտարկուեցաւ: Քրէպ ուրիշներէն առաջ մըտաւ բանտն, եւ պատժապարտներով խճողեալ բոյնի օդը քիչ ատենի մէջ ժանտաբեր լինելու չափ ապականեցաւ. խեղճ տղան ի զուր կը կանչէր կը պօռար որ խեղդուելու վրայ եմ. ետքէն յուսահատութենէն քովը կեցող տղու ձեռքը սաստիկ խածեց. Քրէպ կը մեռնի, Քրէպ կը մեռնի, մռնչեց ձեռքը խածուողը: Հուսկ յետոյ պահապանը բոյնի դուռը բացաւ եւ թոյլ տուաւ որ տղաք դուրս ելլեն. « Հայրս, ըսաւ Քրէպ, վայրկեան մ'ալ ուշ բանայիր զիս մեռած պիտի դուռնէիր »¹:

Ասոր համանման դէպք մ'ալ մենք կրնանք յիշել որուն սկանաւոր եղանք վարժարանն եղած ատեննիս:

Օր մը աշակերտ մը յանցանքի մը համար, դատարանի տանիքն ելլելու սանդուխին տակը գտնուած փոսը բանտարկուեցաւ, որուն վերի կողմը չորս կամ հինգ քառակուսի մասնաչափ մեծութեամբ միայն լուսամուտ մը կար: Ի սկզբան աշակերտն անպատեհութիւն մը չզգայով հանդարտ կը կենար, բայց ատեն մը անցնելէ ետքը սկսաւ օդի ժանտութիւնն զգալ, եւ քիչ մը ետքը շնչառութիւնն անտանելի դառնալով « կը խեղդուիմ կը խեղդուիմ » սկսաւ կանչել: Եւ տառապանաց այս ճիչերուն ոչ ոք ըստ սովորութեան ականջ չդրաւ: Տղայն յուսահատած ծակին առջեւէն պատահմամբ անցնող ծառայ մը կանչեց, իբր թէ անոր ըսելիք բան մը ունի. ծառայն աչքերն ծակին մօտեցուցածին պէս, սղայն ձեռքը հաւքած փոշին անոր աչքերուն նետեց: Վարժապետը տղայի այս երկրորդ չարագործութիւնը լսելով զան փոսէն հանեց եւ սաստիկ զանահարեց, ստանց երբէք կասկածելու որ երկ-

¹ The principles of Physiology երկա 7, է. երես 469:

բարդ պատիժը համեմատաբար առաջինն չափ ու չափ թեթեւ էր առ շակերտին համար :

Տ. Ճէյմս Քօքս (որ Տ. Քօմպի Սկզբունք բարեգիտութեան գիրքն արդի բարեգիտական ու քիմիական գիտութեանցը յարմարեցնելով նոր տպագրութեամբ հրատարակեց) վերն յիշած երկու դէպքին քանի մը ուրիշ օրինակներ աւելցնելէ ետքը հետեւեալն եւս առաջ կը բերէ հանդերձ գիտողութեամբ :

Ա բայց մօտ ժամանակներս , կ'ըսէ , պատահած ամենատեսակի դէպքն , որ սաստկութեամբ կալիթայի սեւ փոսինը կը հաւասարէ , լընտընտէրի կոչուած խոլանտական շոգեհաստի մէջ տեղի ունեցածն եւ դաւ : 1848 ղեկտեմբեր մէկի զիշերն հարիւր եւ յիսուն ձամբորդ օգի փոթորկալից լինելուն պատճառաւ նեղ խղիկի մը մէջ խճողուեցաւ . սաստուան ծագելէն առաջ եօթանասուն հոգի խեղդուեր էր :

Կենդանական անտեսութեան ամենապարզ օրինաց տգիտութենէն պատճառուած թշուառութեան այս աղետալի օրինակաց մէջը , ծծուած օգի պատշաճ չափով թթուածինի բացակայութենէ առաջ եկած արդիւնքներն ահաբեկիչ գոյներով կենդանադրուած են : Բայց այն արդիւնքներն , որք համեմատաբար քիչ ապականեալ օգի չնշառութենէն կը ծագին , թէեւ այնչափ ակներեւ չեն , սակայն եւ այնպէս ոչ երբէք անիրական են : Նախախնամութիւնը վճռեր է , որ մաքուր օգի մէջ պարունակուած թթուածինի որոշ չափ մը բաւականանայ երակային արեան (1) որոշ եւ սահմանեալ քանակութիւն մը միայն օդաւորելու : Եթէ մենք զմեզ այս օրինաց յարմարեցնենք , առողջութեան ու փոփանաց մէջ կը քաղենք մեր վարձատրութիւնն . ուր ընդհակառակն եթէ զանց առնենք այն օրէնքն , եւ շարունակենք շնչել օդ մը որ ծանրարեւոնուած է կենդանական նեխեալ արտահոսութեամբ , եւ կը պարունակէ պէտք եղած քանակութենէն պակաս թթուածին եւ սոփորական չափէն աւելի ածխածին , այն ատեն այնչափ իրաւունք ունինք առողջութիւն , ուժգնութիւն եւ մտաւորական ու մարմնական

(1) Երակային արիւնն այն մութ կարմիր գոյնով արիւնն է , որ մարմնոյ ծայրի մասերէն սրտի աջ կողմը կը դառնայ , եւ անկէ ալ բոբերուն մէջ կը խրկուի . ուր օգի բթուածինի մեկ մասը կը ծծէ եւ խր պարունակած ածխածինի աւելորդը դուրս կուտայ : Այս փոփոխութեամբ կենսանոյց յատկութիւն կը ստանայ , եւ գոյնն ալ բաց կարմիրի կը փոխուի . բոբերէն սրտի ձախ կողմը կը վերադառնայ , ուր կէ նեարդ կոչուած արեան խողովակներու միջոցաւ մարմնոյ ծայրի մասերն կը խրկուի : Այս բաց կարմիր գոյնով արիւնը նեարդային արիւն կը կոչուի :

դործնէութիւն վայել սպասելու որչափ որ կրակն առանց օդի վառ պահել կամ ձուկը ջրէն դուրս ապրեցնել յուսալու (1) ք :

Եթէ այս մասին քիչ մը երկարօրէն խօսեցանք եւ յաճախ վկայութիւններ ու օրինակներ մէջ բերինք , պատճառն այն է , որ որչափ խնդիրն մեծ կարեւորութիւն ունի ու կենսական է , այնչափ աւելի անտես առնուած է մեր մէջ :

Ինչ հասակի եւ ինչ կազմութեան տէր ալ լինի մէկը , շուտ ուշ այն հակաբնական ընթացքի գէշ հետեւանքը պիտի զգայ . սակայն մատաղ հասակին մէջ , ուր մարդուս գրեթէ բոլոր կարողութիւններն կը ճգնին աճման պատճառաւ կազմութեան ունեցած մեծ պէտքը լցնելու , այն ատենն այնպիսի բռնազբոսեալ անգործութեան , սրահներու մէջ ժամերով փակուած մնալու եւ շնչափոխութեամբ ու արտահոսութեամբ ապականեալ օդը ծծելու հետեւանքն անհաշուելի է եւ գէշ արդիւնքն անդարմանելի :

Մենք դատարարակութեան որչափ ջատագով ալ լինինք , այսու առմենայնիւ պարտ կը համարինք խորհուրդ տալ ծնողաց , որ փոխարէն մատաղ հասակով դաւակնին տգէտ վարժապետներու յանձնելու եւ այնպիսի վնասակար դրութեան ենթարկելու , աւելի աղէկ կ'ընեն դաշտերու մէջ ի բաց թողուն կամ լեռներ , ձորեր չափելու խրկեն : Քանզի երկրորդ դէպքին մէջ , թէեւ այն անուանական ու ապարդիւն ուսումէն կը զրկուին մանկունք , դոնէ իրենց առողջութիւնը կը պահեն , խօթութեանց կանխաւ տրամադիր չեն դառնար , եւ զօրաւոր , տոկուն ու դործունեայ մարմին մը կը կազմեն , որով եւ յետագայ ամէն տեսակ աշխատութեանց աւելի յարմարութիւն ու տոկունութիւն կ'ունենան , եւ մարդկային պարտաւորութիւններ կատարելու կարող կը լինին , որն ըստ մեզ առաջինն չափ ու չափ օգտակար է :

ԻԳԱԿԱՆ ՍԵՌԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Երբ ազգի մը յառաջադիմութեան խնդիրն ուշադրութեան կ'առնուի , եւ յառաջադիմութիւն ձեռք բերելու միջոցներն կը փնտրուին ու կը քննուին , կը տեսնուի որ բոլոր միջոցներու մէջ առաջինն ու զլխաւորն ընդհանուրի դատարարակութիւնն է : Ասիկայ փորձի ու ապացոյցի անկարօտ ճշմարտութիւն մ'է , եւ ամէն լուսաւորեալ ազգ այսօր բոլորովին համոզուած է , որ առանց ընդհանուրի դատարարակութեանը ճշմարիտ յառաջադիմութիւն անկարելի է : Իսկ ընդհանուրի դատարարակութեան խնդիրն յուզած եւ միջոցներն փնտրած ատենը ,

(1) The Principles of Physiology երես 170 :

պէտք է նախ փնտռել, դանել ու որոշել այն որու անմիջական իշխանութեանն, ազդեցութեանը, խնամատարութեանն եւ ուղղութեանը կ'ենթարկուի անբացառաբար ազդի բոլոր անհատներն :

Արդեօք ի՞նչ է այն

Միթէ վարժապետք եւ վարժուհիք են :

Ո՛չ . քանզի նախ ազդի մը անհատներու մեծագոյն մասն երբէք վարժապետաց եւ վարժուհեաց ազդեցութեանը չենթարկուիր : Երկրորդ անոնց յանձնուած փոքրագոյն մասն արդէն հինգ-վեց տարի ուրիշի ազդեցութիւնը կրեր, եւ իր վարուց ու բարուց հիմնական ուղղութիւնն ոտայցեր է, եւ անկէ ետքը նաեւ միայն վարժարան եղած ատենը վարժապետաց ուղղութեանն ու խնամատարութեանն ենթակայ է, վարժարանէ դուրս դարձեալ իր նախկին խնամակալաց ազդեցութեան տակն է :

Միթէ քոյր կամ եղբայրն է :

Ո՛չ . քանզի երեխան իւր քրոջ կամ եղբոր սչ իշխանութեան տակն է եւ ոչ ալ ազդեցութիւնը կը կրէ :

Միթէ հայրն է :

Դարձեալ ո՛չ . քանզի հայրն ալ օրուան միայն մէկ կամ երկու ժամն իւր մատաղ դուակի քովը կը դանուի :

Բայց ո՞վ է այն :

ՄԱՅՐՆ :

Այո, ՄԱՅՐՆ է այն որու անմիջական խնամոցն ու հողատարութեանը բնականաբար կը թողուի անբացառաբար ամէն մարդ իր ծնած օրէն մինչ 5-6 տարեկան հասակը : Ամենէն առաջ մօր ձայնը կը լսէ նորածինը, մօր շարժումներն կը դիտէ երեխայն, եւ մօր բերնէն ու մօր արտասանութեամբը կը սովորի առաջին բառը : Մայրն է երեխայի օրնուցիչը, տածիչը, խնամատարն, ուղղիչը . մայրն է երեխայի ընկերը, մտերիւմը, խօսակիցը . մայրն է երեխային ֆիզիքական, մտաւորական ու բարոյական դաստիարակը . մայրն է երեխայի ամէն բանը . մէկ խօսքով մայրն է անոր մայրն :

Մօր խնամատարութեան թողուած այս 5-6 տարին, կրնայ ըսուիլ որ դաստիարակութեան նկատմամբ մարդկային կենաց ամենակարեւորն եւ առողջութեան նկատմամբ ամենավտանգաւորն է : Երեխայն այս մատաղ հասակին մէջ ամէն բանէ դիւրաւ կը զգածուի, ամէն բան աւնոր վրայ խոր ազդեցութիւն կ'ընէ . չնչին բան մը անոր առողջութիւնը կը խանդարէ մինչ շատ անգամ մահ կը պատճառէ, աղէկ հոգատարութեան կամ դէշ սնուցման նշանը մինչ կենաց վերջն անոր վրայ կը տեսնուի . կենաց շրջան մը չկայ որ ասոր չափ մեծ հոգատարութեան պէտք ունենայ :

« Այս առաջին հասակին (մատաղ մանկութեան) մէջն է, իրաւամբ կ'ըսէ Ֆենելոն (ինչպէս արդէն յիշուեցաւ), որ ամենախորին ազդեցութիւններն տեղի կ'ունենան, եւ որք հետեւապէս մեծ յարաբերութիւն ունին կենաց բոլոր մնացորդին հետ » : « Երեխայոց ուղեղի նիւթը, կը յաւելու ուրիշ տեղ, կակուղ է եւ օրէ օր կը կարծրանայ . մտացը գալով ոչինչ գիտէ, ամէն բան նոր է անոր համար . ուղեղի այս կակուղութեան պատճառաւ է որ ամէն բան անոր վրայ դիւրաւ կը արււպաւորուի եւ ամէն նորութիւն երեխայոց դարմացում կը պատճառէ : որք եւս շատ հետաքրքիր են » :

Պիւֆօն մարդու վրայ խօսած ատենը, մատաղահասակ երեխայներն յարմարապէս ամօձելու անհոգութենէն առաջ եկած չարիքներն յիշելէ ետքը, անոնց կենաց անապահովութեան չափը հետեւեալ հաշուով կը ցուցնէ :

« Մինչ երրորդ տարուց վերջը, կ'ըսէ, երեխայի կենքը կարի յոյժ անապահով է . չորրորդ եւ հինգերորդ տարեկան ընթացքին մէջ աւելի ապահով կը դառնայ, եւ վեցերորդ ու եօթերորդին մէջ երեխայի ապրելու հաւանականութիւնը, կենաց ո եւ է ուրիշ շրջանի միջինէն աւելի մեծ է : Դիտուած է որ մի եւ նոյն ատենը ծնած երեխայոց մէկ քառորդէն աւելին՝ առջի մէկ տարուան, մէկ երրորդէն աւելին՝ երկու տարուան, եւ դրեթէ կէսն՝ երեք տարուան մէջ կը մեռնին » (1) :

Եւրոպիոյ արդի վիճակագրութիւնք աւելի ստոյգ ու մանրախոյզ քննութեամբ վերի դիտողութիւնը կը հաստատեն, եւ կենաց իւրաքանչիւր շրջանի մէջ տեղի ունեցած մահկանացութիւնը կը ցուցնեն, որոց մէջ մատաղ հասակինն ուրիշ ամէնինն իր մեծութեամբը կանցնէ : Անգղիոյ ծննդոց, մահուց ու ամուսնութեանց ընդհանուր արձանագրութեամբ մեռնողներու մէկ երրորդէն աւելին կամ 1000 ի երեք հարիւր վախճուն ու հինգն՝ երրորդ տարին չըմնցուցած երեխայք են :

« Նկատելով, կ'ըսէ Տ. Քօմպ, որ մարդկային կազմածը կազմակերպուէր է շատ զէպքերու մէջ մինչ 60, 70 կամ 80 տարի տեւելու, խոհական մտաց արտաքոյ կարգի պիտի թուի երբ Անգղիոյ ու Կալիֆօնի մէջ պատահած եօթը տարուան (1838-44) մահուց բոլորն հաշուի առնելով, տեսնէ որ ամէն հազար մեռնողէ երեք հարիւր ինըսուն ու վեցի տարիքը հինգէն պակաս է, եւ որ Մանչեստրի ու Սէֆրտի մէջ պատահած մահուց համեմատութիւնը մինչ ամէն հազարի հինգ հարիւր տասն եօթ անգին դումարը բարձրանայ : Անհետեւ է կարծել որ Ստեղծողը մահկանացութեան այսպիսի համեմատութիւն մը նը-

(1) Buffon Histoire Naturelle Գ. 1. Ե .

չանակեց, իբր անխուսափելի ճակատագիր մարդու : Քանզի ընկե-
րութեան աստիճանաբար յառաջադիմութեամբն եւ դործարանական
կանոնացն աւելի ճիշդ մտադրութեամբը, կենաց սկիզբը տեղի ունե-
ցած մահուց համեմատութիւնն այժմ խիստ աւելի փոքր է, քան թէ
որ քննչ էր նախընթաց ժամանակաց մէջ (1) » :

Արդ զիտոգութիւններէն ու առաջ բերուած վիճակագրական տե-
ղեկութիւններէն կը տեսնուի, ինչպէս ալ կանխաւ ըսուեցաւ, որ կե-
նաց չըջան մը չկայ այնչափ դիւրասուն եւ յօժարաւէտ եւ ընդունակ
տպաւորութեան, ուղղութեան եւ ազդեցութեան եւ միանգամայն
այնչափ դիւրամիտ, անապահով ու վտանգաւոր, որչափ որ մատաղ
հասակը : Հետեւեալէս ո եւ է չըջան այնչափ մեծ խնամատարութեան
ու ընտանոք վարման կարօտութիւն չունի, որչափ որ այս չըջանն, եւ
սակայն այս չըջանի հոգատարութիւնը, անտեսութիւնն ու սնորհնու-
թիւն ըտլորովին մօրն թողուած է :

Արդ ամէն խոնկական միտք կրնայ դիւրաւ եւ իսկոյն զգալ մօր
գաստիարակեալ լինելու անչափ կարեւորութիւնն ու անհուն հետեւան-
քը :

Յիրաւի որչափ մեծ է երկու տղայոց միջի եղած տարբերութիւնը .
թէ եւ ընտթիւնն երկուքն ալ հաւասար տաղանդ, յարմարութիւն ու
կազմութիւն չնորձած լինի, երբ մէկուն մայրն գաստիարակեալ լինե-
լով կը ջանայ արթուն աչօք հսկելով մինչ իւր գաւակը դեռ մատաղ
հասակի մէջ է, անոր Ֆիզիքականը զարգացնել ու ամրացնել, եւ իր
բարոյական խրատներովն ու իմաստուն բանակցութեամբն անոր մտա-
ցը մէջ առաքինութեան ու իմաստութեան սերմը ցանել : քանի որ
միւսին մայրն անկիրթ լինելով ոչ միայն չկրնար զերծ պահել իւր գա-
ւակը խել մը ախտերէ, որ դուրս թէ համբիթաց են մանկան աճ-
մանն, այլ եւ իր սնտափ ու անհեթեթ բանակցութեամբը զան սնա-
պաշտութեան ու մոլութեան տրամադիր կ'ընէ :

Ամենէն արտակարգ մարդիկներէ մէկը (Մեծն Նապօլէոն) ըսեր է,
որ երախտալի մը սպառազ աղէկ կամ գէշ ընթացքը բոլորովին մօրմէն
կախում ունի, եւ իրեն համար իսկ ինքը վիպեր է, որ իր աննախօ-
րինակ բարձրութեան հասնելուն համար գլխաւորաբար մայրական մը-
չակութեան պարտական էր :

Սակայն մօր պաշտօնը միայն մանկատածութիւնը չէ, այլ նա
(մայրն) Նախախնամութենէն ուրիշ մ'ալ ընդուներ է, այն է լինել
մարդու անբաժան ընկերն, ճշմարիտ բարեկամն, անկեղծ խորհրդա-
կանը, ցաւակիցը, մխիթարիչն ու սիտիիչը :

Մարդս միշտ զինքը չըջապատողներու ազդեցութիւնն ուղղակի

կամ անուղղակի կերպով կը կրէ, եւ այս պատճառաւ եթէ մենք կը
ցանկանք մեզ աղէկ ու յարմար ընկերներ ընտրել, որչափ առաւել
ցանկալու եւ հոգ տանելու ենք այնպիսի ընկերի մը ընտրութեանն
որ մշտական ու անբաժան պիտի լինի մեզ համար, որուն հետ այն-
պիսի սերտ կապերով պիտի կապուիմք որ գրեթէ մէկ պիտի դառնանք
կամ ուրիշ խօսքով այն ընկերն ուրիշ է՝ մը պիտի լինի մեզ համար :

Արդ ո եւ է ընկեր առանց գաստիարակութեան ընտիր չէ, եւ
տղէտ մէկու մը ընկերութիւնը հաճելի չկրնար լինիլ եւ ոչ ալ խոր-
հրդակցութիւնն ու բարեկամութիւնը մեծ օգուտ կրնան ընծայել :

Բայց ով է մայրն եւ այս մեր ընկերն կամ ուրիշ էն, եթէ ոչ այն
մատղաջ երեխայն, նորահաս աղջիկն, դեռտիթիթ օրիորդն որ քիչ
ատենէ մէկ վիճակէ միւսի մը անցնելով յանկարծ դժուարին ու միան-
գամայն կարեւոր պաշտօններ ստանձնելու կը կոչուի :

Այս ըսածներէն յօշափելի կերպով կըզգացուի իդական սեռի
գաստիարակութեան անհրաժեշտ պէտքն, այնչափ կարեւորութիւնն
ու անհուն հետեւանքը : Սակայն հակառակ այս ամէնուն, այս սեռի
գաստիարակութիւնը մեր մէջ ըտլորովին զանց առնուած է, եւ բացի
քանի մը եւրոպականացեալ քաղաքներէ ուրիշ տեղ անոր նշմարն ան-
գամ չտեսնուիր :

Ասոր պատճառն ըստ մեր կարծեաց գլխաւորաբար երկուք են :
Նախ մեր մէջ իդական սեռի գաստիարակութեանը կարեւորութիւն
չտրուիր, եւ անկէ առաջ եկած օգուտներն ալ ըստ արժանւոյն քըն-
նուած եւ ոչ ալ հասկըցուած են : Մեր մէջ գեղեցիկ սեռի գաստիա-
րակութեանը վրայ, փոխանակ իբր մարդկութեան անհրաժեշտ եւ
մայրութեան ամենօգտակար ստացում մը նայելու, կը նայուի իբր վե-
րադիր զարգ մը՝ անոր (այն սեռի) բնածին սիրելութիւնն ու գեղեց-
կութիւնն առաւելութեամբ ցուցնելու համար, եւ կամ երգել պարել
եւայլն իսկէս վայելուչ կատարելութիւն մը աւելցուցած անոր ընական
նազելութեանն ու շնորհացը :

Երկրորդ իդական սեռի գաստիարակութեանը յարմար վարժապետք
ու վարժուհիք կը պակսին, եւ բաց ի Պօլսէ, Չմիւսնիայէ ու Տփլիս-
սէ ուրիշ տեղ վարժուհի մը գտնելը գրեթէ անկարելի է, եւ այս սա-
կաւութեան գլխաւոր պատճառը՝ վարժապետութիւնը մեր մէջ, հա-
կառակ ամէն լուսաւորեալ մտաց, ըստ արժանւոյն չպատուելուն եւ
կամ լաւ եւս ստորին արուեստ մը համարուելուն կրնայ արուիլ :

Ժամանակ է որ արթնանք, ջանանք ու ճգնինք գտնել այն որ
մեզ ամենէն աւելի կարեւոր է, եւ բոլոր նախապաշարունակներն մէկդի
ձգելով, իբր անարժան լուսաւորութեան հետամուտ ազգի մը, ոչ մի-
այն իդական սեռն ամեն խնամով գաստիարակելու սկսինք, այլ եւ ա-
ւելի պատուենք զանոնք որք վարժապետութեան աստիճանին հասեր

¹ The Principles of Physiology երես 302 :

են, եւ այն պաշտօնը կատարած լինիլը նոր վկայական մը համարենք
ամենաբարձր ընկերութեանց մէջ ընդունելու համար :

Գաստիարակութիւնն, ինչպէս որ արդէն ըսուեր է, որպէս զի բո-
լորովին արդիւնաւոր ու օգտակար լինի, պէտք է ի սկզբանէ անտի
մասնաւոր նպատակ ունենայ, ուղղութիւն առնու եւ իւրաքանչիւրի
արամադրութեանց յարմարցուի : Իգական սեռը արամադրութեամբ վի-
ճակով պարտաւորութեամբ ու պաշտօնով զանազանելով արականէն,
պէտք է որ անոր դաստիարակութիւնն ալ սարբեր լինի եւ տարբեր
ուղղութիւն ստանայ : Ի բաց թողեալ ուրիշներն, յիշելու է միայն այն
որ իգական սեռին վերաբերեալներուն մէջ ամենէն գլխաւորն ու մի-
անգամայն կարեւորն է — այն մայրական պաշտօնն է, ուրիշ խօսքով
մանկատաճութեան կամ մատաղահասից զարգացմանը վրայ աշայուրջ
հսկողութեան եւ զանոնք յարմարապէս խնամակալելու, մուսցանելու
ու դաստիարակելու պաշտօնն : Այս պաշտօնը մայրութեան այնչափ
յատուկ ու սեպական է, որ ոչ ոք առանց ընութեան դէմ մեղանշելու
կրնայ ստանձնել եւ կամ անոր ձեռնամուխ լինիլ : Հետեւապէս իգա-
կան սեռի դաստիարակութեան առաջին նպատակը պիտի լինի պատ-
րաստել աղջիկներն իրենց ապագայ այս առաջին ու կարեւոր պաշտօնն
ըստ պատշաճի կատարելու համար . միւս պաշտօններն երկրորդական
լինելով միայն երկրորդական մտադրութեան արժանի են :

Չնք վարանի գեղեցիկ սեռի ուսանելեացը մէջ դասելու բարե-
գիտութիւնն ու մարդակազմութիւնն, իբր խիստ կարեւոր ու օգտա-
կար ուսմունք :

Բարեգիտութեան ու մարդակազմութեան ուսումն այն մտքով հաս-
կընալու չէ, ինչպէս բարձր դպրոցներու մէջ դաս կը արուին իրենց
մանրամաս պարագաներովը, մութ տեսութեամբն եւ երկբայական կէ-
տերովը հանդերձ . այլ մեր առաջարկածն՝ այս գիտութեանց գլխաւոր
ու պիտանի կանոնաց պարզ ու մէկին լեզուով բացատրութիւնն է .
որոց մէջ ի մասնաւորի յիշելու է շնչառական, մարսողութեան եւ ու-
րիշ կենսական գործարանաց օրէնքներու բացատրութիւնը : Մեր պինդ
համոզումն է, որ առանց ուսումն ոչ միայն դիւրին ու հաճոյական է,
այլ նաեւ օտար լեզուաց ուսումնէն, որոց շատ անգամ տարիներ կը
վասնուին ի գուր, շատ աւելի օգտակար ու անհրաժեշտ է : Վատին ա-
ռած մը կ'ըսէ, այն որ ինքզինքը չճանչեր, տգէտ է . եւ յիրաւի ի՞նչ
մեծ տգիտութիւն քան թէ մեր իսկ ունեցածին, մեր մարմնոյ մէջ ե-
ղած գործարանաց վիճակին ու գործողութեանն եղանակին անմասօթ
ու անտեղեակ լինիլն : Միթէ զարմանալի չէ՞, որ մեզ ամենէն կարե-
ւորն — մեր կենդանութիւնն, առողջապահական միջոցներն — զանց
առնելով երկրորդական առաւելութիւններ ձեռք բերելու հետամուտ
կը լինինք : Միթէ իմաստութիւն է, որ փոխարէն տուն մը գալիք հա-

ւանական հեղեղներուն դէմ տոկայու վիճակին մէջ դնելու, անոր հիմն
ամրագնդելով եւ չորս դին պատնէշ կանգնելով ու խրամ փորելով, մի-
թէ խնէք է՞ կը կրկնենք, կը հարցնենք, որ փոխարէն խիստ հաւանա-
կան ապագայ չարեաց խափանմանը համար նախապատրաստութիւններ
ու նախազգուշութիւններ ձեռք առնելու, ելլել նախ տան պատերն
նկարներով կամ ուրիշ պաճուճանքներով զարդարել, եւ տունը գալիք
հեղեղներուն դէմ անպատասպար թողուլ, որ եկած ատենը նկարներուն
ու պաճուճանքներուն հետ տունն ալ ի հիմէ քանդեն, քչեն, տանին :

Այս գիտողութիւնը հաւասարապէս արական սեռին ալ կը վերա-
բերի . քանզի այս սեռին ալ փոխարէն ուրիշ ուսումներէ առաջ բարե-
գիտութեան գլխաւոր օրէնքներն սովորեցնելու, որով եւ առողջութիւ-
նը, մարդուս այն առաջին պէտքն, ապահովելու, կը սովորեցնենք խել
մը գաղղիւրէն, անգլիերէն ու տաճկերէն բառերու մեկնութիւնն, ու
րոց ուսումն ոչ առաջինի չափ կարեւոր եւ անբացառաբար ամենուն
անհրաժեշտ է եւ ոչ ալ հետեւանքն այնչափ մեծ ու անմիջական :

Անոնք որ կը նկատեն գեղեցիկ սեռը նախասահմանեալ միայն մար-
դուս հաճելի ընկեր ու քաղցր կէս լինելու, գուցէ մեր այս արտայայ-
տած գաղափարին մէջ մեզ հետ չհամաձայնին, եւ ճշմարիտ մայրեր
պատրաստելու առաջարկութիւնը չնչին ու երկրորդական բան մը հա-
մարեն, եւ հետեւապէս ցանկան գեղեցիկ սեռն միայն հաճոյական ու
վայելուչ ստացումներով զարդարել ի վայելս արականին : Սակայն մեր
փնտածը մարդկութեան օգուտն եւ Ազգին պիտանի անդամներ պատ-
րաստելն լինելով, չենք վարանի ըսելու, որ կին մը որչափ բարեմաս-
նութեամբք, նազելութեամբ, գեղեցիկութեամբ օժտեալ եւ վայելուչ
ու շնորհալի ստացումներով զարդարեալ լինի, եթէ մարական պաշտօ-
նին տղէտ է, եւ ամուսնական պարտաւորութիւններն ըստ պատշաճի
կատարելու անկարող, այն կինը կատարեալ լինելէ շատ հեռու է, եւ
իւր սեռի էական կոչմանը կը պակսի :



Մինչ այժմ ջանացինք ցուցնել որ յառաջադիմութիւնն անհրաժեշտ պէտք մ'է մարդու համար, որ ճշմարիտ յառաջադիմութիւնն անկարելի է առանց ճշմարիտ դաստիարակութեան եւ որ մեր մէջ դաստիարակութիւն չկայ, այլ ունեցածնիս միայն հնացեալ դասատուութիւն մ'է, որու ապարդիւն ու անպիտան լինելուն տարիներու փորձն անհերքելի ապացոյց է: Այժմ փնտռենք, տեսնենք իբր Ազգ, ապագայի վրայ խորհող Ազգ, յառաջադիմութեան ցանկացող Ազգ, ինչ հողացողութիւններ, պատրաստութիւններ կամ կարգադրութիւններ ըրեր ենք դաստիարակութիւն ունենալու համար, դաստիարակութիւնը մեր մէջ ծաւալելու եւ ընդհանրացնելու համար:

Ասիկայ խմանալու համար ո՛ւր դիմելու է.

Տաճկաստան, Պոլիս:

Եւ ինչո՞ւ Տաճկաստան եւ ո՞չ Պարսկաստան կամ Ռուսաստան:

Քանզի Պարսկաստանի Հայերն թուով խիստ սակաւ են, եւ իրենց բնակած երկրի դիրքին ու խաւար վիճակին պատճառաւ իրենք եւս գորկի մնացեր են լուսաւորեալ ու յառաջադիմ գաղափարներէ: Քանզի Ռուսաստանի Հայերը թէեւ թուով ազգի փոքրագոյն մասը կը կազմեն եւ ամէն յարմարութիւն ունին յառաջադիմելու, սակայն Ռուսաստանի մէջ ազատութիւնը կաշկանդուած է, ազատական գաղափարներն կը ճնշուին, պետութիւնը յառաջադիմական քայլերու դէմ խոչընդոտ արգելքներ դրեր է, բոլոր ժողովուրդը, մանաւանդ հպատակ ազգերն, պարտաւորուած են կառավարութեան ուղածին ու դիտաւորութեանց համեմատ խորհիլ ու գործել, մտանաւորենք պատճառներն եւ կարճ ու պարզ խօսքով յայտնենք որ եթէ երեք հայ մէկ տեղ ժողովուրին եւ յառաջադիմական ու ազատական գաղափարներ արասցայտեն, հետեւեալ գիշերն սեւ կառքը կը նստեցուին եւ կառաջնորդուին, ո՛ւր:

Սակայն Տաճկաստան իւր ամէն քաղաքական պակասութիւններով ըն, ընչից, կենաց ու պատուոյ անապահովութիւններովը հանդերձ, Պարսկաստանի եւ Ռուսաստանի հետ բաղդատելով մեծ առաւելութիւններ կընծայէ Հայոց համար: Հոն Հայերն ուրիշ տեղերէ աւելի բազմաթիւ են, հոն Հայերն ինչպէս եւ ուրիշ հպատակ ազգերն բաւականին մտաւորական ազատութիւններ կը վայեն, հոն յառաջադիմական գաղափարներն բոլորովին պրկուած ու կաշկանդուած չեն: Եւ Տաճկաստանի մայրաքաղաքն է Պոլիս: Ասիկայ տէրութեան ուրիշ ամէն քաղաքներէն աւելի եւրոպականացեալն է, եւ Եւրոպիոյ հետ ունեցած անհասի յարաբերութեանց պատճառաւ եւրոպական գաղափարներն ու

լուսաւորութիւնը դիւրաւ հոն մուտ կը գտնեն: Հոն, Պոլսոյ մէջ, դանուած աղքայիներն իրենց թըւոյն բազմութեամբը բոլոր Պարսկաստանինը կ'անցնին, բոլոր Ռուսաստանի մէջ վեցերորդն եւ բոլոր Հայոց մէկ քսաներորդը կը կազմեն: Հոն Հայերն ունին դարերէ ի վեր տէրութենէն ճանչուած Պատրիարքարան, իբր կեդրոն աղքային ներքին գործոց:

Ի նկատի առնելով այս ամէնը, Պոլսեցիք անբաղդատելի եւ անչափ առաւելութիւններ ունին ուրիշ ո եւ է տեղի կամ քաղաքի աղքայնոց վրայ: Հետեւապէս Պոլսոյ կը վերաբերի եւ անկ է Ազգային լուսաւորութեան զրօշը բարձրացնել եւ ուրիշ տեղի աղքայնոց կարապետ լինիլ այս ասպարէզին մէջ: Ուստի եւ բնական է եւ իրաւունք որ ուրիշ տեղի աղքայիներն Պոլսոյ վրայ նային իբր կեդրոն աղքային լուսաւորութեան, քաղաքականութեան եւ Պոլսեցիներէ սպասեն իրենց յառաջադիմութիւնը: Պոլսեցիք եւս զգալով այն Սահմանադրութիւն մը ծրագրեր եւ Ազգային վարչութիւն մը կազմելու են Տէրութեան հաւանութեամբն, որով եւ ստանձնելու են աղքային գործոց անօրէնութիւնը:

Առանց քննելու Սահմանադրութեան էական արժէքն եւ անոր ընծայած օղուտներն կամ վնասներն, կը բաւէ յիշել որ անով Տէրութիւնն աղքայնոց շնորհեր է բան մը, միայն մէկ բան, այն է մէկ տեղ ժողովուրի եւ աղքային գործոց վրայ խորհիլ եւ աղքային գործերն ալ նօրինել ըստ տրամադրութեան Սահմանադրութեան: Այս մէկ շնորհը դնահատողներու եւ անոր արժէքն իմացողներու համար ամէն բանի մէջ ամէն բան է: Պոլսեցիք եւ բոլոր Հայերն զան դիտեն:

Սակայն անկէ մինչ այժմ ինչ երեւելի օգուտ քաղեր ենք:

Ոչէ՞:

Տեսակ մը երեխայք կան, որք կը գոչեն, կուլան թէ անօթի ենք, կաթ կուղենք. երբ կաթ կը տրուի իրենց, այն ատենը փոխարէն ու տելու եւ զան մարսելէ ետքը դարձեալ ուղելու, կըստին ի սկզբանէ անտի եւ առանց համը տեսնելու քիչ է ըսել, եւ կամ ամանէ աման լցնելով, տեղէ տեղ փոխադրելով եւ հետը խաղալով զան թափել ու վատնել:

Մենք այս տեսակ երեխայոց կը նմանինք:

Պօռացիք, լացիք, Սահմանադրութիւն մը ձեռք բերինք, եւ փոխարէն անոր ամենափոքր օգտաւէտ կէտերէն անգամ օգուտ քաղելով եւ ամէն ճիգ թափելով մեր բարոյական ու մտաւորական վիճակը բարւոքելու, որով եւ մեզ ապագայ մը պատրաստելու, սկսեցանք ի սկզբանէ անտի զան (Սահմանադրութիւնը) գործադրելէ եւ անոր տրամադրութիւններն փորձելէ առաջ, անոր վերաքննութեամբն զբաղիլ, եւ կամ աննշան խնդիրներու լուծմամբը ժամանակ վատնել:

Իսնանք Սահմանադրութիւնը, նախ կարգանք այս խնդրի (դաս-

տիարակութեան) նկատմամբ ի՞նչ է կարդադրուեր, ետքէն տեսնենք անոնք՝ որ Ազգն առաջնորդելու եւ ազգային գործերն ըստ Սահմանադրութեան տնօրինելու պաշտօնն ստանձնելն են, եւ որոց յանձնուելն է Սահմանադրութեան գործադրութիւնն, անոնք տեսնենք այս կանոնադրութեանց քանի կէտերն գործադրել կամ փորձ մը անգամ ըրել են գործադրելու :

« Ե. ԱԶԳԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԿ

33. Ուսումնական խորհուրդը 10 ուսումնական աշխարհականներէ կը բաղկանայ :

34. Ուսումնական խորհրդին պաշտօնն է ազգային դաստիարակութեան ընդհանուր տեսչութիւնը :

Իր պարտականութիւնքն են՝ ազգային վարժարանաց բարեկարգութեանը հսկել, ազգային դաստիարակութեան ընդհանուր հիմնադիր մը եւ դպրոցական կանոններ հաստատել, եւ անոնց համեմատ՝ ազգային վարժարանաց մէջ միօրինակ ընթացք մը որոշել թէ ուսման եւ թէ ուսուցման, սկզբնական գիտելեաց ուսումը ծաւալել, աղջկանց դաստիարակութեանը յատուկ կերպով հոգ տանել, սոյն նպատակով հաստատեալ ընկերութեանց խրախոյս տալ եւ ձեռնտու լինել, ազգային դաստիարակաց կացութիւնը լաւցընելու եւ ապագան անդորրելու խնամ անել, ազգին մէջ բանիրուն դասատուներ հասցնելու եւ դրպրոցաց ընտիր դասագիրքներ պատրաստելու փոյթ ունենալ :

35. Ուսումնական խորհուրդը պէտք է իւր կողմէն ամենայն ջան ի գործ դնէ որ՝ թէ Պօլիսի, եւ թէ դաւառներու մէջ ամեն թաղ ըսկզբնական դաստիարակութեան դպրոցներ ունենայ, նոյնպէս Պօլիս եւ առաջնորդանիստ քաղաքները մէջ մէկ ազգային ուսումնարանն ու նենան դասական ուսմանց համար : Այս ուսումնարաններէն վկայականով կ'եկնեն աշակերտները եւ մասնաւոր ուսմանը ընողներուն դասատուութեան վկայագիր ալ կը տրվի :

36. Ուսումնական խորհուրդը կ'որոշէ ազգային վարժարանաց մէջ ընդունվելու դասագիրքներն ու դասատուները . իսկ քրիստոնէական վարդապետութեան դասագիրքն ու դասատուն կրօնական ժողովէն պէտք է որ խնդրէ :

37. Ուսումնական խորհուրդը կը նախագահէ ազգային վարժարանաց տարեկան քննութեանը . իսկ քրիստոնէական վարդապետութեան մասին քննութիւնը կրօնական ժողովին ձեռօքը կը ըլլայ : »

Ազգային վարչութիւնը 19 մեծ տարիներէ ի վեր կազմուել է . եւ Ուսումնական խորհուրդ մը ընտրել, հաստատել եւ ազգային ընդհանուր դաստիարակութեան հոգացողութիւններն անոր յանձնել է :

Ուսումնական խորհուրդը համարատու է վարչութեանն եւ վար-

չութիւնն Ազգին . հետեւապէս իրաւունք է որ հարցերն Ազգային վարչութեան ուղղուին :

Ուստի կը հարցուի ամէն ակնածութեամբ Պատկառելի վարչութեանէն, այս 19 տարուան մէջ ի՞նչ է ըրել դաստիարակութեան նկատմամբ, իր յանձն առեալ պարտաւորութիւններէն ո՞րմէ կը կատարել է :

Ազգային դաստիարակութեան համար քանի՞ ընդհանուր հիմնադիր պատրաստել, ծրագրել ու քննութեան տակ ձգել է :

Գալրոցական ի՞նչ կանոններ հաստատել է :

Ազգային վարժարանաց մէջ ուսման եւ ուսուցման ո՞ր միօրինակ ընթացքն ընտրել ու հրատարակել է :

Սկզբնական գիտելեաց ուսումն ո՞ր ծաւալել է :

Ն՞րբ, ո՞ր ժամանակ աղջկանց դաստիարակութեան խնդիրն ի մէջ ըրել, անոր լուծմանը պարագել եւ անոնց դաստիարակութեանը համար հոգացողութիւններ ըրել է :

Ազգային դաստիարակաց կացութիւնը լաւցընելու եւ ապագան անդորրելու համար ի՞նչ միջոցներու դիմել է, կամ ի՞նչ կերպով եւ ե՞րբ խնամ տարել եւ կամ լոկ մտածութեան նիւթ ըրել է :

Ազգին մէջ բանիրուն դասատուներ հասցընելու համար ի՞նչ պատրաստութիւններ ըրել ու փոյթ ունեցել է :

Հարցերն անսպառ են եւ այս պարտաւորութիւններէն ո՞ր մէկը վարչութիւնը կատարել, ձեռնարկել, կամ գէթ իւր օրական խնդիր առաջարկել ու անոր լուծմանը պարագել է :

Ի՞նչ է այս ամէն հարցերու պատասխանը :

Ո՛չ . ո՛չ մէկ . ո՛չ ինչ . կրքէք . ո՛չ մէկ ժամանակ . ամենեւին եւ բոլոր բացասական մակրայներն . — զրոյ :

Կամ դաստիարակութեան խնդիրն առաջին ու ամենակարեւոր խնդիր է եւ կամ երկրորդական ու անկարեւոր :

Նիւթ ըսուի երկրորդական ու անկարեւոր, կը ցուցնենք բոլոր Ներուպայ : Ներուպոյ դահլիճներու մէջ տեղի ունեցած առաջարկութիւններն, բանախօսութիւններն ու վիճարանութիւններն :

Տէրութեանց հեռզնեաէ սահմանած օրէնքներն, հանած վճիռներն, ըրած կարգադրութիւններն, վասնած միլիոններն :

Ներուպոյ լրագրութեան էջերն :

Համայն Ներուպոյ դաստիարակութիւն կոչելն :

Իսկ եթէ առաջին ու ամենակարեւոր, ապա ուրեմն ինչու մինչ այժմ իր օրական խնդիր մէջ չբերուեցաւ, խորհրածութեան, քնննութեան ու վիճման նիւթ չդարձաւ, եւ անոր լուծմանը չպարագուեցաւ :

Արդեօք ասկէ աւելի ի՞նչ ծանր խնդիրներու դրապեցաւ վարչութիւնն այն կրկար միջոցին մէջ :

Մի՞թէ մեր արտաքին քաղաքական խնդրովը, մի՞թէ մեր ներքին բարեկարգութեան, մի՞թէ մեր օրէնսդրութեան, մի՞թէ մեր վաճառականութեան, մի՞թէ մեր ելուժտական, մի՞թէ մեր զինուորութեան : Ի՞նչ խնդիրներով զբաղեցաւ Վարչութիւնը . ի՞նչ խնդիրներ ուշադրութեան, զբաղման աւելի արժանի են քան թէ դաստիարակութեանը . ի՞նչ խնդիր լուծումը մեզ համար աւելի մեծ հետեւանք կրնայ ունենալ, աւելի կենսական է քան թէ դաստիարակութեանը : Մասիսի թերթերէն մէկուն մէջ կը գտնենք ասոնց պատասխանը — Վարչութեան ժաւերն սպառող խնդիրներն .

- Խնդիր զիւանական բարեկարգութեան ,
- » Ներքին կանոնադրութեան .
- » Ատենական կանոնաց .
- » Ազգային հին պարտուց .
- » Տեղեկագրի ընտրութեան կրօնական ժողովոյ .
- » Կաթողիկոսական եւ Պատրիարքական յարաբերութեանց .
- » Ընտրութեան Ազգ. վարչութեան կրօնական ժողովոյ .
- » Տեղեկագրի գաւառական հարստահարութեանց .
- » Համարատուութեան Ազգ. վարչութեան Քաղ. ժողովոյ .
- » Կեդրոնացման եւ ասպակեղրոնացման :
- » Ծրագրի յարաբերութեանց , Կաթողիկոսին Կիլիկիոյ ընդ Ազգային Կեդրոնական վարչութեան :
- » Վաւերացման ընտրութեան Կաթողիկոսին Կիլիկիոյ .
- » Աղթամարայ եւ Սոյ Կաթողիկոսութեանց եւայն : »

Մենք եւս միանալով յօդուածին գրողին հետ (որու ոչ անունը կրցանք իմանալ եւ ոչ ալ յօդուածի շարունակութիւնը տեսնել, Մասիսի հետեւեալ թերթերն ձեռքերնիս չհասնելուն պատճառաւ) կը հարցնենք. բայց ո՞ր է խնդիր ազգային ընդհանուր կրթութեան, ո՞ր է այդ կարեւոր եւ կենսական խնդիրն (1) :

Իրաւ է որ ամէն խնդիր իր առանձին կարեւորութիւնն ունի եւ հետեւապէս իր լուծմանը պարագայուելու պահանջ : Սակայն ամէն ժամանակ ամէն տեղ օրէնք է եւ արդարութիւն, որ նախ կարեւորագոյն խնդիրներն ուշադրութեան առնուին եւ նախ անոնց լուծմանը պարագաւի ետքէն երկրորդական խնդիրներու : Ինչպէս որ անհատից շահերն ընդհանրութեան շահերուն առջեւ կը փոքրնան, կը սղեն, յօշոնջութեան կը վերածուին, նոյնպէս եւս առանձին ու անձնական խնդիրներն ընդհանրական խնդիրներու առջեւ, իրենց նշանակութիւնն ու կարեւորութիւնը կը կորսնցնեն, անտես կ'առնուին ու կը գոհուին, եւ իրաւունք ալ է որ այնպէս լինին :

(1) Մասիս քիւ 1861 . 31 Յուլիս 1876 :

Կը հարցնենք ամէն խոնական մտրդու, ամէն անոր սր Ազգի ապաղային վրայ կը խորհի, արդեօ՞ք կարելի է՞ վերի խնդիրներէն մէկն ազգային ընդհանուր դաստիարակութեան խնդիրն հետ բաղդատութեան դնել, արդեօ՞ք այս բոլոր խնդիրներու լուծման միացեալ հետեւանքն՝ Ազգի համար մի եւ նոյն կարեւորութիւն կրնայ ունենալ, ինչպէս միայն դաստիարակութեանը :

Համարձակութիւն է մեզ իբր անհատ հարցեր ուղղել պատկառելի Վարչութեանը կամ անկէ համար պահանջել, սակայն իբր անդամ ազգի իրաւունք կը ճանչենք եւ պարտաւորութիւն կը համարինք հարցընել, արդեօ՞ք Վարչութիւնը կրնայ ըստ խղճի մտաց ըսել որ այն խնդիրներն եւ կամ անոնց նմաններն, որով մինչ այժմ զբաղեցաւ, դաստիարակութեան խնդիրն չափ կարեւոր, դաստիարակութեան խնդրին չափ Ազգին համար կենսական են :

Այս խնդրի զանցառութեան յանցանքն որո՞ւնն է :

Մասամբ իւր մեր ամենուս, որ մեր սպագային վրայ չենք խորհիր, մեզ վերաբերեալ խնդիրներուն անտարբեր կը մնամք, ամէն բան ուրիշին եւ գմեղ առաջնորդողներուն կը թողունք, առանց անոնց մեր նկատմամբ ըրածը քննելու : Մեծագոյն մասամբ Պօլսեցոց՝ որ ինկատի առնելով աշխարհագրական ու քաղաքական զիրքերնին, եւ ուրիշ տեղի ազգայնոց վրայ ունեցած առաւելութիւններնին, ազգային լուսաւորութեան ակոյտաններն եւ դաստիարակութեան ջերմ ջատագովներն պիտի լինէին, սակայն Պօլսեցիք կը կրկնենք, առօրեայ վաղանցուկ ու չնչին խնդիրներով պարապելով, իրենց չորս կողմն եւ իրենց աչաց առջեւ պատահած դէպքերուն իբր հանդիսատես նայելով եւ ազգային կենսական գործոցն ողւով ու բոլոր կարողութեամբ չմասնակցելով, այլ շատ շատ վաղամտիկ ու ասպարդիւն ընկերութիւններ, ժողովներ կազմելով եւ անգործ ու լոկ խօսքով ազգասիրութիւն, լուսաւորութիւն քարոզելով կ'անցընեն իրենց ժամանակը : Վլխաւորաբար եւ ի մասնաւորի Ազգային Վարչութիւնն որ ազգի գործերն անօրինեւ լու եւ Ազգն առաջնորդելու պաշտօնը կրատանձնէ, սակայն իւր պարտաւորութիւններն ըստ խղճի մտաց չկատարեր :

Ամէն ոք իբր մարդ բարոյապէս պարտաւոր է իր նման արարածի յառաջադիմութեանը ձեռնտու լինիլ :

Ամէն ոք իբր Ազգի մը անդամ բարոյապէս եւ ազգայնօրէն պարտաւոր է ըստ իր կարողութեան իր համագրի եղբայրներու յառաջադիմութեանն ու բարօրութեանն ամէն կերպով ձեռնտու լինիլ : Այս պարտաւորութիւնը մեծ ու սրբազան կը դառնայ ըստ պահանջման հարկի ու զիպաց :

Սակայն ամէն ոք որ պաշտօն մը կըստանձնէ, մանաւանդ նա որ ազգային պարտաւորութիւն մը յանձն կ'առնու, նա բարոյապէս, ազ-

գայնօրէն եւ քաղաքականապէս պարտաւոր է զան օնթերի ու ճշդիկատարել :

Ով որ առաջին տեսակ պարտաւորութիւնը զանց կ'առնու , նա մարդկութեան կոչմանը կը պակսի :

Ով որ երկրորդ տեսակը զանց կ'առնու , ազգութեան դէմ կը յանցնէ :

Ով որ երրորդ տեսակը չկատարեր , մարդկութեան կոչմանն , ազգութեանն եւ մի եւ նոյն ատենն իր նուիրական պարտաւորութեանը կը պակսի :

Ընդհանուր առմամբ մենք Հայերս քիչ բացառութեամբ երկրորդ տեսակ պարտաւորութիւննիս կատարելու թուլութիւն ենք ըրած , մերթ օգիտութեան եւ մերթ ուրիշ արդելաօրիթներու պատճառաւ . հետեւապէս կամայ ակամայ ազգութեան դէմ յանցեր ենք : Սակայն Ազգային վարչութիւնն որ իր պարտաւորութիւններն օգիտամնայու եւ Ազգին բարիքը չճանչելու բարոյրն անգամ չունի , Ազգային վարչութիւնը միանգամայն մարդկութեան կոչմանը պակսեր է , ազգութեանը դէմ մեղանչեր եւ իւր նուիրական ու անուրանալի պարտաւորութեանցը պարտազանց գտնուեր է :

Դաստիարակութեան խնդրին վերաբերմամբ , Ազգային վարչութիւնը բարոյր մ'անդամ չկրնար յառաջ բերել ինքզինքն իր պարտազանցութենէն արդարացնելու կամ անբասիր առնելու համար :

Ամենապարզ պատճառով մը , այն է որ վարչութիւնը մինչ այժմ ամենեւին բան մը չէ ձեռնարկեր այս խնդրին նկատմամբ մինչ անգամ մտադրութիւն մ'ալ չէ յայտնել որով կարենար ըսել , ուղեցինք բայց չկրցանք յաջողիլ :

Ազգը քաղաքականապէս կրնայ այս մասին ոչ համարատուութիւն պահանջել վարչութենէն եւ ոչ ալ զան դատաստանի կանչել : Ազգի այս անկարողութեամբը վարչութեան պարտազանցութիւնն ոչ կ'անհետանայ եւ ոչ ալ կը նուազի . վարչութիւնը պարտազանց կը դատուի անողոք ու անաչառ դատաւորէ մը , իր ներքին խղճմտանքէն . եւ պատասխանատու կը մնայ համայն Ազգին ու ապագայ սերունդին տուելու :



ԱԶԳԱՅԻՆ ԺԵՄԱՐԱՆ

Դաստիարակութիւն չկայ մեր մէջ , հետեւապէս մեզ անկարելի է յառաջադիմութիւն ընել ըսուեցաւ :

Արդեօք Ազգին մէջ , որ այնչափ աննպաստ հանգամանքներով չըջապատուած է , կարելի է՞ դաստիարակութիւնը տարածել որով կարենայ յառաջադիմել եւ իրեն հաւասար ազգաց հետ յաջողութեամբ մրցիլ :

Մենք ամէն վստահութեամբ կը պատասխանենք , այո՛ :

Ասոր կարելութիւնը ցուցնելու համար տեսնենք նախ դաստիարակութեան պիտոյքներն :

Ի՞նչ պէտք է դաստիարակութիւնն ազգին մէջ տարածելու համար :

Դաստիարակներ :

Դաստիարակելիներ :

Գրքեր :

վարժարաններ :

Ատոնցմէ երկրորդը դիւրին է ունենալ եւ չորրորդն ալ մասամբ իւրեք ունինք որն այժմ կը բաւականանայ :

Մնացեալներն ունենալու համար գլխաւորաբար ի՞նչ պէտք է կամք եւ ստակ :

Ստակ պէտք է նախ դաստիարակներ պատրաստելու համար , ըստակ պէտք է դասական յարմար գրքեր յօրինել , տպագրել եւ աժան գնով ծախել տալու համար , ստակ պէտք է դաստիարակներն վարձատրելու համար՝ որպէս զի ինքզինքնին Ազգի զաւակներն դաստիարակելու նուիրեն , կարճ՝ ամէն բանի համար ստակ պէտք է :

Սակայն ստակ ունենալու համար կամք պէտք է . կամք պէտք է անձանձիր աշխատելու , դժուարութեանց յաղթելու եւ առաջադրեալ նպատակին հասնելու համար :

Ստակն Արքեպիստոսի երեւակայած լծակն է , որով կարելի է աշխարհ տեղէն չարժել : Սակայն՝ որպէս զի լծակը գործէ շարժիչ զօրութիւն մը (force motrice) պէտք է , որ ըստ մեզ կամքն է :

Առանց շարժիչ զօրութեան լծակը չգործեր , աշխարհն տեղէն չը շարժեր :

Առանց կամաց ստակ ձեռք չգար , ոչինչ չը լինիր :

Ուստի ըստ մեզ դաստիարակութիւն ունենալու համար կամքի պէտք ունինք : Համարելով որ այս էականը (կամքն) ունենալ յանձն առնուք , միւսներն ունենալու եւ գործածելու կերպին վրայ կը համարձակինք դադար մը յայտնել :

Արդէն ըսուեր է որ գաղափարաց իրարու քով դրուելովն ու իրարու հետ բաղդատուելովը նոր գաղափարներ կը ծնին, եւ գաղափարներու գործադրական կամ մտացածին լինելը միայն փորձը կրնայ ցուցնել: Մենք մեր այս գաղափարն ամէն զգուշութեամբ կ'արտայայտեմք, ոչ թէ իբր գերազանցագոյն կամ անսխալական, այլ իբր գործադրելի եւ առ այժմ միակ կարելին մեր առաջադրեալ նպատակին հասնելու համար: Այլոց, մեզմէ աւելի ձեռնհաս անձանց, թողլով մերինը կատարելագործելու, անգործական մասերն ուղղելու եւ կամ մերինէն ընտրելագոյնն ու աւելի դիւրաւ գործադրելին առաջարկելու:

Ազգը ձեւարան մը կամ օրինակական վարժապետանոց մը պիտի ունենայ: ձեւարանը պիտի հաստատուի Պոլսէն քիչ հեռաւորութեամբ տեղ մը՝ ուր օդն ու ջուրն աղէկ են եւ բաղդատաբար պարէնն աժան:

ձեւարանի պաշտօնն ու նպատակը պիտի լինի Ազգի զաւակներն դաստիարակելու համար յարմար ու բանիրուն ուսուցիչներ պատրաստելը:

Այս հաստատութիւնը պիտի պարունակէ ի սկզբան 720 ուսանողք որոնց 600 ը տղայ եւ 120 ը աղջիկ. ասոնք ամէնն ալ ձրի պիտի ընդունուին ու դաստիարակուին:

Ամէն քաղաքի ու բազմահայ գիւղի մէջ գանուող յատկապէս ու հանձարեղ աշակերտներէն ու աղջիկներէն մէկ կամ շատ հոգի կ'առնուի, այն պայմանաւ որ ամէն աշակերտ կամ աշակերտուհի 4 տարի ձեւարանի մէջ ձրի դաստիարակուելէ ետքը պարտաւոր է որոշեալ վարձով 2 տարի ուսուցչութեան պաշտօն կատարելու:

ձեւարանի յատկապէս աշակերտներէն 24ն Ներդպայ պիտի խըրկուին, այն պայմանաւ որ ուսումնին աւարտելէ ետքը պարտաւոր են թէ ձեւարանն եւ թէ Ներդպայ մնացած բոլոր ատենուան կիսուն չափ ուսուցչութեան պաշտօն կատարել ուրիշ աշակերտաց պէս որոշեալ վարձով:

Այս բոլոր ուսուցիչներու ամսական ռոճիկը պիտի լինի իւրաքանչիւրի ատտիճանին համեմատ 200 դահեկանէ մինչ 350 դահեկան:

ձեւարանի Տնօրէնութիւնն ազատ պիտի լինի ուզած աշակերտը յարմար դատած քաղաքը կամ գիւղը խրկելու:

ձեւարանը տպարան մը պիտի ունենայ դաստիարակութեան վերաբերեալ գրքեր տպելու համար. այս գրքերն խիստ աժան գնով այսպիսինքն գրեթէ թղթի գնովը պիտի ծախուին:

ձեւարանը չարաթաթերթ մը կամ կիսամսեայ թերթ մը պիտի ունենայ, որու պարունակութիւնը պիտի լինի ուսուցման եղանակին, վարժարանաց կանոնացն ու բարեք կառավարութեանը, դասական գրքերու ընտրութեանն ու շարակարգութեանն եւ դաստիարակութեան վերաբերեալ ամէն խնդիրներուն վրայ հրահանգներ ու տեղեկութիւններ:

Ուրիշ ամէն վարժարաններն՝ ձեւարանի դրութեանն, ընթացքին ու օրինակին պիտի հետեւին, եւ իբր անոր ծաղիլոցն ու նախակըրթարանը համարուին ու կազմուին: Վարժարաններու համար պէտք եղած դասական գրքերն ձեւարանի տպարանէն պէտք է ծախու առնուին:

ձեւարանի տնօրէնութիւնէն վարժապետութեան վկայագիր չունեցող ո եւ է անձ իբր վարժապետ չպիտի ընդունուի աղքային վարժարանաց մէջ:

Ասոնց կրնայ աւելցուիլ շատ մը ուրիշ օգտակար կարգադրութիւններ եւ մէկ քանիին տեղն ալ բարեք փոխութիւններ մտցնել: Սակայն ամէնն ալ ժամանակին ու ապագայ փորձառութեանը թողլով, փութանք քանի մը բացատրութիւններ տալ եւ այսպիսի հաստատութեան մը, իբր ազգային ընդհանուր դաստիարակութեան միջոցի մը, ազաւելութիւններն եւ առաւելութիւններն քննել:

Այս դրութեամբ ձեւարանի Տնօրէնութիւնը միշտ 360 ձեւարանէն ելլող ուսուցիչ կ'ունենայ իւր ուղղութեանը տակ, գորոնք ընդհանրապէս այնպիսի քաղաքներ ու գիւղեր կը խրկէ որ աւելի պէտք ունին եւ որ աղէկ վարժապետի մը վարձը տալու անկարող են:

Տնօրէնութիւնը կրնայ աւելորդ մնացած ուսուցիչներուն հետ ձեւարանին նպաստաւոր պայման մը դնելով զանոնք դասատուութեան պարտաւորութիւնէն ազատ կացուցանել:

Տեղեր կան ուր Հայերն լոկ անուամբ կամ աւանդութեամբ Հայ են, լեզու, կրօնք, ազգութիւն կամ արդէն կորսնցուցուցեր են կամ կորսնցուցուցելու վրայ են: Եթէ չփութացուի դաստիարակութեան տարածմամբ ազգային կապերն հաստատելու եւ ամրապնդելու, քիչ ատենէն այսպիսիներու Ազգին համար բոլորովին կորսուելու տխուր լուրն պիտի առնենք: ձեւարանի ծախուց մէջ նշանակելիք 50 ուսուցիչն այնպիսի տեղերու համար պիտի սահմանուի:

Աղջկանց թիւը սոցայոց թըւոյն հաւասար լինելու է, բայց ի սկզբան աղջիկ ուսանող գօնելը դժուար լինելուն համար աղջիկներու թիւը սոցայոց թըւոյն մէկ հինգերորդը դրուեցաւ: Ետքէն երբ ձեւարանը հաստատուն ընթացք կըստանայ եւ եկամուտն կ'որոշուի, այն ատենը կարելի է աշակերտուհեաց թիւը շատցնելով աշակերտաց թըւոյն հաւասարցնել:

Ի սկզբան այս ձեւարանը բարձր ուսումնարան մը չկրնար լինիլ եւ գուցէ ձեւարան կոչուելու անգամ արժանի չլինի: Ուսումնական հաստատութիւն մը՝ ոչ թէ իր շինութեան մեծութեան կամ սրահներու գեղեցկութեան պատճառաւ վարժարան, ձեւարան, համալսարան առնուը կը ստանայ, այլ իր մէջ աւանդուած բարձրագոյն ուսմանց պատճառաւ. բարձրագոյն ուսմանք աւանդելու համար զանոնք ըմ-

բընոնող եւ անոնց դասաւութեանն ընդունակ աշակերտներ պէտք է ունենալ, զորս մենք այժմ չունինք : Ուստի ձեմարանի բարձր կամ ստորին աստիճանը բողոքովին կախում պիտի ունենայ Նախակրթարաններէն : Որչափ Նախակրթարաններու աստիճանը բարձրանայ եւ անոնց միջի ուսանողք որչափ բարձրագոյն ուսմանց հասնին, այնչափ ալ ձեմարանի ուսուցման կան աստիճանը կը բարձրանայ :

Փոխադարձաբար ալ որչափ ձեմարանի ընթացքը բանաւոր ու ազէկ եւ որչափ դաստիարակական դրութիւնը կատարելութեան մօտ եւ արդի յառաջադիմական գաղափարներուն համեմատ լինի, այնչափ ալ Նախակրթարաններն ու Ծաղկոցներն ազէկ ու կատարեալ կը լինին :

Ամենէն գլխաւոր առարկութիւն որ կրնայ բերուիլ, պիտի լինի այն — որ ձեմարանէն ելլող ուսուցիչներն տակաւին մատաղահասակ երիտասարդներ լինելով աշակերտաց պատկառելի չեն երեւնար, որով եւ դժուարին պիտի լինի անոնց համար ըստ պատշաճի վարժապետութեան պաշտօնը կատարելը :

Այս ապաւելութիւնն, որ ըստ մեզ միայն աւերելոյթս է եւ ոչ էական, իր մէջ կը կրէ իր առաւելութիւնն, այն է որ տարիքն առած ուսուցչի մը համար, որու ուսուցանելու խանդն արդէն յոյսերու դերեւելլելովը նուազեր է, եւ որն վարժապետութիւնն ինչ ըսել է փորձով զգացեր է, այնպիսի մէկու մը համար կը կրկնենք, վարժապետութիւնը տաղտկալի ու խոնջեցուցիչ արուեստ մ'է, եւ աշակերտաց հարցերն մէջ մէկ ձանձրութիւն . այնպիսի մէկն իր պաշտօնին կերթայ ինչպէս պատժապարտ մը ջուր ծեծելու : Իսկ մատաղահասակ երիտասարդի մը համար, որու համար ամէն բան նոր է, որու համար իմացածն ուրիշի սովորեցնելը պէտք մ'է հաճոյական, որու մտաւորական ու մարմնական կարողութիւններն տակաւին զօրանալու վրայ լինելով ամէն, մանաւանդ վարժապետական ծանր աշխատութեան դիւրաւ ու հաճութեամբ կրնայ տոկալ, որու տակաւին յոյսերն ապարդիւն չեն ելլեր, որն մէկ խօսքով դեռ բողոքովին աշխատութիւնն ու եռանդ է, այսպիսի մէկու մը համար ուսուցչութիւնը հրապուրիչ արուեստ մ'է, աշակերտաց հարցերն մէջ մէկ հաճոյք, եւ դժուար խընդիրներու լուծումն ու բացատրութիւնը մէջ մէկ մտաւորական զբօսանք : Այսպիսի առաւելութիւններն պատկառելութեան պակասութեան ապաւելութիւնը մեծապէս կը փոխարինեն :

Ուրիշ առարկութիւն մ'ալ որ կրնայ բերուիլ, այն պիտի լինի — որ ձեմարանը չորս տարի միայն կեցող աշակերտ մը, որչափ բան պիտի սովորի եւ ինչ հմտութիւն ստանայ, որ ելլելէն անմիջապէս ետքը կարենայ ուսուցչութեան պաշտօնը յարմարապէս ստանձնել :

Իրաւ է որ չորս տարուան մէջ ու եւ է անձ գիտութեանց ծայրն չկրնար հասնիլ, եւ ոչ ալ կրնայ բաղդատմամբ այս կարճ միջոցին մէջ

վարժապետութեան համար պէտք եղած ուսումն աւարտել եւ փորձառութիւնն ու հմտութիւնն ստանալ : Արդ նկատելով մեր մէջ գտնուած ձեռնհաս վարժապետաց սակաւութիւնն, եւ մեր դրամական կարողութեան անբաւականութիւնը, կրնանք ամէն վստահութեամբ ըսել որ առ այժմ մեզ դրականապէս անկարելի է ամէն վարժարանի մէջ հմուտ վարժապետ ունենալ, բայց ծաղկոցներն ու նախակրթարաններն ձեմարանի դրութեան վերածելովն եւ անոր ուսուցման եղանակին հետեւեցնելովը կրնանք ձեմարանի բարձրագոյն վարժապետաց հմտութիւնն ու փորձառութիւնը մեծաւ մասամբ մեր ծաղկոցներու եւ նախակրթարաններու մէջ փոխադրել առանց անոնց (բարձրագոյն վարժապետաց) ծախուցն ենթակայ լինելու, եւ աշակերտներն ի սկզբանէ անտի մի եւ նոյն անփոփոխ դրութեանն եւ անընդհատ ու միօրինակ ընթացքի մը ենթարկելով, անոնց ուսման ժամանակի միջոցը բազմապատկել, որով եւ այն ատենն, ի բաց առեալ ձեմարանի հաստատութեան սկզբի քանի մը տարին, աշակերտաց ուսման ընթացքն իսկապէս հաշուելով միայն 4 տարի չլինիր, այլ բոլոր այն ժամանակն որն ծաղկոցը մտած օրէն կը սկսի ու ձեմարանէն ելլելովը կը դադրի : Նաեւ կանոնաւոր ձեմարանի մը մէջ, մանաւանդ այնպիսի հաստատութեան մը մէջ, որու միայնակ ու գլխաւոր նպատակն է դաստիարակներ յառաջ բերել, չորս տարի ուսանող մէկն անտարակուսաբար կրնայ այնչափ սովորիլ որ բաւական ընդունակ լինի ուսուցչութեան պաշտօնն ըստ մեր արդի կարօտութեանը յարմարապէս կատարելու, եւ կը յուսանք ու վստահ ալ ենք որ ձեմարանէն ելլող աշակերտներն որչափ քիչ բան սովորելու ալ լինին դարձեալ մեր Պօմոլու Մօտենքն ու Տիրացունքն աւելի բարձր ու յարմար վարժապետներ պիտի դառնան : Իսկ գալով այսպիսիներու փորձառութեանն, ըստ մեզ ընտրելու է այնպիսիներն որ թէեւ անփորձ են ուսուցչութեան արուեստին, սակայն դաստիարակութեան ընթացք մը տեսեր, կանոնաւոր դրութեան աշակերտեր եւ արդի յառաջադիմական գաղափարներովը լի են, քան թէ այն կարծեցեալ փորձառուներն որոնք ոչինչ չեն տեսեր եւ սնդապէս ու կուրօրէն կը յարին փտած հին գաղափարներուն, իրր կրօնի հիմնական մասանց, եւ որոնց փորձառութիւնը միայն խաբազանի գործածութեանն եւ աշակերտաց ահարեկ երեւնալուն մէջ կը կայանայ : Գաստիարակական արուեստին մէջ սորվեցնելու եղանակն եւ ուսուցանելիք նիւթոց յարմար ընտրութիւնն ու շարակարգութիւնն, աւելի կարեւոր տեղ կը բռնեն եւ ուշադրութեան արժանի են քան թէ բարձր գիտութեանց ուսումն : Հայ մանկտին, մանաւանդ առ այժմ, աւելի պէտք ունի եղանակաւոր ուսման եւ ուսանելիք նիւթոց ընտրութեանը քան թէ բարձր գիտութեանց :

Գուցէ առարկուի եւս որ քիչերն յանձն պիտի առնուն ձեմարա-

նին մէջ ուսումն աւարտելէ ետքը երկու տարի ուսուցչութեան պաշտօն կատարելու պայմանը :

Այս առարկութիւնն ըստ մեզ բոլորովին անհիմն է , եւ այն մասին ամենեւին երկիւղ տածելու չէ : Քանզի ուսումը մատամբ մը կերակուրի կը նմանի . մէկն որչափ համեղ եւ որչափ մնդարար կերակուր ուտելու ալ լինի , չկրնար անկէ մեծապէս օգտիլ , եթէ կերածն աղէկ չմարսէ : Նոյնպէս մէկն ալ վարժարանի մը մէջ որչափ շատ բան սովորելու ալ լինի , չկրնար այն սովորածէն բոլորովին օգուտ քաղել , եթէ այն սովորածը բոլորովին չիւրացնէ : Եւ արդեօք ի՞նչ գերազոյն միջոց սովորածն իւրացնելու համար քան զան ուրիշին բացատրելն : Այսպէս ձեմարանէն ելլող աշակերտաց համար ուսուցչութեան վատնած այս երկու տարին , փոխարէն ժամանակի կորուստ մը լինելու , ամենօգտակար միջոց մ'է սովորածնին իւրացնելու , եւ յիշուի աշակերտաց համար կատարելիք ուսուցչութիւնն ուրիշ բան չպիտի լինի , եթէ ոչ սովորածնին գործնական կերպով սովորի :

Ամէն ազգի համար մեծ առաւելութիւն մ'է որ զան (Ազգը) կազմող անհատներու ամէնն ալ մէկ բարբառ մը ունենան , որով ամէնուն ալ կարելի լինի առանց ո եւ է դժուարութեան իրարու միտքը թէ խօսած եւ թէ գրած ատենն աղէկ հասկնալ : Այս առաւելութիւնը զան ժառանգող ազգի յառաջադիմութիւնը զիւրացուցիչ միջոցներէն մէկ գլխաւորն կրնայ համարուիլ : Բոլոր լուսաւորեալ ազգերն ի վաղուց հետէ այս իրողութիւնն զգացած լինելով , իրենց բարբառներէն մէկն ընտրելու եւ զան իրենց գլխաւոր լեզուն ճանչելու են , եւ անոր մասնաւոր նախապատուութիւն տալով ջանացել են զան ազգի ընդհանուր լեզուն ընել , եւ իրենց ուրիշ բարբառներուն այնպիսի ուղղութիւն մը տուել են որ հետզհետէ ընտրեալ բարբառին մերձակայ եւ ի վերջոյ անոր մէջ միաձուլուի :

Իսկ մենք ոչ միայն այս կարեւոր կէտին ամենեւին ուշադրութիւն չենք դարձներ , ոչ միայն տակաւին գրաբարի ու աշխարհաբանի ընտրութեանն եւ որն՝ վարժարանաց լեզուն ընելուն վրայ կը շարունակենք մեր վիճաբանութիւններն , այլ եւ երկրորդ գաւառական բարձառը խօսող մանկանց առաջին գաւառականը խօսող վարժապետներ եւ չորրորդ գաւառականը խօսող մանկանց երկրորդ գաւառականը խօսող վարժապետներ կ'ընտրենք անխորաքար , որով կարծես թէ դիտմամբ մեր լեզուի ճիւղաւորութիւնը շատցնելու եւ բարելակման խառնակութենէ ծնեալ լեզու մը ունենալ կը ցանկանք : Այս առաջարկեալ ձեմարանի մէկ օգուտն ալ այն պիտի լինի որ Ազգն ընտրեալ բարբառի մը կեդրոն կ'ունենայ եւ փոխարէն զանազան բարբառներ ունեցող վարժապետներու , ինչպէս որ մինչ այժմ եղեր է , իւրաքանչիւր վարժապետ իւր ծնած տեղին կամ դաստիարակուած վարժա-

րանին համեմատ զատ բարբառ մը ունենալով , ձեմարանէն ելլող բոլոր վարժապետներն մի եւ նոյն ընտրեալ բարբառը կ'ունենան եւ այս վարժապետներու եւ անոնց քով աշակերտողներու միջոցաւ հեռզհետէ երկրորդական գաւառականներն զէպ ի այն կեդրոնը կը հակին , կ'ուղղուին ու կը մօտեցուին , եւ հետեւապէս մեր բարբառներէն ընտրեալ մէկն եթէ ոչ ամբողջ Ազգի խօսած լեզուն , գոնէ ամենամեծ մասինը կամ քիչ շատ դաստիարակութիւն ունեցողներունն եւ ընդհանուրին ալ զիւրմըմունելին կը լինի :

Այս առաւելութիւններն հակրճօրէն յիշելէ ետքը դառնանք նախ այսպիսի հաստատութեան մը տարեկան ծախքը հարեւանցի կերպով հաշուելու եւ ետքէն նոյն ծախքը հայթայթելու միջոցներն ցուցնելու :

ՃԵՄԱՐԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾԱԽՔԸ

| | Դահեկան |
|--|------------------|
| 1 Տնօրէն տարին | 60,000 |
| 1 Տեսուչ » | 40,000 |
| 5 վարժապետ միջական հաշուով տարին 36,000 դահեկանով | 180,000 |
| 6 » » » » 24,000 » | 144,000 |
| 12 » » » » 12,000 » | 144,000 |
| 30 » (ձեմարանէն ելլողներէն) միջական հաշուով տարին 3600 դահեկանով | 108,000 |
| 4 վարժապետ մարմնամարդութեան տարին 18,000 դահեկանով | 72,000 |
| 1 Բժիշկ | 50,000 |
| Աշակերտաց զգեստին եւ աշակերտաց ու վարժապետաց ուտեստին եւ այլն ծախք | 1,500,000 |
| 50 ծառայ եւ աղախին միջական հաշուով տարին | |
| 2,400 դահեկանով | 120,000 |
| Տպարանի ծախք դասական գրքեր տպելու համար . . | 150,000 |
| Ուսման վերաբերեալ գործիքներու եւ Եւրոպայէն դաւելք գրքերու համար | 150,000 |
| Եւրոպայ խրկուելիք 24 աշակերտաց համար տարեկան ծախք | 156,000 |
| վարժապետի մը ծախքը վճարել չկրցող տեղերու համար | |
| 50 վարժապետ (ձեմարանէն ելլողներէն) տարին միջական հաշուով ճամբու ծախքովը հանդերձ 3600 դահեկանով . . | 180,000 |
| Անուսկալ եւ այլ եւ այլ ծախուց համար | 46,000 |
| Գումար | 3,100,000 |

Արդ ձեամբանի ծախուցը համար տարին երեք միլիոն եւ հարիւր հազար դահեկան պէտք է : Այս գումարն հայթայթելու համար միայն երկու միջոց կրնանք ունենալ :

Առաջինը տարին երկու անգամ Ազգէն նուէր ժողովել :

Նուէրի անուէր մեծ է , բայց մեր առաջարկուելիք նուէրն այն- չափ չնչին բան մ'է որ մուրացկաններուն տրուած ողորմութեանը կը նմանի , եւ ամէն մարդ առանց զգալու կրնայ տալ : Ասիկա ազգին վրայ ամենափոքր ծանրութիւն չկրնար համարուիլ , քանզի կամաւոր պիտի լինի եւ ո՛վ որ տալու կարողութիւն ունենայ պիտի տայ , ո՛վ որ չունենայ անկէ բռնի չպիտի պահանջուի :

Ուստի նախ Ազգը չորս կարգի բաժնելու է — աղքատ , միջակ , բարեկեցիկ ու հարուստ :

Աղքատ կարգին վերաբերող ամէն անհատէ տարին երկու անգամ տասն փարայ առնելու է :

Միջակ կարգին վերաբերող ամէն անհատէ տարին երկու անգամ երեսուն փարայ առնելու է :

Բարեկեցիկ կարգին վերաբերող ամէն անհատէ տարին երկու ան- գամ չորս դահեկան առնելու է :

Հարուստ կարգին վերաբերող ամէն անհատէ տարին երկու ան- գամ չորս դահեկան առնելու է :

Արդեօք կա՞յ անհատ մը որ տարին քսան փարայ տալու դժուա- րանայ , կամ կա՞յ արդեօք այնպիսի ընտանիք մը կամ տուն մը որ տա- րին երկու կամ երեք դահեկան տալու կարողութիւն չունենայ : Ըսենք թէ կը գտնուի եւ քանի մը հազար , սակայն յիշենք եւս որ կան այն- պիսիներն որ ոչ միայն տասը քսան դահեկան , այլ եւ լիրաներ տալու չեն դժուարանար , մեծ հաճութեամբ կուտան եւ զուրիչներն ալ տալու կը յորդորեն :

Արդ ընդհանրապէս մօտ չորս միլիոն Հայ կը հաշուեն եւ ոմանք մինչ հինգ միլիոն կը հանեն . բայց մենք զանազան առարկութեանց տեղի չտալու համար առ սակաւն առնելով , երկու միլիոն դնենք ու հաշուենք որ այս բոլոր թուոյն կէսը կամ հարիւրին յիսունն , որ է մէկ միլիոնն , աղքատ կարգին կը վերաբերի , ուստի ամէն անհատէ տարին երկու անգամ 10 փարայ ժողովելով գումարն կընէ դէկն 500,000

Վեց քսաներորդը կամ հարիւրին երեսունն , որ է վեց հարիւր հազարն , միջակ հաշուելով եւ իւրաքանչիւրէ տա- րին երկու անգամ երեսուն փարայ առնելով գումարն կ'ընէ 900,000

Երեք քսաներորդը կամ հարիւրին տասնուհինգն , որ է երեք հարիւր հազարն , բարեկեցիկ հաշուելով եւ ամէն մէ- կէ տարին երկու անգամ երկու դահեկան առնելով գումարն

Գումար 1,400,000

կընէ 1,200,000

Մէկ քսաներորդը կամ հարիւրին հինգն , որ է հար- իւր հազարն , հարուստ հաշուելով եւ ամէն մէկէն տարին երկու անգամ չորս դահեկան առնելով գումարն կ'ընէ . 800,000

Միւս երեսի գումարն 1,400,000

Բոլորի գումարն 3,400,000

ձեամբանի համար ընելիք տարեկան ծախուց գումարն ասկէ հանելով 3,100,000

Իր մնայ աւելորդ 300,000

Որն պահեստի կը դրուի արտաքոյ կարգի պիտոյցի համար :

Ահա եւ ժողովուրն կերպը :

Մասնաւոր թղթով ու ձեւով չորս միլիոն տոմսակ կը շինուի , այս տոմսակներն չորս տեսակի կը բաժնուին , իւրաքանչիւր տեսակի թիւը ժողովրդեան իւրաքանչիւր կարգի թըւոյն կրկինն լինելով . այսպէս

Ճերմակ թղթով 10 փարանոց 2,000,000

Կապուտ » 30 » 1,200,000

Գեղին » 2 դահեկաննոց 600,000

Կարմիր » 4 » 200,000

Գումարն 4,000,000

Նախ Ս. Պատրիարքը Վեհ. Կաթողիկոսին հետ միաբանելով չըր- ջաբերական մը կը խրկեն բոլոր թեմակալ առաջնորդներուն , պատ- ուիրելով անոնց որ վիճակնուն մէջ եղող Հայոց ճիշդ կամ մերձաւորա- գոյն թիւը խրկեն հանդերձ կարելի եղածին չափ ամէն ընտանեաց կամ տան վրայ անհրաժեշտ եղող քանի մը դիտողութիւններովը : Ան- կէ ետքը առաջնորդական իւրաքանչիւր վիճակին մէջ դասնող ազ- գայնոց թուոյն ու նիւթական կարողութեանը համեմատ , տարին եր- կու անգամ տոմսակներ կը խրկուին թեմակալ առաջնորդներուն , յանձ- նարարելով որ ջանան ժողովրդեան բաժնել քահանայներու ու ազգա- սէր անձանց միջոցաւ : Առաջնորդներն ալ այս տոմսակներն ստացածնուն պէս զանոնք իրենց վիճակի քահանայներուն ու ազգասէր անձանցը կը բաժնեն , միշտ ի նկատի ունելով իւրաքանչիւր ծուխի կամ թաղի ազգայնոց թիւն ու նիւթական կարողութիւնն : Ըսենք որ աղքատ տան մը մէջ հինգ հոգի կայ , արդ քահանայն կամ յանձնարարեալ անձն՝ այն տանը հինգ հատ տասը փարանոց տոմսակ կուտայ եւ յիսուն փարայ կառնու , եթէ այն տունը հինգ տոմսակ առնելու կարողութիւն չունի , այն ատենը չորս կամ երեք կամ երկու կամ միայն հատ մը կուտայ եւ ստակը կառնու : Այսպիսի աներէ աւելցած տոմսակներն քահանան կամ յանձնարարեալ անձը կը ջանայ ուրիշներուն տալ . բաժնել չկըր- ցած տոմսակներն առաջնորդին ետ կը դարձուին , որն բոլորն հաւքե-

լով ժողոված ստակին հետ Վեհ. կաթողիկոսին կամ Ս. Պատրիարքին կը խրկէ : Տոմսակ մը կորսնցնողը պարտաւոր է գինը վճարելու :

Այս դրութեամբ նախ ազգէն ստակ հաւքելը խիստ զիւրիս է եւ երկրորդ ժողոված ստակէն ասոր անոր քով չմնար :

Այս առաջարկութիւնը թերեւս ոմանց անգործադրելի, ոմանց անբաւական միջոց մը ամբողջ ազգը դաստիարակելու եւ ոմանց ալ անհաստատ եկամուտի մը վրայ հաստատուած պիտի թուի :

Այսպիսի բոլոր առարկութեանց մէկ խօսքով կը պատասխանենք. արդեօք երբէք Ազգի առատաձեռնութեանը հրաւեր մը կարողացուցա՞ւ :

Եթէ ոչ ապա ուրեմն չփորձած բանի մը համար որ կարելութեան սահմանէ դուրս չէ, չյաջողիր ըսելն առանց բանաւոր պատճառի մը կամ առանց անկէ լաւագոյն մը առաջարկելու ոչ տրամաբանական է եւ ոչ ալ յառաջդիմական :

Ինչպէս արդէն ըսուեր է, փորձով միայն ամէն բան կատարելութեան կը հասնէ, առանց փորձի ոչ մէկ բանի առաւելութիւններն կամ պակասութիւններն կրնան տեսնուիլ : Ուրեմն պէտք է փորձել Ազգի առատաձեռնութեանը զիմել իր զաւակներն դաստիարակելու համար : Եթէ չյաջողի այն ատենը քննել չյաջողելուն պատճառներն, ջանալ խոչերն հարթել, արգելքներն վերցնել, անգործադրելի մասերն գործադրականի վերածել եւ դարձեալ փորձել, փորձել բարեօքելով, այնչափ փորձել մինչ յաջողի հասնել այն վտեմ նպատակին :

Ազգային ճեմարանի ծախքը հայթայթելու համար երկրորդ միջոց մ'ալ կայ. այն է —

Ազգին վրայ տուրք մը դնել :

Միջական հաշուով ամէն անհատէ եօթանասուն փարայ առնել :

Տուրք վճարող ազգայնոց թիւը նոյնպէս առ սակաւն երկու միլիոն հաշուելով տարին երեք ու կէս միլիոն դահեկան կը գոյանայ, այն նուէրի անուամբ հաւքուածէն հարիւր հազար դահեկան աւելի կը լինի :

Այս միջոցի համար ալ պիտի ըսուի, արդէն Ազգի բեռը շատ թեթեւ չէ որ այս ալ վրան աւելցուի :

Տաճկաստանի մէջ միջական հաշուով ամէն Հայ անհատ տարին 80 դահեկան տուրք կուտայ : Մենք 80 կ'ըսենք հակասութեանց տեղի չտալու համար, իսկ եթէ ճշդիւ հաշուելու լինինք 200 ը կանցնի : Այս 80 դահեկան տուրքը կուտանք առանց փոխադարձութեան, եւ իրօք փոխադարձութիւն մ'ալ չենք սպասեր : Ուրեմն ինչո՞ւ մերժենք տուածնուս վրայ երկու դահեկան ալ աւելցնելու փոխադարձն ստանալու յուսով : Ինչո՞ւ դժկամակինք տալու այնպիսի տուրք մը, որ եթէ մէկ ձեռքով տանք միւս ձեռքով արդիւնաւորեալ ետ կը ստանանք : Տուրք մը որ մեր ապրուստի միջոցներն կը բազմապատկէ, տուրք մը

որ Ազգի զաւակաց ապագան ապահովելու համար առաջին միջոց մ'է. տուրք մը որ միայն կրնայ զմեզ այս յետադնաց ընթացքէն դադրեցնել ու յառաջադիմութեան շաւղին մէջ դնել, տուրք մը որ քաղաքական արեւոյթեանց եւ ազգակուլ որոգայթից դէմ մեր ազգութեան նաւուն համար ամենազորաւոր խարիսխ մ'է, տուրք մը որ ամէնուն համար պարտաւորութիւն մ'է ազգային ու նուիրական : Այսպիսի տուրք մը Ազգի համար ծանրութիւն չկրնար լինիլ եւ թերեւս ամէն անհատ ինքնաբեր յօժարութեամբ անոր կրկնապատիկն եւ մինչ քառապատիկը տայ :

Ուրիշ խնդիր մ'ալ :

Օսմանեան տէրութիւնն ինքզինք Սահմանադրական կառավարութիւն հրատարակեց :

Արդ եթէ այս Սահմանադրութիւնը մեռեալ զիր լինելու փոխարէն իրականութիւն մը դառնայ եւ իսկապէս գործադրուի, այն ատեն ըստ անոր տրամադրութեանը՝ նախնական կրթութիւնը պարտաւորիչ պիտի լինի : Ո՞վ պիտի հոգայ այս կրթութեան ծախքը : Անշուշտ ժողովուրդն, Ուրեմն մենք Հայերս ալ այս ծախքին պիտի մասնակցինք, եւ ամէն հաւանականութեամբ այժմեան առաջարկուածէն շատ աւելի եւ դուցէ մինչ անոր տասնապատիկը տալու պարտաւորուինք : Անտարակուսաբար այս նոր տուրքը պիտի տանք, միայնակ տարբերութիւնը պիտի լինի, որ թերեւս մինչ Սահմանադրութեան վերջնական կերպով հաստատուին ու գործադրուին, այն է մինչ 4-5 տարի, չենք տար, բայց վերջապէս պիտի տանք : Արդ մի՞թէ նախատեսութիւն չէ՞ որ մենք մեզնէն կանխենք եւ Սահմանադրութեան գործադրութեանէն առաջ որոշենք մեր կրթութեան նախագիրն ըստ մեր պիտոյից, սկսինք մեր կրթութիւնն առանց ժամանակ կորսընցնելու եւ այս կերպով Սահմանադրութեան գործադրութիւնն սկսած ատենն՝ արդէն այս կարեւոր խնդրին մէջ առաջին քայլն առած լինինք, որով կարելի լինի մեզ յաջողութեամբ մրցիլ մեր նախանձորդներուն դէմ :

Եթէ ուշի ուշով ամէն պարագաներն նկատողութեան առնելով մեր եւ մեր նմանեաց արդի վիճակը դար մը առաջ ունեցածնուս հետ բազմապատենք, մեծ զարմացմամբ պիտի տեսնենք, որ քանի որ մեր նմանիքն այն ատենէ ի վեր սկսեալ են յառաջադիմել, հարստանալ ու զօրանալ, մենք ընդ հակառակն յետադիմել, աղքատացել ու նուազել ենք:

Մասնաւորենք ըստծնիս միայն Տաճկաստանի հպատակ երեք զըլխաւոր ազգացն Հայոցն, Յունացն ու Պուլղարացն, որոց մէջ թուոյ եւ վիճակի մերձաւորութիւն ու նմանութիւն կար դարերէ ի վեր, եւ խիստ համառօտ ու հարեւանցի կերպով բաղդատենք վերջի երկուքի դար մը առաջուան եւ արդի վիճակը մերինին հետ:

Ժողովրդի մը, ազգի մը, տէրութեան մը ապրուստի, եկամտի ու հարստութեան գլխաւոր ու մշտական աղբիւրներն երեք են:

Երկրագործութիւն, արհեստք ու վաճառականութիւն:

Սակայն որպէս զի այն աղբիւրներն չնուաղին, չկորնչին, այլ հետըզհետէ աճին ու մեծնան, եւ անոնցմէ շարունակ ամենամեծ օգուտը քաղուի, ժողովուրդն, ազգը, տէրութիւնը դաստիարակութեան պէտք ունին. դաստիարակութեան որ անոնց կարապետ լինելով քայլերնին միշտ դէպի ուղիղ ճամբան ու ճշմարիտ յառաջադիմութիւնն ուղղէ:

Սկիւնք երկրագործութենէն, ընտանեաց եւ ազգաց ապրուստի այս առաջին աղբիւրէն, եւ տեսնենք ուրիշներուն բաղդատմամբ ինչ էր դար մը առաջ ունեցած վիճակնիս եւ ինչ է այսօրուանը:

Գար մը առաջ թէ եւ Տաճկաստան այժմէն աւելի անկարգ եւ աւելի բռնաւոր կառավարութիւն մ'էր, սակայն այսու ամենայնիւ գիւղացիներու մանաւանդ հայ երկրագործներու վիճակն այժմեանէն խիստ աւելի աղէկ էր: Այս տարօրինակութեան պատճառն հետեւեալ իրողութիւններն կրնան բացատրել:

Նախ տէրութեան վճարուած տուրքերն այժմեանին չափ ծանր չէին:

Երկրորդ դար մը առաջ սակաւին եւրոպական վաճառք բոլորովին մուտք չէին գտեր ի Տաճկաստան, եւ ազաներն՝ զիւղերու եւ գաւառներու այս երկրորդական, բայց ինքնակալ ու բռնաւոր թաղաւորներն ոչ եւրոպական վաճառքի կարօտութիւն ունէին եւ ոչ ալ եւրոպական զեղխութիւններն ճանչեր էին. պարզութեամբ կ'ապրէին եւ քիչ բանով բաւականանալով այնչափ անյագութեամբ չէին կողոպտեր իրենց հպատակ գիւղացիներն: Սակայն այժմ նոր զեղխութիւններու եւ ար-

տաքոյ կարգի ծախքերու դռներ բացուած լինելով կարօտութիւններնին ալ մեծցան, եւ ալ այն գումարով որ ինչով առաջ աղէկ կ'ապրէին չեն կրնար բաւականանալ: Ուստի իրենց ծախուց պակասը լցնելու համար կը դիմեն իրենց միակ աղբիւրին, քրիստոնեայ գիւղացիներուն, եւ իբր Լուսին անոնց արեան մինչ վերջին կաթիլը կը ծծեն:

Սակայն այս վերոյիշեալ երկուքը չնչին բաներ են բազմապատելով հետեւեալին:

Գար մը առաջ տիրող մահմետականք հպատակ քրիստոնէից վրայ կը նայէին իբրեւ իրենց ծառաներն, ճորդերն, ստրուկներն, գերիններն, եւ ազաներն քրիստոնեայ գիւղացիներն ուրիշ բան չէին համարել եւ թէ ոչ իրենց սեպհական ստացուածք կամ գնով առնուած չորքոտանի կենդանիներն, ինչպէս ուղտ, ձի, էջ, եղ, կով, ոչխար եւայլն: Ուստի ազաներն թէեւ մէկ կողմանէ խիստ կը գործածէին, արմատաքի կը խուզէին ու սաստիկ կը կթէին այս երկոտանի համարուած տուարներն, սակայն միեւնոյն ատենը մասամբ իւրք անոնց վիճակին հոգ կը տանէին եւ իրենց բռնութիւններն մինչ այն աստիճան չէին մղեր որ այն խեղճ կենդանիներն սաստիկ տկարանային, նուաղէին ու կուրնչէին. բացի սակէ ազաներն այնչափ մեծ նախանձաւորութեամբ իրենց գիւղացիներն ուրիշներու հարստահարութեանց ու բռնութեանց դէմ կը պաշտպանէին որչափ որ մէկն իւր արջառն ու հօտն զայլերու եւ գիշատիչ գաղաններու դէմ կը պաշտպանէ:

Ասիկայ մեծ բան մ'էր գիւղացիներու համար:

Կէս դարէ մը ի վեր ելած Սուլթանի ինքնիշխան տիրող մահմետականաց եւ մանաւանդ ազաներուն ծանուցին որ հպատակ քրիստոնեաներն իրենց ստրուկներն, գերիններն կամ սեպհական ու գնով առնուած չորքոտանի կենդանիներն չէին, այլ մարդիկ եւ հաւասար իրենց եւ արժանի իրենց հաւասար ազատութիւն ու արտօնութիւն վայելու եւ օրինաց առջեւ եւս հաւասար համարուելու:

Այս խէթթերն կ'ըսենք եւ մանաւանդ եւրոպական տէրութեանց անդադար բանակցութիւններն սոյն հաւասարութեան սկզբունքը հրատարակելին առանց հպատակ քրիստոնեաներն այն սկզբունքը վայելու վիճակին մէջ դնելու եւ առանց զանոնք գալիք նոր նոր բռնութեանց ու հարստահարութեանց դէմ ապահովցնելու: Ազաներն, որոնք ուրիշ մահմետականներէ աւելի շատ պիտի կորսնցնէին եթէ հրատարակեալ սկզբունքն իրականութիւն դառնար, ա.ս նոր ու անոնց համար օտար վարդապետութիւնը լսելով խուլեցան եւ կարծելով որ մինչ այն ատեն սեպհական ստացուածք համարածնին շուտով ձեռքերնէն պիտի ելնէին, ուզեցին ժամ մը առաջ իրենց կրկիք վնասի տեղը կանխաւ լցնել. ուստի հոգատարութիւն ու պաշտպանութիւն մէկդի դնելով սկսեցին կարելի եղածին չափ կեղեքել քրիստոնեայ գիւղացիներն:

Խէթթեան մեռեալ տառ մնացին եւ եւրոպական տէրութեանց բա- նակցութիւններն ապարդիւն խօսքեր, գիւղացիներու վիճակը փոխա- նակ անոնց միջոցաւ աղեկնալու օր ըստ օրէ գէշցաւ :

Հայ գիւղացիներն, որ ուրիշներէ աւելի հեռու են կառավարու- թեան կեդրոնէն, որ ուրիշներէ աւելի անպաշտպան են, որ ուրիշներէ աւելի չրջապատեալ են անողոք բռնակալներէ, վայրենի քիւրտերէ, չերքէզներէ, էֆշարներէ եւ այլն, ուրիշներէ շատ եւ շատ աւելի են թակայ եղան բռնութեանց ու հարստահարութեանց :

Որչափ հայ գիւղացիներու վիճակն աւելի գէշցաւ, այնչափ աղա- ներու անյագութիւնն աւելի մեծցաւ եւ պահանջներն աւելի շատցան . որչափ տառապեալ հայ երկրագործներու հեծութեան ձայնն աւելի բարձրացաւ եւ անլուր անօրէնութեանց դէմ բարձած բողոքներն աւե- լի շատցան եւ անպատասխան մնացին անհող ու ապիկար կառավարու- թեանց կողմանէ, այնչափ աղաներու զայրոյթը սաստկացաւ, դառնա- ցաւ եւ անագորոյն քիւրտերու, չերքէզներու եւ հազար ու մէկ տեսակ հարստահարիչներու, բռնաւորներու եւ աւազակներու համարձակու- թիւնը մեծցաւ : Աղեղեքումներն յայտնի աւարառութեանց, կողոպտ- մանց, նախատանայ, բռնաբարութեանց, կուսապղծութեանց, գերե- վարութեանց ու սպանութեանց փոխուեցան : Հայ գիւղացիներն յետին աղքատութեան հասած ու վերջին թշուառութեան իջած սկսան հեռ- ըզհետէ թողուլ երկրագործութիւնն ու հեռաւոր քաղաքներ ու երկիր- ներ կամովին տարագրել : Այսպէս երկրագործութիւնը Հայոց մէջ մե- ծապէս պակսեցաւ 'ի վնաս Ազգին եւ 'ի վնաս Տէրութեանը :

Յոյներն, իրենց աշխարհագրական դրից եւ ուրիշ բաներու պատ- ճառաւ, Հայու կրած թշուառութեանցն ամենեւին ենթակայ չեղան ու- րով եւ ամբողջապէս պահեցին ինչ որ ունէին երկրագործութենէ :

Պուլղարներն եւս, որչափ ալ աղաղակնին ու բողոքնին բարձրա- ցնեն իրենց բռնակալաց դէմ, հայ գիւղացիներու կրածի մէկ քառորդն, ո՛չ մէկ տասներորդն անգամ ոչ կրեր են եւ ոչ ալ կը կրեն : Ըսածնուս անհերքելի ապացոյց են Պուլղար գիւղացիներու ընդհանուր առմամբ հայ գիւղացիներէն աւելի ճոխ կամ քիչ աղքատ լինելնին եւ Հայաս- տանի մէջ աւերակ գիւղերու օրէ օր շատնալն :

Եւրոպայ ֆոյն Բարձր Կանչուներո՞ւ, Կացուներո՞ւ յոյն կը լտէ, ալ էի- րով հեծեծողներունը շէրտը լտէ :

Արհեստք.—Օսմանցիք իրենց տէրութիւնը հաստատելէն ի վեր ար- հեստներն քրիստոնեայ հպատակաց ու բուն Օսմանցի չեղողներուն թո- դեր են իբր անարժան պարապում մը յաղթական ու իշխող ազգի մը : Ուստի ամէն ազգ թէ քրիստոնեայ եւ թէ ոչ Օսմանցի անոնցմէ իր ա- ռանձին բաժինն ունէր : Սակայն կրնայ ըսուիլ որ համեմատաբար Հա- յերն ուրիշներէ աւելի մեծ մաս մ'ունէին :

Եւրոպական վաճառաց ու սովորութեանց Տաճկաստան մուտք դրտ- նելովը Տաճկաստանի արհեստներն ինկան որով եւ արհեստաւորք առ հասարակ մեծապէս վնասուեցան եւ հետզհետէ պակսեցան, եւ քանի որ Հայերն ուրիշներէ աւելի մեծ մաս մ'ունէին այս ճիւղին մէջ, ուստի եւ Հայերն համեմատաբար ուրիշներէ աւելի մեծ վնաս կրեցին : Այսու- ամենայնիւ այս ճիւղին մէջ ըրած կորուստնիս այնչափ մեծ ու բողոք- վին անդարմանելի չէ . եթէ ուղենք կրնանք դարձեալ առաջուան ու- նեցածնիս ձեռք բերել . միայն ասոր համար արհեստից վարժարաննե- րու պէտք ունինք :

Վաճառականութիւն.—Տաճկաստանի վաճառականութիւնը մեծաւ մասամբ Յունաց ու Հայոց ձեռքն էր, միայն թէ Յոյներն այս արուես- տին մէջ անդալի կերպով Հայերէն աւելի յառաջադէմ էին . քանի որ Պուլղարներն փերեղակութեան աստիճանին անգամ չէին հասեր : Սա- կայն Հայերն Յունաց վաճառականական աննշան առաւելութեանը դէմ կը ժառանգէին Տաճկաստանի գրեթէ ընդհանուր սեղանաւորութիւնը, վաճառականութեան այս երկրորդ տեսակը : Տէրութեան ու իշխանաց եկամտի մեծագոյն մասը Հայոց ձեռքէն կ'անցնէր . առաւելութիւն մը որով Հայերն մեծապէս կը գերազանցէին զՅոյներն եւ Տաճկաստանի ու- բիշ բոլոր հպատակ եւ ոչ հպատակ ազգերն . որով անբաւ հարստու- թիւն կը զիգէին եւ որու մէջ անընկեր ու աննախանձորդ էին :

Տաճկական վարչութեան ձեւը փոխուելովն եւ տաճիկ փաշաներուն Հայոց չափ թուաբան դառնալովն ու ալ հայ սեղանաւորներուն կարօ- տութիւն չունենալովը, Հայոց հարստութեան այս մէկ գլխաւոր աղ- բիւրն եւս բողոքովին չորցաւ :

Եւրոպական վաճառաց հեռ Տաճկաստան մտան եւս եւրոպացի վաճառականներ եւ սկսան հետզհետէ երկրի վաճառականութիւնը ձեռք անցունել :

Պուլղարներն վաճառականութենէ գրեթէ մաս չունենալով չէին կրնար մեծ վնաս կրել այս նորեկներէն եւ բաղադատմամբ անցելոյն գու- ցէ յառաջադիմութեան սկիզբ մ'ալ սկսեր են վերջին ատեններս ընել այս արուեստին մէջ :

Յոյներն որ վաճառականութեան մէջ Հայոց վրայ աննշան առա-ւելութիւն մը ունէին, ոչ միայն այն առաւելութիւնը պահեցին այլ եւ այն արուեստին մէջ երեւելի յառաջադիմութիւն մ'ալ ըրին :

Իսկ Հայերն միայն եղան կորսնցընողներն, այնպէս որ Յունաց ու Հայոց միջի եղած արդի տարբերութիւնը վաճառականութեան նկատ-մամբ ահագին է :

Հայերն դարերէ 'ի վեր ճանչուած են իբր վաճառականական ազգ, եւ յիշուի այս արուեստին համար ունեցած յարմարութիւննին մեծ է եւ ուրիշ ամէնը կը գերազանցէ : Այս կը հաստատեն Եւրոպացուոց վը-կայութիւններն եւ Հայոց այլ եւ այլ ու հեռաւոր երկիրներու մէջ խիստ

հին ատեններէ ի վեր հաստատած վաճառականական տներն ու գաղթականութիւններն :

Բայց արդեօք ի՞նչ է պատճառն որ այս ամէն յարմարութեամբն եւս Հայերն ուրիշներուն բաղդատմամբ դարէ մը 'ի վեր սկսեր են յետադիմել եւ կը յետադիմեն տակաւին եւս այս արուեստին մէջ :

Վաճառականութիւնը հին ատեններն արուեստ մ'էր գրեթէ բացարձակապէս գործնական : Անոր տեսական մասը չնչին բան մ'էր եւ մասնաւոր ուսման չէր կարօտեր : Հայերն ուրիշներէ աւելի համբերատար , աւելի յարատեւող ու աւելի խնայող լինելով բաղմամբայ աշխատութեամբ ու զուշաւոր գործառնութեամբ գործնականին մէջ լաւ վարժուելով արուեստին կատարեալ հմտութիւն կը ստանային , որով եւ ուրիշներն կը գերազանցէին անոր մէջ : Սակայն այժմ վաճառականութիւնն ուրիշ արուեստներու պէս մեծ փոփոխութիւն մը կրեր է , անոր տեսական մասն աճեր գործնականին հաւասար կարեւորութիւն ստացեր է :

Վաճառականական արուեստի տեսական մասը կը բաղկանայ ըստ կարգին , երբեմն խիստ դիւրին ու պարզ համարողական գործողութիւններէ եւ շատ անգամ խիստ դժուարին ու բաղադրեալ հաշիւներէ եւ անձանօթ համարողորիչ ու ենթադրական թիւ պարունակող համարողութիւններէ , որոց արժէքն ու քանակութիւնն ուստի եւ արտադրութիւններն ու արդիւնքներն հողմացոյցէն աւելի ենթակայ են քաղաքականութեան հովի եւ զանազան դէպքերու ու իրողութեանց ազդեցութեանը : Ո՛վ որ այս հաշիւներն փութով ու ճշգրտման կարեւնայ ընել , անտարակուսաբար ան ուրիշներէ աւելի կրնայ յաջողիլ վաճառականութեան մէջ : Սակայն այս հաշիւներն ճշգրտման ընելու կամ գէթ գտնելիք արտադրութիւններէն ու արդիւնքներէն շատ հեռու չըլլալու համար , մէկը պէտք է կատարեալ ու ընդարձակ տեղեկութիւններ ստացած լինի այն ամէն բաներու վրայ որք վաճառականութեան վրայ ազդեցութիւն ըրեր են ու կ'ընեն : Այս տեսակ տեղեկութեանց ստացումն առանց նախնական ու մասնաւոր դաստիարակութեան չըլլանիր : Հայերն վաճառականական արուեստի տեսական մասը բանի տեղ չգննելով եւ անոր ստացման պարապիլն անօգուտ համարելով կը շարունակեն այն արուեստը հին դրութեամբ եւ կուզեն անոր մէջ յառաջանալ միայն գործնականով : Հետեւապէս քանի որ վաճառականութիւնը չափաւոր ու զրամագլուխը փոքրիկ է եւ գործառնութիւններն միայն քաղաքի մը եւ մասնաւոր տեսակի մը սահմանափակեալ են , որոնց վրայ քաղաքական փոփոխութիւններն եւ ուրիշ դէպքերն ազդեցութիւն չեն ըներ եւ որոնք աւելի գործնական հմտութեան քան թէ տեսականի կը կարօտին , այն ատեն Հայերն իրենց ընական եղած յարմարութեամբը շատ անգամ կը յաջողին : Դսկ երբ վաճառականութիւնն ըն-

դարձակ է զրամագլուխը մեծ , գործառնութիւններն շատ մը քաղաքներու ու հեռաւոր երկիրներու տարածուած են եւ զանազան տեսակներու կը վերաբերին . որոնց վրայ քաղաքականութիւնն եւ ուրիշ դէպքերն ու իրողութիւններն մեծ ազդեցութիւն ունին , այն ատեն Հայերն շատ անգամ կը վրիպին ու չեն յաջողիր :

Եթէ չիտթանք դաստիարակութիւնը մեզ օգնութեան կանչելով տեսական մասն եւս աւելցնել գործնականին պիտի հետզհետէ պարտաւորինք բարձրագոյն վաճառականութիւնն ուրիշներու թողուլ ու ստորնագունի իջնալ եւ թերեւս ի վերջոյ փերեզակութիւնը միայն մեզ բաժին ընդունել :

Դաստիարակութիւն . — Ահա ամէն տեսակ գործողութեանց մէջ յառաջադիմութիւն ընելու միջոցն , առաջնորդն , ուղղիչն , մղթն , եւ ճշդիւ անա այն բանն որու մէջ աւելի զգալի կերպով ետ մնացեր ենք :

Դար մը առաջ Յոյներն ու Հայերն դաստիարակութեան նկատմամբ գրեթէ միեւնոյն դիրքն ունէին , մինչդեռ Պուլղարներն տակաւին Յունաց կղերական իշխանութեան ենթակայ ոչ վարժարան ունէին ոչ վարժապետ ոչ գրականութիւն եւ ոչ ալ գիրք :

Յոյներն թողին զմեզ անցան , անցան եւ շատ առաջ անցան դաստիարակութեան մէջ , այնպէս որ մեր արդի ունեցած վարժարաններու ոչ թիւն , ոչ աստիճանն եւ ոչ ալ վիճակը կարելի է անոնց ունեցածինին հետ բաղդատել , մեր մէջ ձեւարան կոչուածներն Յունաց վարժարաններու աստիճանին անգամ չեն հասեր (1) :

Պուլղարներն , այս անգիր ժողովուրդն , որ գուցէ մինչ դար մը առաջ իրենց լեզուով հեգարան մը անգամ չունէին եւ մեզ հետ ոչ մէկ կողմանէ բաղդատութեան չէին կրնար գրուիլ , այսօր ընդհանուր առմամբ դաստիարակութեան մէջ կամ մեզմէ արդէն անցեր են կամ անցնելու վրայ են : Մենք քանի որ այս կենսական ճիւղին մէջ իբր կրիայ յամրութեամբ քայլերնիս կը փոխենք , եւ հակառակ առակին շատ անգամ մեծ կանգ մը կ'առնունք եւ երբեմն ալ ետ կ'երթանք , ուրիշներն անդադար ու արագ արագ կը քայլեն եւ յաճախ անգամ ալ մեծ վազքեր կ'առնուն :

Այս բաղդատութիւններն քաջալերիչ չեն եւ ոչ ալ ախորժիկ մեր

(1) Օրինակի համար Եղովկոյ ձեւարանը 1867 ին մեր տեսած ատենն ըստ ասուբեան վարժապետին 300 ի ջափ աշակերտ կը պարունակէր որոց մէջ ամենէն յառաջադիմներն բոլով 20 քերականօթիւնը (գրաբար) նոր սկսեր էին եւ բոլոր մնացեալներն Նարեկի , Աւետարանի , Սաղմոսի ու Հեգարանի լոկ ընթերցանութեան վարժութեամբ կը պարապէին . . .

անձնասիրութեանը , բայց իրականութիւններ են : Շուտ ուչ պիտի պարտաւորուինք այս իրականութիւններն ճանչելու եւ խոստովանելու որ մեզ հաւասար եղողներն զմեզ թողին անցան եւ մեզմէ վար ու ետ եղողներն յառաջացան մեզ հասան :

Մենք անհող քնացեր ենք եւ ազգայնութեան նաւակն անդէկ ու աննաւուղիղ հոսանաց ողորմութեանը թողեր ենք : Նոչ կրնայ լինիլ այսպիսի նաւակի մը ճակատագիրն եթէ ոչ անկ յորձանաց մէջ ինչպէս անդնդասոյղ լինիլ կամ ծածկեալ խութքերու զարնուիլ ջախջախուիլ :

Վասնզն միայն զմեզ պիտի արթնցնէ , բայց արթնցած ատեն նիս կործանման վիճին մօտեցած պիտի գտնենք զմեզ , ուրկէ ազատիչն խիստ դժուարին կամ անկարելի պիտի լինի :

Բաւ է որչափ նիրհեցանք , ատեն է որ արթնանք . արթնանք եթէ չենք ուզեր որ այս նիրհը մահուան քունի փոխուի . սթափինք մեր զարաւոր թմրութեանէն եթէ չենք ուզեր որ այս թմրութիւնն անդամալուծութեան փոխուի : Մէկզի դնենք այս անտարբերութիւնը մեր ապագայի նկատմամբ , քննենք մեր արդի վիճակն ուշի ուշով , ջանանք ճգնինք մեր ցաւերուն ճարն գտնել , մեր վէրքերուն սպեղանի դնել քանի որ այս վէրքերն քաղցկեղի չեն փոխուեր :

Եթէ այսօր որ տակաւին մեր հիւանդութիւնը չէ ծանրացեր , անոր զեղ չենք մատուցաներ , անյուսութեան վիճակին հասած ատենը միթէ պիտի կարենանք բուժել զան : Այսօր , կ'ըսենք , քանի որ մեր յառաջադիմութեան նկատմամբ տակաւին օդը խաղաղ , երկինք պարզ ու հորիզոնն անսահման են , եւ մեր անդամներն ազատ ու արձակ թողուեր են , չենք աշխատիր յառաջանալու , մի գուցէ վաղը գայ օր մը , օր մը մրրկալից օդով , մառախլապատ երկնքով ու խաւարի պատնէհներով սահմանափակեալ հորիզոնով եւ մեր գործող անդամներն շղթաներով պրկուին , այնպիսի օրով միթէ հնար պիտի լինի աշխատիլ ու յառաջադիմել : — Խաւարի պատնէհներն անանցանելի խոչեր եւ մեր շղթաներն անխզելի կապեր պիտի դառնան մեզ համար : Այն ատեն մենք պիտի աւազենք ձեռքէ թողած յառաջադիմելու պատենութիւններն , իսկ մեր յաջորդներն ոչ միայն պիտի պախարակեն մեր թուլութիւնը , մեր անհողութիւնը , մեր կարճատեսութիւնն , այլ եւ զմեզ պարտազանց դատելով ամբողջ ապագայի իրաւացի յանդիմանութեանն ու արհամարհանացն ենթակայ թողուն :

Ո՛վ քաղաքացի մեծատուն , հարստութեանցդ , պաշտօնիդ , համբաւիդ փրայ մի վտանահար եւ անոնցմով մի պարծիր , ամէնքը քեզ հետ կը կորնչին եթէ անոնց հետ ճշմարիտ դաստիարակութիւնն եւս չհրիտակես քու որդւոցդ : Ո՛վ քաղաքացի աղքատ , այդ չքաւորութիւնդ որմէ դու կը տառապիս , դաւակացդ կը հրիտակես եթէ չջանաս աղքատութեան փարատիչ դեղը , դաստիարակութիւնը , դաւակացդ

քաժին թողուլ : Խօսքս ի մասնաւորի քեզ կ'ուղղեմ ո՛վ Հայաստանի գիւղացի , որ հայրենասիրութեամբ ամէն թշուառութեան տանելով քու հայրենի հողին կը յարիս եւ գաղթականութեամբ յօտար ափունս չես փնտռեր անձիլ դիւրութիւնը , քեզ հայրենասիրիդ հարուստ կամ բարձրաստիճան քաղաքացին հանդիստ տանը մէջէն եւ փափուկ բազմոցի վրայէն ձրիաբար ազգասիրութիւն կը քարոզէ առանց ցաւերուդ ամենափոքր զեղ մը մատուցանելու , լաւ իմացիր քեզ աղատութիւն չկայ , քանի որ կրթութիւնը դեռ ընտակալներէդ գերագոյն չգարձնէ : Մէկէ մը մի յուսար օգնութիւն ու փրկութիւն բաց ի Աստուծմէ ու դաստիարակութենէ : Այն Թուրքն , այն Էֆշարն , այն Քիւրտն , այն Չէրքէզն , այն վայրենին որ քու աղքատութեանդ չնայելով ամբողջ տարուան արիւնքիրան աշխատութեամբ ժողվածդ մէկ ժամուան մէջ ձեռքէդ կը խլէ , քու մատաղ դաւակացդ չգթալով դեռ կը սպաննէ , քու կնոջդ պատուին չննայելով զան կ'արատէ , քու անմեղ աղջկանցդ հեծկտանացը չարգահատելով զանոնք կը սղծէ , այն անագորոյնը կ'ըսեմ որ այդպիսի խժժութիւններ կը գործէ , Աստուծմէ չվախնար , Ղուբանը չճանչեր , բողոքներդ իրեն զբօսանք կը համարէ , Պատրիարքարանի Խօրհրօնէն կ'արհամարհէ եւ անհող կառավարութեան հրամանագրերն բանի տեղ չդնէր , քանզի քաջ գիտէ որ բողոքներն անուր , Խօրհրօնէն անսպասախան եւ հազուական հրամանագրերն անդործ պիտի մնան գործադիր դատաւոր չլինելուն եւ կամ լաւ եւս դատաւորն իրեն գործակից , աջակից , մեղսակից լինելուն պատճառաւ :

Հայու եւ մարդկութեան սիրտ կրողը կը ցաւի քու վիճակիդ վերայ , քեզ կը կարեկցի , քու տառապանաց պատմութիւնն ու հեծեծանքը լսած ատենն աղիքներն կը դաւարին եւ անկողինն մէջ կուլայ : Ֆրկութեանդ ուրիշ ճար չտեսներ եթէ ոչ ապստամբութիւնն : Այո , ամէնքս հարուստ ու աղքատ , քաղաքացի ու դիւղացի , ամէնքս իբր մի անձ , մի հողի , մի վշտակիր ապստամբինք , աղատութեան դրօշն բարձրացնենք , սպառազինուինք ոտքէ մինչ ի գլուխ , մարտի դաշտն իջնանք եւ երդուինք կենդանի յետս չդառնալ մինչ յաղթութիւն չըստանանք :

Ապստամբինք որո՞ւ դէմ .
Մեզ հարստահարողաց դէմ .
Ո՛չ — Եթէ ասոնց մէկ տեսակը վռնտենք միւս տեսակն անոր տեղը կ'անցնի . Թուրքը վռնտենք Քիւրտը կուգայ , Քիւրտը վռնտենք՝ Արապը կուգայ , Չէրքէզը կուգայ . Հայութեան հօտը գիշատող դայը վռնտենք՝ արջը կուգայ , ուրիշ գազան մը կուգայ :
Ապստամբինք Գէորգի ղէմ , անա՛ մեր ամենէն անողոք , ամենէն անագորոյն թշնամին :
Վարժարանի սրահը լինի մեր մարտադաշտը , գրքի էջերն մեր դը-

բօշակը, թուղթն ու գրիչը մեր ղէնքը, դաստիարակութիւնը մեր նշանակն ու նշանաբառն ։

Ծախենք մեր միակ շապիկն եւ մեր զաւակաց համար գիրք թուղթ ու գրիչ գնենք ։

Չկանչէնք ազատութիւն, կանչէնք դաստիարակութիւն ։

Խախուտ է, անտեսական է, անհնար է ազատութիւն առանց դաստիարակութեան ։

Ազատութիւնը կը ծագի զօրութենէ ։ Չօրութիւնը բաղկացնող նիւթերն յառաջադիմութեան տեսակներն են ։ Չկայ իրական յառաջադիմութիւն, սուտ է, առանց ճշմարիտ դաստիարակութեան ։

Դաստիարակութիւնը միայն կրնայ անվրիպաբար առաջնորդել ղէս ի յառաջադիմութիւն ։

Դաստիարակութիւնը զօրութիւն ստանալու ամենառաջին միջոցըն է ։

Վերջացնենք գրածնիս ու ըսելիքնիս մէկ խօսքով — Դաստիարակութիւնը լծակ մ'է, մէկը թէ անհատ մը լինի այն եւ թէ ամբողջ ազգ մը, ինչ համեմատութեամբ որ այս լծակը ժառանգէ, նոյն համեմատութեամբ իր բնածին անմշակ զօրութիւնը կը բազմապատկէ եւ նոյն համեմատութեամբ եւս իր իրաւունքն, իր անկախութիւնն, իր ազատութիւնը կ'ապահովցնէ ։



Վ. Ե. Բ. Զ.



2013

Հայաստանի Ազգային գրադարան

56621
17939



NL0438825

